ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(**78**-րդ տարի) **Թիվ-1** (1683) Հունվար 2024

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Կհաջողվի՞ սատանայական շրջանից դուրս բերել երկիրը (էջ 1-2)

2- Քաղաքական

Լուսինե Մխիթարյան
Ազգային արդիականացումն ու զոհի հոգեբանությունից ազատվելու հրամայականը (էջ 3-5)

3- Հայ կյանք

Անի Մելքոնյան
Ազգ-բանակ հայեցակարգից մինչև կեղծ խաղաղության օրակարգ ու «թավշյա» բանակ (էջ 6-8)

4- Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Ո՞րն է աղետների արմատը (էջ 9-11)

5- Տարածաշրջանային

Սարգիս Սարգսյան
Հայաստանը նոր աշխարհակարգի ձևավորման պայմաններում (էջ 12-23)

6- Աշխարհաքաղաքական

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
ՀՀ-ԱՄՆ փոխայցերը 2023 թ. ընթացքում (էջ 24-26)

7- Իրավաքաղաքական

Արփի Աբրահամյան
Ռուս-չինական հարաբերությունները նոր աշխարհակարգում (էջ 27-31)

8- Պատմության լուսարձակ

Վանիկ Վիրաբյան
Տիգրան Դևոյանցը Առաջին Հանրապետության անվտանգության ապահովման դիրքերում: Պայքար ադրբեջանա-թուրքական նկրտումների դեմ (մաս 2) (էջ 32-43)

9- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Դժգոհությունը առաքինություն է, բայց ոչ միշտ (էջ 44)

Կհաջողվի՞ սատանայական շրջանից դուրս բերել երկիրը

Եթե փորձ արվի արժևորելու Փաշինյանի գլխավորությամբ ներկա իշխանության գրեթե վեցամյա գործունեությունը, ապա այլ գնահատական չի կարող լինել, քան ամբողջական ձախողումը: Արցախի կորուստն ու Հայաստանի ներկա քաղաքական վիճակը ասվածի անվիճելի ապացույցն են: Խոսքը, սակայն, միայն արտաքին քաղաքականությանը չի վերաբերում, այլև ներազգային, տնտեսական և այլ ոլորտներին:

Ի՞նչ իրավիճակում ենք ներազգային առումով: Հայաստանում հասարակությունը հուսալքված է այն չափով, որ չի հավատում, թե ունակ է իր ուժերով ինչոր բան փոխելու սեփական ճակատագրի հարցում: Պառակտված հանրության տարբեր ճամբարները իրար դեմ տրամադրված են թերևս ավելի սևեռուն և խոր անհանդուրժողությամբ, քան թշնամու, որը նստած է երկրի ներսում և ի լուր աշխարհի բարձրաձայնում է իր անհագ հավակնությունների մասին, հայտարարում է, թե Հայաստանը՝ մայրաքաղաքով հանդերձ, ադրբեջանական տարածք է: Գիտական ու արժեքային բոլոր չափանիշները խախտած իշխանությունների քաղաքականությունը անընդունելի է գիտական-մտավորական խավերի համար: Անհանդուրժողությունն ու ագրեսիվ, սադրիչ պահվածքը հայոց ազգային եկեղեցու հանդեպ, Արցախը կործանման հասցնելն ու Հայաստանը կործանման ճամփով տանելը պատճառ են դարձել, որ մայր եկեղեցին բարձրաձայնի ազգային-հոգևոր, մշակութային և պատմական արժեքներին պատերազմ հայտարարած իշխանության նկատմամբ իր սկզբունքային հակադրության մասին:

Կարելի է հետևել տարբեր հարթակներում իշխանավորների և նրանց հետևորդների խոսքին՝ համոզվելու համար Արցախի և արցախցիների նկատմամբ նրանց ատելության մեջ: Հայ ժողովրդին աննախադեպ ողբերգություններ բերած իշխանության համար Արցախն ու նրա հայ բնակչությունը եղել և մնում են բեռ, որից նրանք փորձեցին ազատվել և շարունակում են ազատվելու փորձեր անել ադրբեջանցիների միջոցով: Հայաստանում սեփական ազգային ինքնագիտակցությունն ու պահանջները դրսևորելու արցախահայության բնական իրավունքը բախվում է իշխանության կատաղի հակաքարոզչությանը, շանտաժին, բացահայտ եւ ոչ բացահայտ սպառնալիքին, արգելքներին և իշխանությունների տիրապետած այլ լծակների:

Իշխանությունը հետևողականորեն իրականացնում է երկրով մեկ և վերևից ներքև իշխանական-վարչական ողջ համակարգի կուսակցականացումը, իսկ այս համակարգում օրինական ճանապարհով տեղ գրավողները ենթարկվում են դատական և այլ բնույթի ճնշումների ու հալածանքների մինչև կամավորապես կամ պետական լծակների միջոցով համակարգից դուրս կմղվեն: Այս պրակտիկան կիրառվում

է ոչ միայն քաղաքական-վարչական համակարգում, այլև գիտական, կրթական և կենսագործունեության մնացած բոլոր բնագավառներում: Պաշտոններից ազատվում են գիտական, կրթական, մշակութային և այլ ոլորտների աշխատողները՝ տնօրեններից մինչև ամենակրտսեր վարչական աշխատողները: Ըստ էության, ողջ ժողովուրդը՝ բացառությամբ սեփական թայֆայի, իշխանության համար դիտվում է որպես վտանգ և պոտենցիալ ընդդիմություն: Ինչ վերաբերում է երկրի իրական, քաղաքական ընդդիմությանը, ապա դատական և այլ կարգի հետապնդումները՝ քրեական շինծու գործերի հարուցումն ու տարբեր ժամանակահատվածներով բանտարկությունները, Նիկոլ Փաշինյանի ռեժիմի գլխավոր քաղաքական գործիքն են ներքաղաքական փոխհարաբերությունների ասպարեզում: Իհարկե, ընդդիմության ազատ գործունեությունը խափանելու իշխանության գործիքները շատ ավելի բազմազան են և ընդգրկում են շանտաժի, կաշառքի, մարդկանց պաշտոններով և այլ միջոցներով գնելու, դրանով ընդդիմության ուժերին թուլացնելու, նրա հնարավորությունները սահմանափակելու մեթոդները:

Իշխանության վերաբերմունքը Սփյուռքի նկատմամբ ուղղակիորեն հետևյալը եղավ և է. «Ովքեր կպարեն դուդուկիս տակ, նրանց էլ կճանաչեմ որպես Սփյուռք և Սփյուռքի ներկայացուցիչներ»: Բնականաբար, այս քաղաքականությունը դարձավ հայրենիքի և Սփյուռքի միջև կապերի և հարաբերությունների խզման պատճառ: Ավելին, իր հակազգային ու բռի գործելակերպը շարունակելով՝ Հայաստանի իշխանական-վարչական ամբողջական համակարգը տնօրինող անձը հանդգնեց «պատժել» նաև սփյուռքահայերին: Այլ կերպ չի կարելի կոչել հայրենիքով ապրող, այդ հայրենիքի ճակատագրին կյանքը նվիրած մարդկանց անցանկալի անձ հայտարարելն ու նրանց առաջ հայրենիքի դռները փակելը: Ասվածի վառ օրինակն է Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի համանախագահ և ՀՅԴ բյուրոյի անդամ Մուրադ

Փափազյանի պարագան: Մուրադ Փափազյանը, սակայն, չհաշտվեց այս անօրինականության հետ և հարցը վիճարկեց հենց Հայաստանի իրավական համակարգում: Ամիսներ շարունակ, թե՛ երկրի Ազգային անվտանգության ծառայությունը և թե՛ այլ մարմինները բերանները ջուր առած՝ պապանձվեցին՝ չկարողանալով որևէ պատճառ, իսկ ավելի ճիշտ՝ պատճառաբանություն ներկայացնել, թե ինչո՞ւ և ի՞նչ իրավունքով են հայ մարդու առջև փակվում հայրենիքի դռները: Ավելին, ակնհայտ դարձավ, որ Սփյուռքի տարբեր համայնքներում իշխանության համար անցանկալիների ցուցակներ էին կազմվել: Դատական քաշքշուկներից հետո նիկոլական խուժանապետության ներքո գործող դատարանն անգամ քաջություն գտավ իր մեջ՝ վերացնելու այս խայտառակ ու անօրինական արգելքը: Իշխանական համակարգի մանկլավիկներն ու սազանդարները շարունակում են լռել, կարծես ոչինչ էլ չի պատահել: Մնաց, սակայն, տեղի ունեցածի բարոյական, քաղաքական հետևանքը՝ երկրի, հայրենի և Սփյուռքի հայության, ինչպես և օտարների աչքին Հայաստանի, որպես պետության, հեղինակազրկումը: Հետևանքը եղավ նաև սփյուռքահայ գործչի և գործիչների ծանր ապրումները, հայրենիք գալու և հայրենիքին օգտակար լինելու հնարավորության կասեցումը: Բայց մենք իրավունք ունենք հարցնելու՝ ո՞վ է պատասխան տալու տեղի ունեցած անօրինականության համար: Ո՞վ է պատասխան տալու այն բոլոր զինվորական, քաղաքական, վարչական և այլ ոլորտների գործիչների համար, որոնց բարոյական վարկին և ֆիզիկական կյանքին վնաս հասցնելով՝ ամիսներ և նույնիսկ տարիներ շարունակ բանտերում փակեցին ու նախապես հայտարարված մեղադրանքները չհաստատելով՝ բաց թողեցին: Ո՞վ է պատասխան տալու բժիշկ հասարակական գործչի համար, որը չդիմանալով իրավական-դատական հետապնդումներին ու քաշքշուկներին՝ մահացավ դատարանի դահլիճում: Ո՞վ է պատասխան տալու պատերազմի մասնակից հայտնի գեներալին սայլակի վրա ամիսներ շարունակ դատարանի դահլիճներ բերելու ու պարբերաբար բանտարկելու համար մինչև ուժերի սպառումն ու մահը: Ո՞վ է պատասխան տալու երկրի վարչապետի ծառայողական մեքենայի սպանած հղի կնոջ համար, ո՞վ է պատասխան տալու հակահրդեհային և հակասանիտարական խայտառակ պայմաններում փակված զինվորների ողջ-ողջ այրվելու համար, ո՞վ է պատասխան տալու զինվորական ծառայության ընթացքում անհեթեթ պատճառներով մահացած ու սպանված զինվորների և վերջապես կանխավ պարտված, երկու պատերազմներում նահատակված հազարավոր անմեղ զոհերի համար: Կարծում ենք՝ բոլորի համար էլ պարզ է, թե ով է ամենից առաջ պատասխան տալու:

Հայաստանի գործող իշխանությունն՝ իր առաջնորդի գլխավորությամբ, պատերազմ է հայտարարել ոչ միայն ապրող հայությանը, այլև նախորդող սերունդներին, ազգային ինքնությանը, հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին ու անգամ... երազանքներին: Նիկոլ Փաշինյանի համար չկա հայ ժողովրդի պատմություն, այլ կա միայն Հայաստանի պատմություն, հայրենիքը Հայաստանի Հանրապետության այն հատվածն է, որտեղ ինքը դեռ կարող է պտտվել: Թեև վայ ղեկավարի համար ներկա պետությունը նույնպես կորցրել է արժեքը, նա պատրաստվում է ոչ միայն պետության հիմքը՝ Սահմանադրությունը, փոխել, այլև առհասարակ հրաժարվել այս պետությունից և ստեղծել չորրորդ հանրապետություն: Եթե երբևէ ասվեր, թե Հայաստանին նման ապագա է սպասվում, պատմողին խելագարի տեղ կդնեին: Խելագա՞ր է, թե՛ խելագար չէ պետության գլխին նման խաղեր մոգոնողը: Գուցե նա մի օր, իսկապես, խելագար ձևանա պատասխանատվությունից խուսափելու համար, սակայն բոլշևիկորեն երկիրը քանդելու և նրա տեղը նորը շինելու խելացնորությունը ավելի քան լուրջ սպառնալիք է Հայաստանի համար: Իհարկե, շատերը անմիջապես հասկացան, որ այս ամենը թուրք-ադրբեջանական պահանջ է, ինչը պատրաստվում են Հայաստանի ղեկավարները կատարել իշխանությունը պահպանելու համար արտաքին երաշխիքներ ստանալու նպատակով: Բայց, հավանաբար, միակ պատճառը սա չէ: Նիկոլ Փաշինյանը բազմիցս ոտնահարելով պետության հռչակագիրն ու Սահմանադրությունը՝ պետական կարգի դեմ թույլ է տվել ոտնձգություններ, եթե չասենք, դավաճանություն: Նոր Սահմանադրությունն ու նոր հռչակվող հանրապետությունը թերևս մոռացնել տան նախկինի մասին, դատարկ նոր էջ բացելով նաև երրորդ հանրապետությունը կործանողի կենսագրության մեջ, և գուցե նախկին ամեն ինչի՝ պետության, հայրենիքի, պատմության ու մշակույթի ու անգամ ազգային ինքնագիտակցության հարցում բացվի այդ դատարկ էջը: Ուզում ենք կրկնել այն միտքը, որը Փաշինյանի կառավարման առաջին տարիներին գրել է «Դրօշակը»: Նիկոլ Փաշինյանը գնում է այն մոլագարի ճանապարհով, որը մեկ անգամ ոճիր գործելուց հետո ստիպված է անընդհատ նոր ոճիրներ գործել նախորդների համար պատասխանատվությունից խուսափելու նպատակով: Կհաջողվի՞ արդյոք դա նրան: Կարծում ենք՝ սա չէ գլխավորը, այլ այն, թե կհաջողվի՞ սատանայական շրջանից դուրս բերել և փրկել երկիրը կործանումից: Սա մի հարց է, որի լուծման համար պատասխանատու են բոլորը, իսկ ավելի շատ պատասխանատու են նրանք, ովքեր հավակնում են նման պատասխանատվության:

Ազգային արդիականացումն ու զոհի հոգեբանությունից ազատվելու հրամայականը

Լուսինե Մխիթարյան
Միջազգայնագետ, լրագրող

Անկախության հռչակագրով դրվեցին Հայաստանի Երրորդ Հանրապետության հիմքերը: Դա այն տեսլականն էր, որի փաստացի կենսագործումն իրականություն դարձավ հետագա տարիների ընթացքում, սակայն Արցախի վերամիավորման գործընթացը կիսատ մնաց, ինչպես քաղաքական հարթությունում, այնպես էլ լայն հասարակության գիտակցության շերտերում:

2020 թ. նոյեմների 9-ին սկսված Արցախի բռնազավթումն իր վտանգավոր կիզակետին հասավ 2023 թ. սեպտեմբերի 19-ին և դրան հաջորդող օրերի ընթացքում, երբ փաստացի ամբողջությամբ հայաթափվեց Արցախը: Եթե նոյեմբերի 9-ից հետո կարելի էր նվազ կորուստներով կասեցնել վտանգավոր զարգացումները, ապա անցած տարվա սեպտեմբերյան զարգացումները չափազանց ծանր, զրոյականից ցածր հնարավորություններ թողեցին առնվազն այս փուլում դրական լուծում ապահովելու համար:

Այսօր Հայաստանի Հանրապետության փաստացի իշխանության վարած քաղաքականության հետևանքով երկիրը դարձել է քաղաքական մանրադրամ մեր տարածաշրջանում բախվող աշխարհաքաղաքական ուժերի շահերը բավարարելու համար: «Խաղաղության օրակարգի» իրագործումը, որը վերջին շրջանում վերափոխվեց «խաղաղության խաչմերուկի», միջազգային դերակատարների կողմից ընկալվում է որպես քաղաքական կամքի տիրույթում լուծում պահանջող ծրագիր: Դրանով փաստորեն մերժվում է հայերի ինքնորոշման իրավունքի իրացումը, ինչպես նաև Ադրբեջանի կողմից Հայաստանի և Արցախի Հանրապետությունների, հայ ժողովրդի դեմ գործած հանցագործությունների համար նախատեսվող պատասխանատվության ենթարկումը, որով խրախուսվում է նման դեպքերի տարածումն այլ տարածաշրջանների, պետությունների ու ազգերի նկատմամբ ևս: Հաշվի առնելով ամբողջ աշխարհում արդեն իսկ գոյություն ունեցող հակամարտությունների սրացումները՝ նախադեպը խիստ վտանգավոր զարգացումների առիթ է դառնում:

«Խաղաղության օրակարգի» սին լինելու հանգամանքը պարբերաբար ի ցույց է դնում Բաքվի բռնապետը, երբ հանդես է գալիս հայատյաց և ագրեսիվ հայտարարություններով ու գործողություններով: Միաժամանակ 2021 թվականի մայիսից առ այսօր ադրբեջանական զինված ուժերը գտնվում են Հայաստանի ինքնիշխան տարածքում, մասնավորապես Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում մի քանի կիլոմետր խորությամբ առաջ են շարժվել դեպի Հայաստան: Հայտարարություններից և կոչերից բացի՝ որևէ այլ ձևով միջազգային դերակատարները չեն արձագանքել միջազգայնորեն ճանաչված սահմանների ու միջազգային իրավունքի կոպիտ խախտմանը: Սա վկայում է այն մասին, որ հայկական գործոնի դերը թուլացել է միջազգային թատերաբեմում, և ստեղծված իրավիճակը չի խանգարում միջազգային խաղացողների օրակարգին: Մյուս կարևոր արձանագրումն այն է, որ քանի դեռ տարածաշրջանում ստատուս քվոն պահպանվում էր հօգուտ հայկական կողմի և հայկական շահերի, կրկին միջազգային դերակատարները հայտարարություններից ու կոչերից բացի՝ այլ գործողություններ չէին կատարում: Այսինքն՝ անհիմն էր այն թեզը, թե իբր այլ տարբերակ չունեինք, քան հրաժարվել հայկական տարածքների նկատմամբ վերահսկողություն ունենալու արդարացի պահանջից և իրավունքից:

Միջազգային դերակատարների նման վերաբերմունքի պատճառներից մեկն այն է, որ Հայաստանը ներկայացնող քաղաքական վերնախավը համարժեք չի արձագանքում թուրք-ադրբեջանական հակահայկական քաղաքականությանը: Ավելին, հայտարարությունների և գործողությունների մակարդակում ընդառաջ է գնում թուրք-ադրբեջանական անհիմն պահանջներին: Արցախի կարգավիճակի հարցը դուրս է բերվել Հայաստանի թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքական օրակարգերից: 2023 թ. հուլիսի 5-ին ՀՀ Սահմանադրության օրվա առթիվ ՀՀ փաս-

տացի վարչապետը, անդրադառնալով «խաղաղության օրակարգին», նշել է, որ «առանցքային են Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքների և անվտանգության հասցեագրման պատշաճ մեխանիզմների ստեղծումը և Հայաստանի Հանրապետության՝ 29,800 քառակուսի կիլոմետր տարածքային ամբողջականության ճանաչումը»: Ինչպես տեսնում ենք, ներկայում զրոյացված է ոչ միայն Արցախում հայության իրավունքների ապահովումն ու անվտանգության մեխանիզմների ստեղծումը, այլև ընդհանրապես հայերի ներկայությունն իր պատմական հայրենիքում: Թերևս ավելորդ է հույս ունենալ, որ շարունակաբար զիջողականություն և կրավորական կեցվածք որդեգրած իշխանությունը կկարողանա ապահովել անգամ մեզ պարտադրվող Սովետական Հայաստանի տարածքը:

Մեզ առաջարկում են «արյունոտ խաղաղություն», արժանապատվությունից հրաժարվելու գնով ձեռք բերված «խաղաղություն», բարեկեցության պատրանք ենթադրող «խաղաղություն»: Խաղաղությունը բազմադեմ է, բայց բոլորը չեն, որ համապատասխանում են հայկական ապագայի տեսլականին: Ամեն գնով «խաղաղության» հասնելու ցանկությունը լրացուցիչ անվտանգային խնդիրներ է ստեղծում Հայաստանի համար, թեև տեղի ունեցող զարգացումները հայ հանրությանը ներկայացվում են տնտեսական, քաղաքական ձեռքբերումների փաթեթավորմամբ: 2024 թ. հունվարի 4-ին Ադրբեջանի նախագահի աշխատակազմի արտաքին քաղաքականության բաժնի ղեկավար Հիքմեթ Հաջիևը հարցազրույց է տվել գերմանական «Berliner Zeitung» թերթին[1], որտեղ ձևակերպել է Բաքվի պահանջները, այդ թվում՝ դեպի Նախիջևան անխոչընդոտ՝ «առանց մաքսային ու սահմանային վերահսկողության» կապ ունենալու մասին: Մի քանի օր անց՝ հունվարի 7-ին, Թուրքիայի տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարարը հայտարարեց, որ ակնկալում են «Զանգեզուրի միջանցքի» նախագիծն իրականացնել մինչև 2029 թվականը՝ նշելով, որ արդեն իսկ ավարտին է մոտենում Բաքվից Խոռատունիք (Հորադիզ) հատվածի շինարարությունը, իսկ Խոռատունիքից Օրդուբադ հատվածում շինարարությունը՝ բացառությամբ Հայաստանի տարածքի, ընթացքի մեջ



է: «Զանգեզուրի միջանցքի հայկական հատվածի երկարությունը մոտավորապես 43 կիլոմետր է: Երևանի միջանցքի պլանավորման և մրցութային ընթացակարգերի իրականացումից հետո այն կհամարվի ամբողջությամբ ավարտված: Այսպիսով, Թուրքիան ուղղակի և հեշտ մուտք կունենա դեպի թյուրքական աշխարհ և Կենտրոնական Ասիայի երկրներ»,- նշել է Թուրքիայի ներկայացուցիչը՝ հավելելով, որ ՀՀ վարչապետը վերջերս դրական ուղերձներ է հղել այդ նախագծի վերաբերյալ[2]: Սա մեկ անգամ ևս փաստում է, որ Թուրքիան և Ադրբեջանը համատեղ են գործում, մեկ միասնական օրակարգով և փորձում են կյանքի կոչել «թուրանական միջանցքը» Հայաստանի և հայկական շահերի հաշվին: Հիքմեթ Հաջիևի հարցազրույցում տեղ գտած խնդրահարույց մյուս թեման, այսպես կոչված, «արևմտյան Զանգեզուր» հասկացության շրջանառումն է, որն արդեն Բաքվի հավակնությունն է ՀՀ Սյունիքի մարզի նկատմամբ:

Ներկա իրականության մեջ որոշ հասարակական և մասնագիտական շրջանակներ տեսակետ են հնչեցնում, թե երրորդ հանրապետությունն այլևս չկա և պետք է մտածել «չորրորդ հանրապետության» մասին, ինչը ոչ պակաս վտանգավոր և խնդրահարույց է: Եթե մենք շրջենք երրորդ հանրապետության էջը, ապա պատմաքաղաքական առումով կհրաժարվենք Անկախության հռչակագրում ամրագրված սկզբունքներից և նպատակներից: «Հինը» հիմնահատակ քանդելու, ջնջելու մոտեցումը զրկում է նախկին ձեռքբերումներն ամրապնդելու և սխալներից սովորելու հնարավորությունից:

Սրանք խնդիրներ են, որոնք պետք է ընկալվեն ոչ թե որպես վերջնարդյունք, այլ մարտահրավեր, որից կարելի է, և պարտավո՛ր ենք դուրս գալ վերափոխված, վերակազմակերպված: Հակառակ դեպքում կդադարենք գոյություն ունենալ որպես ազգ: Այսօր մեզ համար առավել քան հրամայական է արդիականացումը ազգային և քաղաքական մակարդակներում: Ցանկացած ազգ, ժողովուրդ, պետություն փոփոխվող իրողություններում սեփական

տեղն ու դերը պահպանելու համար ձևակերպում է իր ազգային-պետական զարգացման տեսլականը:

Փոփոխվող աշխարհում որպես ազգ ու պետություն կենսունակ մնալու, արդիականանալու համար առանձնացնենք երկու առանցքային և փոխկապակցված հիմնախնդիր. ազատվել զոհի բարդույթից և արդիականանալ ազգային հենքի վրա:

Զոհի բարդույթից ազատվելու առաջնահերթությունը բխում է այն հանգամանքից, որ նման մոդելի կրողը զուրկ է սեփական կյանքը, գործողություններն ու հետեւաբար ապագան որոշելու ցանկությունից: Դեռ 1960 թվականին բժիշկ, հոգեթերապևտ Սթիվեն Կարպմանի կողմից նկարագրվում է մարդկանց միջև փոխհարաբերությունների հոգեբանական և սոցիալական մի մոդել, որը ներառում է զոհի հոգեբանության մեջ դրսևորվող 3 հիմնական դերերը: Կարպմանի եռանկյունին այլ կեպ անվանում են «ճակատագրի եռանկյունի», այն արդիական է մինչ օրս և կարելի է վերագրել նաև ազգային մակարդակում խաղացվող դերերին: Այդ մոդելում որպես զոհ՝ մենք կենտրոնանում ենք կյանքի բացասականության վրա և զայրույթ ենք զգում նրանց նկատմամբ, ովքեր մեզ դատում կամ քննադատում են: Այդպիսով, փաստացի զրկում ենք մեզ լուծումներ փնտրելու, դրանք տեսնելու հնարավորությունից: Որպես հալածողների՝ մենք դատում և քննադատում ենք ուրիշներին՝ սովորաբար առանց զայրույթի կամ չարության: Եվ վերջապես մենք դիմում ենք փրկիչներին, ովքեր կարող են գալ մեկ այլ անձի կամ այլ երևույթի տեսքով, որպեսզի շեղեն մեր ուշադրությունը և թեթևություն բերեն:

Այսօր մենք զոհի կարգավիճակը դարձրել ենք վահան և փորձում ենք պաշտպանվել դժվարություններից և խնդիրներից: Զոհի հոգեբանությունը կառուցված է այն համոզմունքի վրա, որ մենք պատասխանատու չենք մեր գործողությունների և կյանքի հանգամանքների համար: Առկա խնդիրներն ու մարտահրավերները թե՛ անհատական, թե՛ ազգային մակարդակում նախ ինքնուրույն լուծելու փոխարեն, մենք բողոքում ենք, փորձում հասնել նրան, որպեսզի հաստատենք զոհի, տուժածի մեր կարգավիճակը: Արդյունքում խորանում է անօգնականության զգացումը, հայտնվում ենք փակ շղթայի մեջ, անվերջ մեղադրում ենք այլոց, այլ պետությունների, խոսում մեզ վնասող հանգամանքների մասին, ներփակվում ինքներս մեր մեջ, խղճում մեզ և պարտադրում, որ մյուսներն էլ խղճան, հոգ տանեն մեր մասին և լուծեն մեր իսկ խնդիրները: Ի վերջո, շատ ավելի հեշտ է բողոքել ու քննադատել, քան ինչ-որ բան ստեղծել, հաղթահարել, պատասխանատվություն ստանձնել:

Զոհի, տուժածի, պարտվածի կարգավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է ունենալ վերափոխման, զարգացման ու կենսունակության ծրագիր: Այդպիսիք ունեն գրեթե բոլոր ժողովուրդներն ու ազգերը, որոնք հեռանկարային կտրվածքով ապագայի տեսլական են մշակում, ինչպես, օրինակ՝

թուրքերի համար «Թուրանը», հրեաների համար՝ Սիոնը, «Ավետյաց երկիր» վերադառնալը, Միացյալ Նահանգների քաղաքացիների համար՝ «American dream»-ը, ռուսների համար՝ «Наша держава»-ն, լեհերի համար՝ Ռեչ Պոսպոլիտայի վերականգնումը, չինացիների համար՝ «Մետաքսե ճանապարհը» և այլն:

Մեզ անհրաժեշտ արդիականացումը բոլորովին այլ հարթության վրա է, քան արդիականացման դասական տեսություններն են ենթադրում: Մեզ համար արդիականացման որոշիչ գործոնը պետք է դառնա ոչ թե ավանդական արժեքների փոխարինումը, այլ նորի փոխակերպումը, վերարժևորումը ազգային գաղափարախոսության միջոցով: Այսպես՝ յուրաքանչյուր ժողովրդի, ազգի զարգացման համար որոշիչ է ազգային արժեհամակարգը՝ խորհրդանիշների, գաղափարների տեսքով, որոնք դառնում են ուղենիշային: Ազգային գաղափարն է, որ կարող է համախմբել քաղաքական, սոցիալական, տնտեսական տարբեր շահեր ունեցող շերտերին՝ ձևավորելով ազգային գիտակցություն: Տարբեր ժամանակներում հոգևոր- գաղափարական հենքի կարևորությանը անդրադարձել են մեր մեծերը: «Հոգևոր Հայաստան» (1914թ.) վերլուծության մեջ Վահան Տերյանը գրում է. «Ազգը միայն արտաքին ուժերի զորությամբ, իրերի արհեստական դասավորությամբ չի ստեղծվում, այլև իր անդամների ներքին մտավոր-հոգեկան կապով: Պետք է, բացի արտաքին հնարավորությունից, լինի և ներքին մի զորություն, մի հոգևոր մղում, որ մարդկանց համախումբը ազգ է դարձնում»: Նա համոզված էր, որ հոգևոր Հայաստանի կառուցումը ծանր ու տևական աշխատանք է պահանջում, թերևս ավելի դժվար ու ծանր աշխատանք, ավելի ծանր զոհաբերում, քան արյան զոհաբերումն է:

Հղում

[1] https://report.az/ru/vneshnyaya-politika/hikmet-gadzhiev-rabota-nad-tekstom-mirnogo-dogovora-vedetsya-napryamuyu-mezhdu-baku-i-erevanom/.

[2] https://azertag.az/ru/xeber/tureckii_ministr_zangezurskii_koridor_budet_realizovan_k_2029_godu-2875012.

Ազգ-բանակ հայեցակարգից մինչև կեղծ խաղաղության օրակարգ ու «թավշյա» բանակ

Անի Մելքոնյան
Պատմաբան

Յուրաքանչյուր ազգ ու պետություն իր գոյության գլխավոր գրավականը համարում է կանոնավոր բանակը, որի գոյությունը, հատկապես Հայաստանի նման թշնամիներով շրջապատված, փոքրաքանակ բնակչություն ունեցող և թշնամու շարունակական ագրեսիայի պայմաններում գտնվող երկրի համար կենսական նշանակություն ունի:

Ազգ-բանակ գաղափարախոսությունը մեզանում նոր չէ, այն մեզ է հասել ազգային-ազատագրական պայքարի շրջանից, երբ հայ ժողովուրդը Արևմտյան Հայաստանում կանգնած էր ֆիզիկական գոյությունը պահպանելու խնդրի առաջ և պատահական չէր, որ 19-րդ դարավերջին «ՀՅ Դաշնակցության ներկայացուցիչները կարևորեցին համաժողովրդական բանակի գաղափարը»[1]: Այդ ուղղությամբ կատարվող քայլերից էին նաև ժողովրդին զինելու և ինքնապաշտպանություն կազմակերպելու ուղղությամբ տարվող աշխատանքները, որոնք ազգ-բանակի վերածվելու հիմնական նախադրյալն էին պետականության բացակայության պայմաններում[2]: Այդ ուղղությամբ կազմակերպական մեծ աշխատանք տարան դաշնակցական գործիչներ Հրայր Դժոխքը (Արմենակ Ղազարյան) և Վազգենը (Տիգրան Տերոյան):

Արևմտյան Հայաստանում ազգ-բանակ ձևավորելու ՀՅԴ-ի ջանքերը սպասված հաջողություն չունեցան, դրա փոխարեն՝ այդ ջանքերը հաջողությամբ պսակվեցին Կովկասում 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների օրերին, երբ Այսրկովկասի գավառներում գրեթե կազմալուծվել էր ցարական վարչակարգը, և Դաշնակցությունը իր «Մարտական կազմակերպության» միջոցով հանդես էր գալիս որպես հայ ժողովրդի ռազմաքաղաքական միավորման գործոն:

«Այսինքն՝ տվյալ դարաշրջանում դե-ֆակտո պետական գործառույթներ իրականացնող ՀՅ Դաշնակցությունը կազմակերպված, զինված ու պայքարող հայ ժողովուրդն էր՝ իր «դատական մարմիններով» ու «զինվորական խորհուրդներով»: Եվ որպես զինվորների ու նրանց թիկունքն ապահովող գյուղացիների կազմակերպված ամբողջություն՝ հայությունը վերածվել էր ազգ-բանակի...»[3]:

Ազգ-բանակի փայլուն օրինակ էին նաև 1918 թ. մայիսյան հերոսամարտերը, երբ Արամ Մանուկյանին իրապես հաջողվել էր ստեղծել ազգ-բանակ, որը միասնական էր և՛ թիկունքում, և՛ ռազմաճակատում, ու այդ ազգ-բանակն էր, որ անհավասար մարտերում հաղթանակ տարավ թուրքական գերակշիռ զորքի դեմ և ծնունդ տվեց Հայաստանի Հանրապետությանը՝ ի ապացույց այն բանի, որ «.... զօրք եւ ազգ, զօրք եւ պետութիւն, զօրք ու հայրենիք պէտք է կազմեն մի ներդաշնակ ամբողջութիւն»[4]:

Ազգ-բանակի լավագույն օրինակը 1988-ի Արցախյան շարժումն ու 1990-ականներին ծավալված ազատագրական պատերազմն էր, երբ «.... կարճ ժամանակամիջոցում ողջ Լեռնային Ղարաբաղը վերածվեց ազգ-բանակի, որը թեև քանակական բոլոր ցուցանիշներով զիջում էր հակառակորդին, բայց իբրև միասնական բռունցքի վերածված ժողովուրդ՝ անխորտակելի էր իր կամքով ու վճռականությամբ: Արցախյան գոյամարտը ցույց տվեց նաև, որ կանոնավոր բանակ ունենալու հրամայական անհրաժեշտության պայմաններում ևս ազգ-բանակի գաղափարը պահպանում է իր կարևորությունը: Փոխվում է միայն ազգի քաղաքական կամքի կենտրոնը. կուսակցությանը փոխարինում է պետությունը: Բայց ամենևին էլ չի փոխվում հիմնական հրամայականը՝ ազգովին վտանգվելու հեռանկարը, ազգովին կանխելու անհրաժեշտությունը»[5]:

Հայկական կանոնավոր բանակը ծնունդ առավ մարտադաշտում՝ իր թիկունքում ունենալով Հայաստանի և Արցախի բնակչության օժանդակությունը, անվերապահ սերն ու աջակցությունը:

2016 թ. հոկտեմբերին պաշտպանության նորանշանակ նախարար Վիգեն Սարգսյանը ներկայացրեց ազգ-բանակ հայեցակարգը. «Չի կարող հասարակությունը մեկուսացվել բանակից և հակառակը: Բանակի ժողովրդավարացումը և լիարժեք ինտեգրումը հասարակությանը, տնտեսության, մշակույթի, կրթության և գիտության, սպորտի բնագավառներին անում ենք այնպես, որ մենք դառնում ենք մեկ միասնություն՝ քաղաքացիական կյանքում ունեցած ձեռքբերումներով ամրապնդելով նաև մեր զինված ուժերի մարտունակությունը: Ազգ-բանակն այն բանակն է, որն ունի կրթող, դաստիարակող, ուսու-

Հրայր Դժոխք

Վազգեն Տերոյան

ցանող ներուժ, որը փոխանցվում է ժողովրդին: Ազգ-բանակը այն հասարակությունն ու զինված ուժերն են, որտեղ նորարար գիտությունից դեպի ռազմարդյունաբերական համալիր մեկ քայլ է, դա այն վստահությունն է, որ հասարակությունն ունի դեպի զինված ուժերը, դեպի մեր երկրի սպայական անձնակազմը: Դա այն պաշտպանական համակարգն է, որտեղ զորահավաքին պատրաստ է յուրաքանչյուրը՝ հստակ իմանալով իր անելիքը, տեղը, դերն ու միջոցները»[6]:

Միաժամանակ ի թիվս այլ գաղափարների՝ հավելելով, որ ազգ-բանակը «այն հասարակությունն է, որում սպան ամենահարգված և մեծարված քաղաքացին է: Բայց նաև այն սպան է, որը բանիմացության, առաջնորդության, ինքնավստահության, բայց երբեք ոչ ինքնագոհության մարմնացումն է»[7]:

Ազգ-բանակ հայեցակարգն ու նախարարի առաջարկած գաղափարները խիստ իրարանցում առաջացրին ապազգային շրջանակներում, որոնք սկսեցին խեղաթյուրել ու աղճատել ազգ-բանակի գաղափարը:

Ապազգային ճակատը շտապեց հակադարձել. «Սպաները «ամենահարգված ու մեծարված քաղաքացիներ» լինում են ռազմական հասարակություններում, որոնցում ռեալ իշխանությունը զինվորական կաստայացված դասն է»[8]: Այսինքն՝ պատերազմական իրավիճակում գտնվող, երկու ցեղասպան թշնամիներով շրջապատված Հայաստանում ո՞վ պետք է լիներ ամենահարգվածն ու մեծարվածը, եթե ոչ հայ զինվորականը՝ շարքայինից մինչև բարձրաստիճան գեներալ, միգուցե դասալիքնե՞րը, թե՞ թուրքի փողի դիմաց սեփական հայրենիքն ու պատմությունը ուրացողները, միգուցե սորոսականնե՞րը….

Մինչդեռ այդ օրերի պաշտպանության նախարարի ասածի համաձայն. «Ազգ-բանակը այն պաշտպանության համակարգն է, ուր զորահավաքին պատրաստ է յուրաքանչյուրը՝ հստակ իմանալով իր անելիքները, խնդիրներն ու միջոցները, ազգ-բանակը այն երկիրն է, ուր չկան զինվորական և քաղաքացիական, այլ կա համազգեստով քաղաքացի և քաղաքացիական հանդերձանքով հայրենիքի պաշտպան»[9]: Այլ կերպ ասած՝ առաջնային է դառնում ուժեղ, պաշտպանունակ, բարոյական, ոգեղեն, ազգի վստահությունը, սերն ու աջակցությունը վայելող բանակ ձևավորելու հրամայականը, ինչն իր հերթին բարձրացնում է ամբողջ ազգի բարոյական ու ֆիզիկական, նյութական ու հոգևոր ներուժը բանակի, ասել է թե՝ հայրենիքի պաշտպանության գործի շուրջ համախմբելու անհրաժեշտությունն ու պատրաստակամությունը[10]:

Մինչդեռ ազգային ամեն ինչը վարկաբեկելու գործին լծվածները շարունակում էին վարկաբեկել ազգ-բանակ գաղափարը և բանակն առհասարակ: Այդ օրերին ՀՀ ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանին պատկանող «Հայկական ժամանակ» թերթում հայտնի ազգագրագետներից մեկը հայտարարեց. «Հայաստանում բանակն ավելի շատ պատժի տարածք է, քան անվտանգություն ապահովող կառույց»[11]:

Մինչդեռ Հայաստանի Հանրապետության «Անկախության հռչակագիրը» հստակ սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ»[12]:

Կեղծ ժողովրդավարների անհիմն աղմուկին ի պատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարը պարզաբանում էր. ««Ազգ-բանակ» գաղափարախոսությունը բնավ չի տանում պետության ռազմականացմանը»[13]:

ՀՅԴ կամավորները քառասունչորսօրյա պատերազմին մեկնելիս՝ 27-ը սեպտեմբերի 2020 թ.

Ինչպիսին կլինեին ազգ-բանակ քաղաքականության արդյունքները, եթե չլիներ 2018 թ. «թավշյա հեղափոխությունը», դժվար է ասել, որովհետև նոր իշխանությունը ազգ-բանակ հայեցակարգի նկատմամբ իր վերաբերմունքը արտահայտեց անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի շուրթերով. «Ես միշտ շատ վատ եմ վերաբերվել «Ազգ-բանակ» կոնցեպտին... Եթե պաշտպանելու անհրաժեշտություն լինի, հասարակությունը պաշտպանվելու մեծ բնազդ ունի և պաշտպանվելու է, պետք չէ մարդկանց սովորեցնել հայրենիք սիրել....»[14]: Այլ կերպ ասած՝ հայ հասարակությունը իր հայրենիքը պետք է պաշտպանի ոչ թե գիտակցաբար, որպես այդ հայրենիքի հավերժական տեր ու ժառանգ, այլ բնազդաբար՝ զուտ սեփական կաշին փրկելու համար, իսկ ազգ-բանակը, ըստ անվտանգության խորհրդի քարտուղարի, կոռումպացվածության հետևանք էր, և նախկին իշխանությունները «այդ կոռումպացվածությունը թաքցնելու համար առաջարկել էին ազգ-բանակը»[15], իսկ Արմեն Գրիգորյանի, Նիկոլ Փաշինյանի ու նրանց քաղաքական թիմի «ելակետ-կենտրոն թավշյա բանակը» բերեց արհեստական պատերազմում հայկական բանակի կորիզի կոտորածի. հայոց մարտունակ բանակի մեջքը կոտրվեց հուսահատության ու հիասթափության ալիքի տակ, երբեմնի բանակապաշտ ու զինվորապաշտ հայ հասարակությունը անտարբեր դարձավ նաև բանակի ու զինվորի նկատմամբ. հետևանքը Արցախի ամբողջական հայաթափումն էր ու Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքի մի զգալի հատվածի ռազմակալումը Ադրբեջանի կողմից:

«Թավշյա» իշխանության կողմից ազգ-բանակ գաղափարի վարկաբեկումն ու հասարակության օտարումը բանակից բերեց նրան, որ թշնամական հարձակման դեպքում սահմանամերձ գյուղերում ապրող բնակչության մոտ խուճապային իրավիճակ է առաջանում անվստահության պատճառով, մինչդեռ բախտի բերմամբ մեր պետության ղեկին հայտնվածները պետք է գիտակցեին, որ գոնե սահմանամերձ գյուղերի բնակիչները պետք է գաղափարապես պատրաստ լինեն իրենց գյուղը կամ քաղաքը պաշտպանելու, զինվորի թիկունքը պահելու կամ նրա կողքին կռվելու համար, և այս առումով Դաշնակցության ձեռք բերած մարտական հմտություններն ու փորձը կարող են լավագույն օրինակը դառնալ:

2020 թ. 44-օրյա դավաճանված պատերազմը, դրանից հետո հայ զինվորին դասալիք ներկայացնելու պետական քաղաքականությունը, անդադար շարունակվող «մինի» պատերազմները և իշխանության ու հասարակության մի ստվար հատվածի քար անտարբերությունը դրանց նկատմամբ փաստում են, որ Հայաստանի համար գոյության, անվտանգության ու արևի տակ հաստատուն տեղ ունենալու միակ միջոցը ազգ-բանակն է, հակառակը կնշանակի այն, ինչ ունենք՝ կրավորական ու անտարբեր հասարակություն, ամեն օր փոքրացող ու թուլացող պետություն, կազմաքանդվող բանակ ու այդ ամենը դարբնած անդադար դավաճանող ու կապիտուլացվող իշխանություն, որն իր դավաճանությունն ու վախկոտությունը քողարկում է «խաղաղության օրակարգ» կեղծ թեզով:

Ծանոթագրություններ

1. «ՎԷՄ» համահայկական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիվ 4, Եր., 2016, էջ 6:
2. Նույնը, էջ 4:
3. Նույնը, էջ 6:
4. Նույնը, էջ 7:
5. Նույն տեղում:
6. https://armenpress.am/arm/news/865849/azg-banak-gaxaparakhosutyuny-bnav-chi-tanum-petutyan.html(մուտք՝ 25.01.2024):
7. https://mil.am/hy/news/4466(մուտք՝ 25.01.2024) :
8. https://www.lragir.am/2017/11/15/164846/(մուտք՝ 25.01.2024):
9. https://mil.am/hy/news/4466(մուտք՝ 25.01.2024):
10. https://www.hayzinvor.am/52035.html(մուտք՝ 25.01.2024):
11. https://armtimes.com/hy/article/113891(մուտք՝ 25.01.2024):
12. https://www.gov.am/am/independence/(մուտք՝ 25.01.2024):
13. https://armenpress.am/arm/news/865849/azg-banak-gaxaparakhosutyuny-bnav-chi-tanum-petutyan.html(մուտք՝ 25.01.2024):
14. https://www.tert.am/am/news/2018/05/21/armen-grigoryan/2690730(մուտք՝ 25.01.2024) (մուտք՝ 25.01.2024):
15. Նույն տեղում:

Օգտագործված աղբյուրներ

ա) Գրականություն

1. «ՎԷՄ» համահայկական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիվ 4, Եր., 2016

բ) Համացանցի նյութեր

1.https://armenpress.am/arm/news/865849/azg-banak-gaxaparakhosutyuny-bnav-chi-tanum-petutyan.html
2. https://mil.am/hy/news/4466
3. https://www.lragir.am/2017/11/15/164846/
4. http://www.hayzinvor.am/52035.html
5. https://armtimes.com/hy/article/113891
6. https://www.gov.am/am/independence/
7. https://www.tert.am/am/news/2018/05/21/armen-grigoryan/2690730

Ո՞րն է աղետների արմատը

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

1910 թ. Հովհաննես Թումանյանը գրեց իր «Դառնացած ժողովուրդ» հանրահայտ հոդվածը: Սա մի ճշմարիտ և տխուր խոստովանություն է մեր ազգային մտածողության և կենսակերպի մասին: Բանաստեղծի հայացքը տեսել էր այն խայտառակ, ճղճիմ որակները՝ չարակամություն, նախանձ, ատելություն, բանսարկություն, մաղձ, այլոց մեջ թշնամի տեսնելու և նրանց ոչնչացնելու տենչ և այլն, որոնք բույն են դրել հայ մարդու էության մեջ: Ռանչպարի սիրտը նախանձից կանգնում է՝ տեսնելով, որ հարևանի արտը լավն է այս տարի, արհեստավորները ատում են նրանց, որոնց գործերը լավ են, ուսուցիչները, գրողները, բժիշկները և մյուսները կատաղում են, երբ իրենց գործի մեջ մարդիկ դարձել են հաջողակ և այսպես շարունակ: Թումանյանն այս ամենն իրավացիորեն անվանում է ներքին հիվանդություն, քաղցկեղի քայքայող բացիլ: «Ինչո՞ւ է այսպես»,- դառնացած հարցնում է մեծ պոետը ու ինքն էլ փորձում է պատասխանել. «***Ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը: Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում ու փչանում: Էսպես է բնության օրենքը: Էն հասարակ վարունգի թուփն ինչ է. հայտնի է, որ եթե նա էլ ոտի տակ է ընկնում, էլ նրա պտուղը չի ուտվում, էնքան է դառնանում: Նրա համար էլ ձեզ թույլ չեն տալ, որ նրա թուփը ոտի տակով անեք: Էնպես դառնանում ու դաժանանում է և մարդը, նրա հոգին, սիրտը, միտքը, ու ներքին դառնությունը դուրս է գալի, հայտնվում է և՛ աչքերում, և՛ դեմքին, և՛ խոսքերում, և՛ գործերում, ամեն տեղ, ամեն ասպարեզում ու ամբողջ կյանքը դարձնում է դառն ու դաժան»:***

Համաշխարհային պատմությունը պատերազմների, նվաճումների, բռնությունների ու շահագործման պատմություն է, ուստի միամտություն կլինի կարծել, թե մյուս ազգերն ու ժողովուրդները այս կամ այն կերպ չեն անցել այս գեհենի միջով: Յուրաքանչյուր ազգ տառապանքի իր ուրույն պատմությունն ունի, և անհնար է որևէ մեկին ասել՝ «իմ տառապանքն ու կրած զրկանքներն ավելի շատ են, ավելի խոր», այլ հարց է, որ մեզ՝ հայերիս համար շատ բաներ զուտ գոյաբանական ծանր հետևանքներ են ունեցել: Ըստ պատմաբանների՝ շումերներից, աքքադացիներից սկսած մինչև հռոմեացիներ, պարսիկներ, արաբներ, թուրքեր, սովետներ և եվրաստրուկություն, հայն ասես ապրում է սահմանային՝ «լինել-չլինելու» եզրագծին: Փորձենք մտաբերել թեկուզ մեկ-երկու պատմական շրջան, երբ այս հարցը դուրս է եղել հայության օրակարգից: Կդժվարանանք… Եվ սա պատահական չէ: Նույնքան էլ միամտություն կլինի մտածելը, թե ուրիշ ազգերի մեջ մարդիկ չեն դառնանում իրար հանդեպ, մշտապես քնքշորեն սիրում, հարգում, հանդուրժում են միմյանց: Էթնոհոգեբանները հատկապես պատերազմներում պարտված ազգերի վարքագիծը քննելիս նկատել են, որ երբ էներգիան չի մղվում դեպի դուրս, դեպի թշնամին կամ տրանսֆորմացիայի այլևայլ ձևեր գտնում, ապա շրջվում է ինքն իր դեմ, սկսում է ինքն իրեն քայքայել: Դրա ականատեսն ենք գրեթե ամեն օր, նույնիսկ մեր առօրյայում: Հետևաբար «մեզ դառնացրին, և մենք դարձանք այսքան վատը» թումանյանական բացատրությունը թեև ճիշտ է առերևույթ, բայց թերի է երևույթի խորքը հասկանալու առումով: Իհարկե, այդպես է, երիցս ճշմարիտ է այն միտքը, որ «հսկային տևականորեն նկուղում պահելուց հետո նա դառնում է թզուկ»: Այստեղ իրոք կա մի հիմնարար հարց, որի կողքով մենք զգուշորեն անցնում ենք: Այն է՝ մարդիկ, իրոք, իրենք իրենց չեն ճանաչում, էլ ո՞ւր մնաց՝ իրենց մերձավորներին և այլոց: Տղամարդը չի ճանաչում իրեն, իր սիրելի կնոջը, կինը՝ տղամարդուն, հայրը՝ զավակին, մայրը՝ երեխային, որին ինը ամիս իր ներսում կրելով՝ կարծում է, թե ճանաչում է նրան: Խնդիրն այն է, որ մարդը ճանաչելիության հարցում միշտ հենվում է անցյալի, իր ունեցած փորձի վրա, որը, սակայն, ակամայից դառնում է ոչ պիտանի կյանքի շարունակական փոփոխությունների, դիալեկտիկ ընթացքի և նոր իրո-

ղությունների առկայությամբ, որոնց նա պատրաստ չէ: Օրը ցերեկով կարգին հայ մարդու կերպար ունեցող մեր հարևանը, բարեկամը, գործընկերը իրեն նետեց մի վտանգավոր, կեղտոտ նպատակներ հետապնդող քաղաքական ուժի գիրկը և հիմա էլ շփոթված, վախեցած դեսուդեն է նայում՝ փրկություն աղերսող աչքերով: Տեսեք, թե ինչ անհոգությամբ հասարակության մի ստվար զանգված նայեց Արցախի հայաթափմանը: Ապշելու բան է, չէ՞... Ի վերջո, կարո՞ղ ենք ասել, թե սա Արցախն ազատագրող նույն ժողովուրդն է: Աշխարհից գլուխ չհանելը սոսկալի հետևանքներ ունեցավ և շարունակում է ունենալ մեզ համար: Մի՞թե սա չէր մեր ժողովրդի հիմնարար մոլորություններից մեկը դարեր շարունակ: Շատերը չեն ուզում ընդունել, որ դարասկզբին հենց, այսպես կոչված, «լուսավորյալ» Արևմուտքը սուրը դրեց բարբարոսի ձեռքը: Նա բարձրաձայն չասաց՝ «սպանի՛ր դրանց», նա ուղղակի լուռ գլխով արեց և թուրքը հասկացավ, որ կարող է մորթել, կողոպտել, հայրենազրկել: Հարյուր տարի անց խնդրագրեր ենք հղում առ մյուս գիշատիչները, ասում ենք՝ «բռնիր սրանց ձեռքը...»: Անտառում օձ կամ գայլ տեսնելիս չենք մտածում նրանց հետ բանակցելու մասին, բայց ինչո՞ւ է մեզ թվում, թե կարելի է բարեկիրթ խոսքերով շարժել աշխարհի բորենիների գութը: Ավա՜ղ, լավ էլ գիտենք, որ այդ «լուսավորյալը» թքած ունի մեր ցավերի ու տառապանքների վրա, բայց շարունակում ենք ինքնախաբեությամբ զբաղվել: Իսկ բորենին հիմա արդեն ինտելեկտ ունի, գերժամանակակից անօդաչու թռչող սարքեր, տիրապետում է կեղտոտ տեխնոլոգիաների: Ու մինչև նա վերջնականապես կհոշոտի իր զոհին, նախ քաղաքական թունավոր մանրէներ է բուծում իր զոհի տանը, օրգանիզմում, սա էլ ակնհա՞յտ է: Մերձավոր Արևելքի և Օսմանյան կայսրության պատմությունն ուսումնասիրող պատմաբաններից մեկը մի այսպիսի դիտարկում է արել, որն արժանի է ուշադրության: Նա նշում է, որ երբ թուրք - սելջուկները հիմնավորվեցին այս տարածքներում, սուլթանը հրամայեց, որ սելջուկները առանձնապես չտարվեն հողագործությամբ և արհեստներով, այլ սովորեն սուր շարժել, յաթաղանին տիրապետեն: Ահա այսպես, յաթաղան շարժելով, 10 դար հետո թուրքերը եկան, բազմեցին Դարդանելի վրա: Շարունակաբար էքստրեմալ իրավիճակում ապրող **ազգային հանրությունը ինչո՞ւ չի գիտակցում իր վիճակը, այ սա է գլխավոր հարցը**: Եթե սխալվում ենք, ապա այս ամենը տեսնելուց և վերապրելուց հետո թող մեկը մի տանելի պատասխան առաջարկի այն հարցին, թե ինչո՞ւ այս ընթացքում չդարձանք լուրջ կշիռ ունեցող պետություն: Մեր ստեղծած պետությունը, ինչպես ցույց տվեց ժամանակը, պատկերավոր ասած, նման էր մի բուռ ավազի, որը բռունցքի մեջ առնելուց հետո դանդաղ հոսում է մատների արանքով և անհետանում: Հասկանալի է, որ մեր կենսատարածքը և թուրքական թշնամական օղակը խիստ օբեկտիվ իրողություններ են, դրանցով շատ բան է պայմանավորված: Բայց եթե դառնայինք այդ լուրջ արդիական համակարգը, որը կունենար պինդ կառուցվածք, պետական լուրջ կառույցներ, լավ բանակ, ուժեղ հրամկազմ, ռազմականացված տնտեսություն, կրթական համակարգ, նպատակամղված քարոզչություն, մեզ հետ այդպես չէին կարող խոսել, այդժամ ամբոխավար և ստախոս մի երևույթ՝ իր տկարամիտ համախոհներով ինչ հրաշքով պիտի խցկվեր կառավարության շենք: Ոչինչ այնքան թանկ չի արժեևում մարդու, հետևաբար նաև ողջ ազգի համար, որքան զգոնության թուլացումը կամ իսպառ կորուստը: Օրինակ՝ նույնիսկ Ռուսաստանն իր զգոնությունը թուլացնելու պատճառով թույլ տվեց, որ Միացյալ Նահանգները և Արևմուտքը մխրճվեն Ուկրաինայի գործերի մեջ, և հիմա ռուսները ստիպված են մարդկային մեծ կորուստների գնով կրկին ետ բերել իրենց ազդեցության ավանդական գոտիները: Գոնե առաջիկայում պետք է միջազգային գործընթացներն ուսումնասիրող լուրջ կենտրոններ ունենալ և դրանք ամրակցել մեր դիվանագիտությանը և պետականաշինությանը, այլապես կրկին քարշ կգանք իրադարձությունների ետևից: Հիմա շատ է խոսվում նաև մեր թույլ լինելու մասին: Մտաբերենք 90-ականների սկիզբը, մի՞թե շատ է տարբերությունը մեր օրերի համեմատ: Բնավ: Ադրբեջանն ուներ թվաքանակով մերին գերազանցող բանակ ու զրահատեխնիկա, թուրքական աջակցություն, ռեսուրսներ, վարձկան մոջահեթներ, բայց հայ զինվորը հայկական երկրորդ պետությունը հռչակեց: Դա տեղի ունեցավ, որովհետև անկեղծ էր հայության պայքարը, հզոր էր հաղթելու կամքը, զուլալ էր հայության միտքը, կար առաջնորդություն, մարտի դաշտում և քաղաքական հարթակներում տերուտիրականը հայի կարգին տեսակն էր, և ամենակարևորը՝ օտար շահեր հետապնդող մանրէները բուն չէին դրել ազգային օրգանիզմում: Ավա՜ղ, 44-օրյա պատերազմի

Հովհ. Թումանյանը և Ավ. Իսահակյանը Անիում, 1901 թ.

շրջանում այդպես չէր, ամեն բան հիմնովին թաղվել էր շփոթի և կեղծիքի մեջ: Իմաստուն խոսքն ասում է. «Ավելի լավ է հաղթես ինքդ քեզ, քան տանես հազարավոր հաղթանակներ թշնամիներիդ հանդեպ: Այդ դեպքում հաղթանակը միայն քոնն է լինելու, այն չեն կարող քեզնից խլել»: Մեր ժողովուրդը չզորեց ինքն իրեն հաղթել, հատկապես՝ 94-ի զինադադարից հետո: Ահա, թե որտեղ էր մեր մեծագույն վրիպումներից մեկը: Ուրեմն մեծ հաշվով ինքնին լավ կամ վատ ազգեր չեն լինում, աշխարհի մյուս ժողովուրդներից ոչ լավն ենք, ոչ էլ վատը: Եթե կարծում ենք, թե սովորական ենք, ինչ կա որ, մյուսները ևս սովորական են, եթե մեզ համարում են բացառիկ ժողովուրդ, իսկույն պիտի ընդունենք, որ մյուս ազգերը ևս բացառիկ են: Ազգերից յուրաքանչյուրն էլ ինքնատիպ է, ունիկալ, անկրկնելի, ինչպես աշխարհում և բնության մեջ ամեն ինչ: Ուղղակի մեր խեղճ Թումանյանը ևս հայկական պետություն չէր տեսել, շատ էլ լավ չէր պատկերացնում դրա խորքային նշանակությունը, ազգային հանրությանը առաջնորդելու պատմաքաղաքական առաքելության գերկարևոր փաստի հետ չէր առերեսվել: Այլապես այդքան խիստ չէր դատի անպետություն ժողովրդի մասին, աղքան շատ բան չէր պայմանավորի դրանցով: Նույն այդ «դառնացած ժողովուրդը» այնպիսի հերոսական ու սքանչելի որակներ է ցույց տվել նախկինում, ցուցադրում է այսօր և վստահաբար կդրսևորի ապագայում: Միայն թե լինի ուժեղ «առաջնորդություն…»:

Ուշագրավ է նաև Թումանյանի՝ Ավ. Իսահակյանին գրած նամակում ասված միտքը՝ ***«մենք ներսից ու դրսից կործանեցինք մեր երկիրը»:*** Եթե ուզում ենք հասկանալ, թե դա ինչպես է տեղի ունենում, այսինքն՝ «ներսից» ինչպես է հայ հասարակությունը ինքն իրեն մոլորության մատնում և պառակտվում, պետք է ընդամենը ուշադիր քննել վերջին հինգ տարիների անցուդարձը: Այս հինգ տարիները կարելի է համարել դարերի խտացումը: Անհեթեթություն են այն պնդումները, թե տեսեք, որ աշխարհը մեզ դեմ է. չկա այդպիսի բան: Երբ օվկիանոսում փոթորիկ է, մենք չենք կարող ասել. «Օվկիանն ուզում է կործանել նավը»: Օվկիանոսի ինչի՞ն է պետք նավի կործանումը, օվկիանն ապրում է իր կյանքը փոթորիկներով և խաղաղ պահերով: Իսկ եթե նավը կործանվում է, դա նրանից է, որ նավի որակը այն չէ, իսկ նավապետը, օրինակ, պատեհապաշտ, անտեղյակ, անողնաշար, անգրագետի մեկն է, մեր դեպքում նաև՝ թշնամու դրածո: Ուրեմն աշխարհը բնավ էլ մեր դեմ չէ, այդ մենք աշխարհից գլուխ չենք հանում և վստահում ինքներս մեզ:

Հոդվածի մեկ այլ տեղում Թումանյանի դիտարկումը ավելի է մեզ մոտեցնում խնդրի արմատին. ***«Մեծ մասամբ ախտի գոյությունը ընդունելով հանդերձ՝ իրենց առողջ են համարում ու միշտ ուրիշներին են հոչակում հիվանդ: Ամեն մինը ինքը չար չի, կեղծավոր չի, հայհոյող չի, ստիպոս չի, թայֆայական չի, էդ ամենը իրենից դուրս ուրիշներն են»:*** Եվ այստեղ նա անում է իր խորունկ եզրակացությունը. ***«Արդ, եթե մենք ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն և առողջ բնազդներ, անկարելի է աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք և՛ մեր սրտերում, և՛ աշխարհքի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը: Ապա թե էդ փրկարար գիտակցությանը կհետևեն ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը: Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած»:*** Իսկ այս «փրկարար գիտակցությանը» հասնելն այդքան էլ անկարելի բան չէ, ուղղակի պետք է զուլալ հայացք ունենալ՝ շատ ու շատ բաներ նոր աշխարհընկալմամբ տեսնելու համար: Եվ այստեղ Թումանյանը ձեռքը դնում է մի շատ հիմնարար հարցի վրա, այն է՝ «չի կարելի փոխել դեմքի ատացոլանքը՝ առանց փոխելու դեմքը»: Հասկանանք շրջապատող աշխարհը և թերություններ չփնտրենք արտացոլանքի մեջ:

Քաղաքական, տնտեսական, սոցիալական ռեֆորմների մասին խոսելուց առաջ էլ մի պահ կանգ առնենք և փորձենք փոխել նախ **բարեփոխողին**: Սա է մեծ պոետի գլխավոր պատգամը: Ապրում ենք գերժամանակակից, ուժեղ և դիմացկուն համակարգերի դարաշրջանում, ուստի ազգային էթնոսներն ապրելու և զարգանալու մի հենակետ ունեն, և դա արդիական պետությունն է: Կհենվենք այս գաղափարի, այս պատմական հանձնարարականի վրա՝ կկատարելագործենք նաև հայի որակները: ■

Հայաստանը նոր աշխարհակարգի ձևավորման պայմաններում

Սարգիս Սարգսյան
Մոսկվայի Սևծովյան-կասպիական տարածաշրջանի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի հետ այսօր փոխվում են հիմնականում արտաքին գործոնների ազդեցությամբ: Այս առումով հատկապես ազդեցիկ է ռուս-ուկրաինական դիմակայությունը: Ադրբեջանի կողմից Հայաստանի անվտանգությանը մշտական սպառնալիքը ավանդական դաշնակցի հետ հարաբերություններում ճգնաժամի ֆոնին անվտանգության արտաքին նոր երաշխիքների որոնման շարժիչ ուժն է: Անվտանգության խնդիրը Հայաստանի տեսանկյունից ավանդաբար ասոցացվել է Ռուսաստանի հետ: Հետևաբար մինչև 2020 թվականը այս ուղղությամբ դիվերսիֆիկացման իրական փորձեր չեն արվել և նույնիսկ չեն դիտարկվել: Սակայն Հայաստանի ղեկավարության տեսանկյունից Ռուսաստանի կողմից պայմանագրի համաձայն զենք մատակարարելու անկարողությունը, 2021 թվականի մայիսին և 2022 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի հարձակումներին կոշտ պատասխանի բացակայությունը չեզոքացրեցին Մոսկվայի դերը՝ որպես Հայաստանի անվտանգության գլխավոր երաշխավորի: Ավելին, Ռուսաստանը այս ճակատագրական պահին՝ 2022 թվականին, Ադրբեջանի հետ դաշնակցային համագործակցության մասին հռչակագիր ստորագրեց, որը շատ բաներ ակնհայտ դարձրեց: Ստորագրման երևույթը ինքնին նշանակում էր «ինձ վրա հույս չդնեք»: Որքան էլ հետին թվով ռուսական ռազմաքաղաքական ղեկավարությունը փորձի իր տեսանկյունից ներկայացնել իրավիճակը, փաստերը սրանք են: Ռուսաստանում խուսափում են խոստովանել, որ ուկրաինական խնդրի պարագայում մյուս տարածաշրջանային խնդիրները դառնում են երկրորդական գործընթացներին ակտիվորեն մասնակցելու Մոսկվայի անկարողության պատճառով: Ուստի, օրինակ, 2008 թվականին վրացական զորքերի կողմից ռուս խաղաղապահների սպանությունը հանգեցրեց լայնածավալ պատերազմի, իսկ 2023 թվականին նույն ռուս խաղաղապահների սպանությունը Լեռնային Ղարաբաղում ադրբեջանական ուժերի կողմից նույնիսկ չդարձավ դրդապատճառ հարաբերությունների դույզն իսկ վերանայման համար: Երկրորդ՝ Ռուսաստանի համար միջազգային հանրության ներկայացուցիչները բաժանվում են երեք կատեգորիայի՝ բարեկամների, չեզոքների և ոչ բարեկամների: Հիմնական խնդիրը մի խմբից մյուս խմբին անցնելու հստակ չափանիշների բացակայությունն է: Օրինակ՝ Հայաստանի կողմից Ուկրաինային գաջեթներ մատակարարելը բուռն, անհարկի, ոչ ադեկվատ, նյարդային արձագանքների է արժանանում Ռուսաստանում, մինչդեռ Ադրբեջանի կողմից

ականազերծման սարքավորումների, գեներատորների և հրետանային արկերի տրամադրումը Ուկրաինային նման քննադատության չի արժանանում: Այսինքն՝ մի կողմից՝ Ուկրաինայի նկատմամբ ցանկացած գործողություններ Ռուսաստանի համար զգայուն են, մյուս կողմից՝ կարմիր գծերը, որոնք որպես սահման են ծառայում բարեկամ և ոչ բարեկամ երկրների միջև, խիստ հարափոփոխ են և ոչ առարկայական: Նման իրավիճակում Հայաստանը ստիպված էր և այժմ էլ ստիպված է զբաղվել սեփական անվտանգության համակարգի պայմանական աութսորսինգով: Մի կողմից՝ հայ-ադրբեջանական սահմանին ներգրավելով ԵՄ առաքելությանը, որը դիտարկվում է որպես զսպող գործոն, մյուս կողմից՝ Հնդկաստանի, Ֆրանսիայի և Հունաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցությունը բարձրացնելով բոլորովին այլ մակարդակի:

Ադրբեջանում նախընտրական փուլ է, ուստի նախագահ Ալիևը սովորականից ավելի բաց է խոսում իր ներկա և ապագա ծրագրերի մասին: Հունվարի 10-ին նա շուրջ երեք ժամ հարցազրույց է տվել ադրբեջանական մեդիաների լրագրողներին: Շատ լավ կազմակերպված այդ հարցազրույցը, ըստ էության, Ալիևի նախընտրական քարոզարշավի առաջին մեծ միջոցառումն էր: Միանգամից նշենք, որ ներկայացվածը փաստացի համապատասխանում էր այն տրամաբանությանն ու կետերին, որոնք

ընկած են, այսպես կոչված, «հայ-ադրբեջանական խաղաղության բանակցությունների» հիմքում: Ակնհայտ է դառնում, որ Ադրբեջանը չի ազատելու 2020 թ. նոյեմբերից հետո գրաված Հայաստանի միջազգայնորեն ճանաչված տարածքը (առնվազն՝ 300 քառակուսի կմ): «Զորքերի հայելային հետքաշում» գաղափարի փուչ լինելը հերթական անգամ ապացուցվեց: «Խաղաղության պայմանագիր» կոչվող թղթում, եթե այն ստորագրվի, որևէ կերպ չի նշվելու Հայաստանի ու Ադրբեջանի միջև սահմանը և հստակ տարածքը, հետևաբար Ադրբեջանը ցանկացած պահի կարող է խախտել այն՝ պնդելով, որ «սահման չկա, չկա նաև սահմանի խախտում»: Ադրբեջանը պահանջում է միջանցք Սյունիքի տարածքով: Այո՛, հենց միջանցք և ուրիշ ոչ մի բան՝ «անխոչընդոտ անցում» անվան տակ: Ընդ որում, շատ կոնկրետ տեղով՝ Մեղրիով, քանի որ այն «ամենակարճ և ամենահարմար ճանապարհն է» դեպի Նախիջևան: Միաժամանակ Ալիևը ակնարկեց, որ ցանկացած պահի կարող է զենքով վերցնել այդ ճանապարհը: Ադրբեջանը ելնում է այն դրույթից, որ իբրև թե Հայաստանը այս պահին օկուպացրել է Ադրբեջանի 8 գյուղեր, որոնցից 4-ը՝ բուն սահմանին, մյուս 4-ը՝ սահմանից ներս (անկլավի տեսքով): Պարտվողական քաղաքականության հետևանք այս շարքը կարելի է անվերջ լրացնել: 2018-ին Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունը թույլ տվեց Ադրբեջանի ղեկավարությանը օգտվելու բազմաթիվ սխալներից, և հնարավոր է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կանխամտածված ապակառուցողական գործողություններից՝ դուրս գալու նախկինում սկսված բանակցային գործընթացից և լիարժեք մասշտաբային պատերազմ սկսելու համար: Բոլորը գիտեն 2020 թվականի Արցախյան 2-րդ պատերազմի հետևանքների մասին, դրանք հայկական կողմի համար մարդկային և տարածքային անսնախադեպ կորուստներ են: Սրանից հետո Ալիևը Փաշինյանին համոզեց բանակցել միայն եվրոպական հարթակներում՝ տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունից համատեղ ազատվելու համար, ինչը խորացավ 2020 թվականի նոյեմբերին Արցախում ռուսական խաղաղապահ կոնտինգենտի տեղակայմամբ:

2022 թվականի հոկտեմբերին Պրահայում ստորագրելով Արցախի տարածքի նկատմամբ Ադրբեջանի ինքնիշխանության պաշտոնական ճանաչման մասին փաստաթուղթը՝ Փաշինյանը դե ֆակտո և դե յուրե Ադրբեջանի իշխանություններին քարտ բլանշ տվեց՝ շրջափակելու, այնուհետև ռազմական գործողություններ իրականացնելու Արցախի դեմ: Արդյունքում ավելի քան 120 հազար հայ փախստական է դարձել և լքել հայրենի հողը: Հիմա Ալիևը առաջ է տանում «ռուսական պլատֆորմը», «3+3»-ի շրջանակներում բանակցությունների տարածաշրջանային ձևաչափը, մինչդեռ 2018-ին իրեն իշխանության բերած արտաքին ուժերից կախման մեջ գտնվող Փաշինյանը չի կարող այդքան հմտորեն մանևրել արտաքին քաղաքական դաշտում, հետևաբար շարունակում է բացառապես ապավինել ԵՄ-ԱՄՆ միջնորդությանը: Այս իրավիճակում Ալիևի դիրքորոշումը Մոսկվայում, Թեհրանում և Անկարայում կընկալվի որպես կառուցողական մոտեցում, իսկ Փաշինյանինը՝ ապակառուցողական: Կարծում եմ՝ չպետք է որևէ մեկին բացատրել, որ դրանից տուժելու են միայն Հայաստանի բնակիչները: 2021 թվականի մայիսին և 2022 թվականի սեպտեմբերին, Հայաստանի դեմ Ադրբեջանի ռազմական գործողություններից հետո Երևանն արդարացիորեն համարեց, որ ՀԱՊԿ-ն անբավարար է արձագանքել Բաքվի ագրեսիային: 2022 թվականի վերջից Հայաստանի իշխանությունները փաստացի «սառեցրել են» Հայաստանի մասնակցությունը ՀԱՊԿ գրեթե բոլոր նախաձեռնություններին: Ոչ ոք չի վիճարկում այն փաստը, որ ՀԱՊԿ-ում կան խնդիրներ, ըստ էության, ինչպես մյուս միջազգային կազմակերպություններում, քանի որ յուրաքանչյուր երկիր փորձում է ապահովել իր շահերի առավելագույն առաջմղումը, ինչը հանգեցնում է շահերի բախման և

գործողությունների արդյունավետության նվազման: Սակայն փոխզիջում գտնելու և առկա խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է երկխոսություն վարել, այլ ոչ թե խուսափել հանդիպումներից: Ռազմավարական առումով ՀԱՊԿ-ին մասնակցության «սառեցումը» կամ նրանից դուրս գալը դրական ազդեցություն չի ունենա Հայաստանի համար, այլ կարող է լրացուցիչ խնդիրներ ստեղծել ազգային անվտանգության ապահովման համատեքստում, որից թուրք-ադրբեջանական տանդեմը հմտորեն կօգտվի: Չպետք է նաև սպասել դրսի օգնությանը: Հայ ժողովուրդը պետք է ապավինի միայն սեփական ռեսուրսներին, որից հետո արտաքին խաղացողներն իրենք ձեռք կմեկնեն Հայաստանին, քանի որ այսօրվա աշխարհում, ինչպես և դարեր շարունակ, ընդունված է հարգել միայն ուժեղներին: Անկեղծ լինենք. չնայած Երևանի բացահայտ ոչ բարյացակամ վերաբերմունքին՝ ՀԱՊԿ-ն անում է հնարավորը համագործակցությունը շարունակելու համար: ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովն ասել է, որ Մոսկվան ակնկալում է, որ Հայաստանը կշարունակի աշխատանքը կազմակերպությունում և ցավում է, որ հայկական կողմը բարձր մակարդակով ներկայացված չէր Մինսկում կայացած գագաթնաժողովում:

Ռուսաստանի ներկայությունը Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև Ադրբեջանում, պարզվեց կարող է լինել ոչ այնքան երկարաժամկետ, որքան կարելի էր սպասել երեք տարի առաջ՝ Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի միջև եռակողմ հրադադարի համաձայնագրի ստորագրումից հետո: Թղթի վրա Ռուսաստանը պետք է ստանար հնգամյա, երկարաձգվող մանդատ և 1960 զինվոր տեղակայեր Արցախում: Խնդիր էր դրվել վերահսկել հրադադարի ռեժիմը, երաշխավորել տեղի բնակչության անվտանգությունը և ապահովել հայաբնակ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև անարգել երթևեկը:

Մեր կարծիքով՝ կա մի շատ կարևոր դիտարկում: Ռուսապաշտության և ռուսատյացության իրար համարժեք մոլախոտերը հաղթահարելու համար պետք է կարողանանք ճիշտ գնահատել Ռուսաստանի պահվածքը վերջին 6 տարում՝ առանց ծայրահեղ գնահատականների: Հայկական տարբեր շրջանակներում հաճախ է վիճարկվում այն վարկածը, թե 2020 թվականի հայ-ադրբեջանական պատերազմը թույլատրվել է Ռուսաստանի կողմից: Փաստարկներից մեկն այն է, որ Հայաստանը, Ռուսաստանի հետ լինելով մի քանի ֆորմալ դաշինքների մեջ, թեքվել է դեպի Արևմուտք, և Ռուսաստանը ուղղակիորեն կամ անուղղակիորեն կորցրել է Հարավային Կովկասում առկա անվտանգության հավասարակշռությունը պահպանելու հետաքրքրությունը: Մյուսները պնդում են, որ Ռուսաստանը, օգտագործելով իր ռազմական ներկայությունը Լեռնային Ղարաբաղում, առաջ է քաշել իր աշխարհաքաղաքական հավակնությունները, այդ թվում՝ և Ադրբեջանի դեմ: Խաղաղապահ ուժերը մի կողմից՝ համարվում էին Լեռնային Ղարաբաղում հայերի անվտանգության ապահովման գործիք, իսկ մյուս կողմից՝ ուժային գործառույթ էին իրականացնում թե՛ Բաքվի, թե՛ Երևանի դեմ: Լեռնային Ղարաբաղի էթնիկ զտումներից և ռուսական խաղաղապահ ուժերի դուրսբերումից հետո Մոսկվայի ազդեցության կենսական լծակները տարածաշրջանում թուլանալու են: Ռուսաստանի՝ որպես աշխարհաքաղաքական խաղացողի դիրքերը տարածաշրջանում այսօր ավելի թույլ են, քան 2020 թվականի պատերազմից առաջ: Ադրբեջանն, իր հերթին, փորձում է լրացնել վակուումը: Մինչ Ռուսաստանի հարաբերությունները Հայաստանի հետ գոնե դիվանագիտական ոլորտում վատանում էին, Ադրբեջանի հետ դրանք անշեղորեն բարելավվում էին: Հավանաբար նախագահ Իլհամ Ալիևը շատ արագ հասկացավ, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից վերջին տարիներին ստեղծված անվտանգային վակուումը Մոսկվայի համար կարող է լրացվել Ադրբեջանի կողմից: Ռուսաստանի կողմից Ուկրաինայի հետ պատերազմը սկսելուց անմիջապես առաջ Վլադիմիր Պուտինն ու Իլհամ Ալիևը հանդիպեցին Մոսկվայում՝ ստորագրելու դաշինքի 43 կետից բաղկացած նոր համաձայնագիրը: Մեզ համար առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում ռազմական և էներգետիկ համագործակցության խորացմանը վերաբերող հարցերը: 2022 թվականի ամռան սկզբին կայացած հանդիպման ժամանակ երկրների ղեկավարներն ընդգծել են, որ համաձայնագիրը մնում է ուժի մեջ: Մեկ տարի անց՝ 2023 թվականի մայիսին, Իլհամ Ալիևը ուժեղացրեց իր հռետորաբանությունը՝ Ռուսաստանին անվանելով ոչ միայն ոչ պաշտոնական, այլև դե յուրե դաշնակից: Դա տեղի ունեցավ սեպտեմբերի 19-20-ին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ վերջնական հարձակում սկսելուց ընդամենը մի քանի ամիս առաջ: Այն, որ Վլադիմիր Պուտինը և Իլհամ Ալիևը ավտորիտար առաջնորդներ են, որոնց փոխըմբռնման մակարդակն անհասանելի է Նիկոլ Փաշինյանի համար, ավելի է բարդացնում իրավիճակը: Կրկնենք, որ Ալիևը Ռուսաստանին դաշնակից է անվանել Լեռնային Ղարաբաղի վրա վերջնական հարձակումից մի քանի ամիս առաջ:



Սրանք փաստեր են:

Հարձակումից քիչ առաջ

Արցախում էթնիկ զտմանը նախորդող շաբաթների ընթացքում հայ-ռուսական հարաբերություններն արագորեն վատթարացան: Ռուսական կողմը պնդում է, որ դա տեղի է ունեցել Հայաստանի գործողությունների պատճառով:

Արդյո՞ք միայն Հայաստանի իշխանություններն են մեղավոր: Այս համապատկերին կարելի է առանձնացնել երեք նշանակալից իրադարձություն: Ըստ շրջանառվող լուրերի՝ «Meduza»-ի («Meduza»-ն առցանց հրատարակություն է, որը ստեղծվել է ռուսական «Lenta.ru» լրատվական կայքի աշխատակիցների կողմից) տրամադրության տակ էր հայտնվել ուղեցույց, որը սեպտեմբերի 19-ին ՌԴ նախագահականից ուղարկել են պետական ու Կրեմլի քարոզչությանը ծառայող այլ ԶԼՄ-ների աշխատակիցներին: Դրանում Կրեմլը խորհուրդ էր տալիս Լեռնային Ղարաբաղում հակամարտության սրման մեջ մեղադրել Հայաստանին և արևմտյան երկրներին: Շեշտը պետք է դրվեր այն փաստի վրա, որ «Հայաստանի ղեկավարությունը ճանաչել է Ադրբեջանի ինքնիշխանությունը Ղարաբաղի նկատմամբ», և որպես այս թեզի հաստատում՝ Վլադիմիր Պուտինի աշխատակազմը խորհուրդ է տալիս մեջբերել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի 2022 թվականի հոկտեմբերին Պրահայում արած հայտարարությունները: Ամենայն հավանականությամբ Հայաստանի վարչապետին դրդել են անել այս հայտարարությունը արևմտյան «գործընկերները», որոնք պետք է հետևանքների պատասխանատվությունը ամբողջությամբ կիսեն նրա հետ: «Հայաստանի ղեկավարության որոշումը, որն ինքնին արմատապես փոխեց Արցախի կարգավիճակը, ազդանշան դարձավ Ադրբեջանին՝ գործելու համար, այժմ Բաքուն Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ընկալում է որպես իր ներքին գործ»,- ասվում է ձեռնարկի տեքստում: Կրեմլը խորհուրդ է տալիս իր քարոզչական ապարատին ռուս խաղաղապահներին բնութագրել որպես դիտորդական առաքելություն իրականացնող ուժերի: Բացի այդ՝ իշխանամետ ԶԼՄ-ներին էլ հորդոր կա պատմել այն մասին, թե ինչպես են խաղաղապահներն օգնում «խաղաղ բնակչության տարհանման հարցում»:

Մասնավորապես խորհուրդ են տալիս նշել, որ մարդիկ «ապաստան» են գտնում ուղղափառ եկեղեցում, որը գտնվում է ռուսական խաղաղապահ զորախմբի բազայում: Սրանք ևս փաստեր են: Ո՞ւմ են փորձում մոլորեցնել:

Քաղաքացիներն՝ առանց Ռուսաստանի կողմից փաստաթղթով երաշխավորված պաշտպանության

Եկեք դիտարկենք էթնիկ զտումների գործնական կողմը ռուսական քարոզչամեքենայի տեսանկյունից:

Տողերիս հեղինակը ռուս քաղաքական և քաղաքագիտական շրջանակների ներկայացուցիչներից բազմիցս լսել է, որ Արցախում իրադարձություններն անսպասելիորեն շատ արագ ծավալվեցին, և հայերը անսպասելիորեն չդիմադրեցին: Մյուս կողմից՝ նույն շրջանակները ասում էին, որ զարմացած են տասնամյա շրջափակման պայմաններում հայ բնակչության տոկունությունից:

Ընդ որում, Ադրբեջանի հարձակման մեկնարկից մի քանի շաբաթ առաջ նույն, քիչ թե շատ օբյեկտիվ և խիստ տեղեկացված (չասեմ՝ հայամետ, որովհետև Ռուսաստանի Դաշնությունում չգտնվեց գեթ մեկ հայամետ ֆունկցիոներ) շրջանակները խոսում էին այն մասին, որ եթե ոչինչ չփոխվի, բնակչությունը սովի կմատնվի: Այսօր էլ դժվար է հասկանալ, թե ռուսների ուզածն ի՞նչ է: Սահմանամերձ գյուղերից բազմաթիվ անկախ վկաներ փաստում են այն մասին, որ ռուսական զորքերը, ադրբեջանական հարձակումների ֆոնին սկսել են նահանջել կամ լուռ դիտորդի պահվածք են դրսևորել: Ականատեսներից մեկը՝ Մարտունի քաղաքում կռված հայ զինվորը, պնդում է, որ ռուսական զորքերը առավոտյան արդեն լքել էին առաջնագիծը: Վերջին հաշվով, դժվար է հասկանալ, թե Ռուսաստանը աշխարհաքաղաքական առումով ինչ օգուտ քաղեց Արցախում էթնիկ զտումներից: Ակնհայտ է, որ ներկա փուլում Ռուսաստանի լծակները երկու երկրների վրա էլ նվազել են: Ադրբեջանը փորձում է ապացուցել, որ ինքը Ռուսաստանի համար ավելի վստահելի գործընկեր է, քան Հայաստանը՝ չնայած այն հանգամանքին, որ Ադրբեջանում հասարակական կարծիքը երկար տարիներ արդեն ընդգծված հակառուսական է: Զուտ այն փաստը, որ Հայաստանի տարածքից Արցախ մտած խաղաղապահ ուժերի մի մասը տարածաշրջանը լքում է Ադրբեջանի տարածքով, ինքնին խոսուն է: Տեղին է ասել, որ սա խորհրդանշում է հարաբերությունների այն փոփոխությունը, որը տեղի է ունեցել վերջին երեք տարիների ընթացքում: Ինքնախաբեությունը ոչ մի լավ բանի չի բերում: Ակնհայտ է, որ եթե Ռուսաստանը

կատարեր 2020 թվականի նոյեմբերի հրադադարի պայմանագիրը, ապա սեպտեմբերին ոչ մի էթնիկ զտում էլ Արցախում տեղի չէր ունենա: Թեև ՌԴ ղեկավարությունը փորձում է հումանիտար աղետի մեղքը բարդել Հայաստանի ղեկավարության վրա, սակայն անվտանգության համար պատասխանատու է եղել ոչ թե հայկական, այլ Լեռնային Ղարաբաղում տեղակայված ռուսական զորքը: Կա՞ կասկած, որ քանի դեռ ադրբեջանական ավտորիտար պետությունը հարյուր հազարից ավելի մարդկանց փախստական էր դարձնում, ռուս խաղաղապահները ունեցել են չմիջամտելու հրաման: Ո՞վ կարող էր այդպիսի հրաման տալ՝ բացի Կրեմլից: Ոչ մի ցանկություն չունենալով արդարացնել Հայաստանի գործող, բոլոր ոլորտներում ապիկար իշխանություններին՝ ստիպված ենք լինելու հետ գնալ 15-20 տարվա կտրվածքով, որպեսզի պարզ ձևով հասկանանք, թե արդյո՞ք մեր ռազմավարական դաշնակիցը իրեն նույն ձևով կպահեր, ասենք 2003-ին, ինչպես իրեն պահեց 2020-ին:

Իրավիճակ է փոխվել

Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի գործողությունները մեծապես ձևավորում են ուժերի նոր հավասարակշռություն Հարավային Կովկասում:

Տարածաշրջանում պատմականորեն ներկա երեք տերությունների գործունեությունը և հարաբերությունները տեսականորեն կարող են նպաստել ռուս-արևմտյան առճակատման տրամաբանությունից դրանց դուրս գալուն: Չնայած ակնհայտ է, որ այս պահին տարածաշրջանային երեք խաղացողների փոխազդեցությունը ավելի շուտ էսկալացիայի գործոն է, քան դեէսկալացիայի, ինչպես և Սիրիայում, Լիբիայում և այլ տեղերում, որտեղ երեք երկրների շահերի բախումը միշտ էլ լուրջ ռազմական բախումների վերածվելու ներուժ ունի: Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը Հարավային Կովկասի տարածաշրջանում առաջատար խաղացողներն են: Ռուսաստանի համար Հարավային Կովկասը ամենապայթյունավտանգ տարածաշրջաններից մեկն է, որն ունի ընդհանուր սահման նրա հետ և մի քանի էթնիկ խմբերի, որոնք պատմական և մշակութային առումով ասոցացվում են Ռուսաստանի Դաշնության հետ, երկրորդ հայրենիքն է: Տարածաշրջանի բոլոր երկրների հետ հավասարակշռված և բարեկամական հարաբերությունները մնում են Ռուսաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունը: Ե՛վ հայերը, և՛ ադրբեջանցիները Ռուսաստանում ունեն ստվարաթիվ սփյուռք: Վրաստանը հյուրընկալում է ռուսաստանցի զգալի թվով արտագաղթողների, ինչը տնտեսական համագործակցության նոր հնարավորություններ է բացում Մոսկվայի և Թբիլիսիի համար: Կովկասը ռազմավարական կարևոր ելք է ապահովում դեպի Կասպից ծով՝ Ռուսաստանը կապելով Իրանի և Պարսից ծոցի հետ:

Տարածաշրջանի համար առանձնահատուկ նշանակություն ունի ռուսական ռազմական օբյեկտների տեղակայման փաստը: Որքան էլ ռուսական կողմը փորձի նվազեցնել Գյումրիում տեղակայված 102-րդ ռազմաբազայի կարևորությունը, անհերքելի է նրա դերը այլ դերակատարների ազդեցության ընդլայնումը հարավային սահմանների վրա նվազեցնելու առումով և մյուս կողմից՝ նրանց հետագա ներթափանցումը Կենտրոնական Ասիա կանխելու հարցում: Անկարայի աշխարհաքաղաքական հարթության մեջ Ադրբեջանը առանցքային էներգետիկ գործընկեր է ինչպես Թուրքիային էներգակիրների մատակարարման, այնպես էլ այդ երկիրը Միջերկրական ծովի ամենամեծ էներգետիկ հանգույցի վերածելու համատեքստում: Բացի այդ՝ Ադրբեջանը կարևոր շուկա է թուրքական արտադրանքի, մասնավորապես՝ զենքի համար: Ստանձնելով Թուրքիայի ռազմաքաղաքական և տնտեսական աջակցության «ցուցափեղկի» դերը՝ Բաքուն Թուրքիային հնարավորություն տվեց ընդլայնելու իր ազդեցությունը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ ամբողջ թյուրքական աշխարհում: Վրաստանն իր հերթին ապահովում է Ադրբեջանի և Թուրքիայի միջև կապը:

Թերևս տեսանելի ապագայում Վրաստանը կմնա թուրքական ռազմավարական պլանավորման կենտրոնական տարրը, որը կապում է Անկարային իր եվրասիական գործընկերների հետ: Ընդ որում, չնայած Վրաստանը լռում է՝ այդ երկրում չեն կարող չգիտակցել, որ, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» բացումը իրենց տնտեսության համար մահացու կլինի: Հարավային Կովկասում Իրանի շահերը կապված են երեք գործոնների հետ՝ անվտանգություն, էներգետիկ ռեսուրսներ և մեկուսացումից դուրս գալու փորձեր: Նախ՝ Իրանի սահմաններին արևմտյան բլոկի տերությունների, հատկապես՝ ԱՄՆ-ի և Իսրայելի ռազմաքաղաքական ներկայությունը Թեհրանի կողմից ընկալվում է որպես ազգային անվտանգության ամենալուրջ սպառնալիք, երկրորդ՝ Հարավային Կովկասը Իրանի համար չափազանց կարևոր է դեպի Կասպից ծով և նրա ռեսուրսներ, ինչպես նաև կովկասյան տարածաշրջանով անցնող եվրասիական տրանսպորտային և լոգիստիկ միջանցքների համար: Ըստ այդմ՝

Հարավային Կովկասը ռազմավարական նշանակություն ունի բոլոր երեք դերակատարների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի համար: Սա էներգառեսուրսների կարևոր աղբյուր է, վաճառքի շուկա և լայն իմաստով կարևոր տարանցիկ տարածք, որտեղ հենակետ ձեռք բերելով՝ գերիշխող ուժը կկարողանա առանցքային դիրք զբաղեցնել եվրասիական տրանսպորտի և լոգիստիկ հոսքերում: Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի ռազմաքաղաքական ներկայությունը Հարավային Կովկասում բարդ է, միաժամանակ դինամիկ: Յուրաքանչյուր երկիր ձգտում է առաջ մղել սեփական շահերը, ապահովել իր սահմանների անվտանգությունը՝ միաժամանակ հավասարակշռելով հարաբերությունները տարածաշրջանային այլ տերությունների հետ:

Իրանի ռազմաքաղաքական ներկայությունը Հարավային Կովկասում. մարտահրավերներ և հնարավորություններ Ռուսաստանի համար

Իրանն այսօր ռազմաքաղաքական ոլորտում փոխգործակցում է և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի հետ: Իրանը Հայաստանի հետ ակտիվ միջգերատեսչական համագործակցություն է պահպանում: Չնայած մշակութային և կրոնական տարբերություններին՝ Իրանը Հայաստանին դիտարկում է որպես վստահելի գործընկեր: 2016 և 2022 թվականներին Երևանի և Թեհրանի միջև ռազմաքաղաքական հարաբերությունները սկսեցին ինստիտուցիոնալ ձև ստանալ՝ փոխըմբռնման հուշագրերի և ականազերծման ոլորտում համագործակցության տեսքով: Կողմերը մասնակցում են նաև բազմակողմ վարժանքներին (օրինակ՝ «Кавказ (Կովկաս) -2020»):

Ադրբեջանի դեպքում Իրանի ռազմաքաղաքական փոխգործակցության ինտենսիվությունն ավելի թույլ է, սակայն կողմերը կապեր են պահպանում և պարբերաբար վարժանքներ են անցկացնում Կասպից ծովում: Կասպից ծովի ավազանում անվտանգության պահպանման ոլորտում համագործակցությունը կառուցված է մի շարք համաձայնագրերի հիման վրա, որոնք ստորագրել են նաև Ղազախստանը, Ռուսաստանը և Թուրքմենստանը: Կարևորվում են «Կասպից ծովի ծովային միջավայրի պաշտպանության շրջանակային կոնվենցիան», 2006, 2010 թվականներին կնքված «Կասպից ծովի անվտանգության ոլորտում համագործակցության համաձայնագրերը», 2018 թվականի՝ Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիան: Իրանի և Ադրբեջանի երկկողմ հարաբերություններում կարևոր դեր է հատկացվում եվրասիական լայնածավալ նախագծերի նախաձեռնությունների իրականացմանը, որը ներառում է բնական գազի տարանցումը Թուրքմենստանից Ադրբեջան Իսլամական Հանրապետության տարածքով և «Հյուսիս- Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը:

Իրանը չեզոք դիրք է գրավում հայ-ադրբեջանական հակամարտությունում, սակայն մտահոգություն է հայտնում Իսրայելի և Թուրքիայի հետ Բաքվի սերտ կապերի համար: Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո Թեհրանի վերաբերմունքը Բաքվի նկատմամբ դարձավ ավելի զգուշավոր, քանի որ Ադրբեջանի հաղթանակը նշանավորեց տարածաշրջանում Իրանի նկատմամբ թշնամական մտադրություններ ունեցող ուժերի ներկայության և ազդեցության աճ: Հաշվի առնելով, որ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան Իրանի համար տարածաշրջանային մրցակից է, իսկ Իսրայելը՝ անմիջական հակառակորդ, Բաքվի սերտ շփումները նրանց հետ այսպես թե այնպես, բացասական հետք են թողնում իրանա-ադրբեջանական հարաբերությունների վրա:

Ի թիվս այլ հարցերի՝ հայ-ադրբեջանական դիմակայության համատեքստում Իրանն ունի անվտանգության ռազմավարական կարևոր խնդիր՝ հայ-իրանական սահմանի անձեռնմխելիությունը:

Ադրբեջան-Թուրքիա տանդեմը հայտարարում է հայ-իրանական սահմանի երկայնքով «Զանգեզուրի միջանցք» բացելու մտադրության մասին, ինչը կարող է հանգեցնել Հայաստանի հետ Իրանի ուղիղ կապի փակմանը, ինչպես նաև Բաքվին թույլ կտա կապ հաստատել իր էքսկլավ Նախիջևանի հետ: Դրանով

նաև Ադրբեջանը Թուրքիայի հետ կարող է հաստատել ուղիղ կապ՝ Հարավային Կովկասում ստեղծելով «թյուրքական գոտի»: Այս դեպքում Իրանը հանդես է գալիս որպես Ռուսաստանի իրավիճակային դաշնակից՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ Մոսկվան և Թեհրանը խթանում են տրանսպորտային և լոգիստիկ նախագիծը՝ «Հյուսիս-Հարավ» ՄՏԿ-ն: Կարևոր է նշել, որ Ռուսաստանը դեմ չէ Զանգեզուրի միջանցքի բացմանը, սակայն նոյեմբերի 9-ի համաձայնագրի պայմաններով, որը տրանսպորտային միջանցքների վերահսկողությունը տալիս է ՌԴ ԱԴԾ-ին:

Ընդհանրապես, Իրանին Հարավային Կովկասում կարելի է բնութագրել որպես «սպասող տերություն», որը կարող է տիրանալ այլ պետությունների կողմից զբաղեցրած ռազմաքաղաքական խորշերին: Այսպիսով՝ Ուկրաինայում հատուկ ռազմական գործողության լույսի ներքո ռուսական ռեսուրսների սահմանափակության, ինչպես նաև ռազմական տեխնիկայի արդիականացման և բանակի կատարելագործման համար Հայաստանի լրացուցիչ ռեսուրսների անհրաժեշտության պատճառով իրանական զենքի (մասնավորապես՝ անօդաչու թռչող սարքերի, OTRK) աճող հեղինակությունը թույլ է տալիս, որպեսզի Թեհրանը ապագայում դուրս գա զենքի տարածաշրջանային շուկա: Սակայն այսօր Թեհրանն իր արտաքին քաղաքականության մեջ հավատարիմ է մնում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կողմերի միջև հավասարության պահպանմանը և զերծ է մնում ինչպես Հայաստանին, այնպես էլ Ադրբեջանին զենք մատակարարելուց:

Ռուսաստանի ռազմաքաղաքական ներկայությունը Հարավային Կովկասում

Ռազմաքաղաքական ոլորտում Ռուսաստանի և Հարավային Կովկասի երկրների միջև ինստիտուցիոնալ համագործակցությունը՝ բացառությամբ Վրաստանի, լայն է և խոր: Առաջին հարավկովկասյան երկիրը, որի հետ Ռուսաստանը կապեր հաստատեց անվտանգության և պաշտպանության ոլորտում, Հայաստանն էր: Այսպես՝ «Հայաստանում Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կարգավիճակի և դրանց գործունեության պայմանների մասին» համաձայնագրի համաձայն՝ Երևանն իր տարածքում Թուրքիայի և Իրանի հետ պետական սահմանի պաշտպանության հարցերը պատվիրակել է սահմանապահ զորքերին: Ավելին, երկու երկրների պայմանագրային բազան շատ ավելի լայն է, քան Ռուսաստանի և Ադրբեջանի միջև: Բայց Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո Ադրբեջանի և Ռուսաստանի միջև ռազմաքաղաքական համագործակցության ոլորտում ստորագրվեցին նոր պայմանագրեր: 2022 թվականի առաջին կիսամյակում ստորագրվեց երկու ռազմավարական փաստաթուղթ (Ադրբեջանի և Ռուսաստանի միջև

դաշնակցային համագործակցության մասին հռչակագիրը և երկու երկրների արտաքին հետախուզական ծառայությունների միջև համագործակցության համաձայնագիրը), ինչը վկայում է փոխգործակցության խորացման մասին:

Աբխազիայի և Հարավային Օսիայի դեպքում տեսանելի է հանրապետությունների անվտանգության ոլորտի՝ ռուսական կառույցներին առավելագույն ինտեգրման միտում: Ռազմական համագործակցության ոլորտում մասամբ ճանաչված հանրապետությունների հետ պայմանագրերի կնքումը աստիճանական և առաջադեմ բնույթ է կրում և նրանց անվտանգության երաշխիքն է: Հայաստանի, Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ ստորագրված պայմանագրերի մեծ մասը դրույթներ է պարունակում սահմանների պաշտպանության ապահովման, ռուսական ռազմակայանների տեղակայման, կողմերից մեկի վրա հարձակման դեպքում օգնություն տրամադրելու և ռազմատեխնիկական համագործակցության մասին, մինչդեռ ադրբեջանական կողմի հիմնական փոխգործակցությունը տեղի է ունենում ռազմատեխնիկական համագործակցության միջոցով, իսկ վերջերս փոխգործակցություն է հաստատվել Ռուսաստանի և Ադրբեջանի արտաքին հետախուզական ծառայությունների միջև:

Հարավային Կովկասում Ռուսաստանի ժամանակակից արտաքին քաղաքականության բոլորովին նոր պրակտիկա է դարձել կենսաբանական անվտանգության ոլորտում հուշագրերի կնքումը, օրինակ՝ այն ստորագրվել է 2021 թվականին Հայաստանի հետ: Ռուսաստանն ունի ռազմակայանների ցանց, ինչը թույլ է տալիս արագ արձագանքել իր հարավային սահմաններին նետված մարտահրավերներին: Վերջին տասնամյակի ընթացքում այդ օբյեկտները ենթարկվել են արդիականացման և հզորացման գործընթացին, հատկապես Հայաստանի և Աբխազիայի բազաները: Ընդ որում, Ռուսաստանը բացարձակապես բոլոր ռազմական օբյեկտները վարձակալում է անվճար: Հենակետերի նյութատեխնիկական ապահովումը մեծապես

կրում է ընդունող կողմը: Ռուսական ռազմական ներկայության առաջատարը Հայաստանն է, որի տարածքում տեղակայված է 102-րդ բազան՝ հագեցած արդիականացված զինատեսակներով և ունի 3,5-ից մինչև 5 հազար զինվորական: 102-րդ բազայի ավիացիոն բաղադրիչը գտնվում է Երևանի մերձակայքում գտնվող Էրեբունի ռազմական օդանավակայանում: Օդանավակայանը շահագործում են Հայաստանի ռազմաօդային ուժերը և Ռուսաստանի օդատիեզերական ուժերը, որտեղ տեղակայված է ռուսական 3624-րդ ավիաբազան: Ղարաբաղյան 2-րդ պատերազմից հետո ՌԴ զինված ուժերը զգալիորեն ավելացան և ընդլայնեցին իրենց ներկայությունը հանրապետությունում՝ նոր դիրքեր գրավելով Սյունիքի մարզում:

Եթե դիտարկենք Լեռնային Ղարաբաղը, ինչպես պահանջում է միջազգային իրավունքը, այն է՝ որպես Ադրբեջանի մաս, ապա կարելի է պնդել, որ հարավկովկասյան այս հանրապետության տարածքում ռուսական զորքերը ներկա են 1960 հոգանոց խաղաղապահ կոնտինգենտի տեսքով: Լեռնային Ղարաբաղում գտնվելու ընդամենը երկու տարվա ընթացքում Ռուսաստանին հաջողվեց Ստեփանակերտի մոտ կառուցել լիարժեք ռազմական ճամբար և ամրացնել անցակետերը խրամատներով ու բետոնե բլոկներով: Ռուսաստանի զինված ուժերն ունեն նաև իրենց ռազմավարական օբյեկտները Աբխազիայում և Հարավային Օսիայում: Այսպես՝ Աբխազիայում այսօր գործում է 7-րդ ռազմաբազան, որը ներառում է 17 ռազմական օբյեկտ, ինչպես նաև օդանավակայան և նավահանգիստ Սև ծովի ափին, իսկ Հարավային Օսիայում տեղակայված է 4-րդ գվարդիական ռազմակայանը՝ թվով 7 ռազմական օբյեկտ: Նշված բազաներից յուրաքանչյուրն ունի մոտ 4 հազար զինվորական: Հարավային Կովկասը շարունակում է մնալ մի տարածաշրջան, որտեղ հակամարտությունները լուծվում են խորհրդային կամ ռուսական արտադրության զենքերով:

Միայն Վրաստանը կարողացավ մասամբ հրաժարվել ռուսական մատակարարումներից՝ զենք և պահեստամասեր ձեռք բերելով հետխորհրդային այլ երկրներից և համայնավարական բլոկի նախկին երկրներից: Ռուսական սպառազինության հիմնական գնորդը Ադրբեջանն էր: Ռուսաստանից Ադրբեջան մատակարարվում էին ժամանակակից ծանր սպառազինության համակարգեր՝ S-90C տանկեր, ԲՄՊ-3, «Սմերչ» հրթիռային համակարգ, SOU-1Ա «Սոլնցեպեկ» ծանր կրականետ և այլն: 2011-2014 թթ. Բաքուն Ռուսաստանից գնել է թվով 24 «Մի-35Մ» տրանսպորտային և մարտական ուղղաթիռ և թվով 71 «Մի-17-1Վ» բազմաֆունկցիոնալ ուղղաթիռ: Մինչև 2018 թվականը Ադրբեջանը Ռուսաստանից գնել է ավելի քան 5 միլիարդ դոլար արժողությամբ ռազմական արտադրանք, ինչը հանրապետության զինված ուժերի արդիականացման կարևոր բաղադրիչ է: Սակայն մոտավորապես 2018 թվականից սկսված՝ Ռուսաստանից Ադրբեջան մատակարարումները

սկսեցին նվազել Բաքվի վարած դիվերսիֆիկացման քաղաքականության պատճառով: Ռուսները դուրս են մղվել Իսրայելի և Թուրքիայի կողմից: Եթե 2011–2020 թթ. Ռուսաստանը Ադրբեջանին մատակարարել է Հարավային Կովկասի հանրապետության կողմից ներկրված ողջ սպառազինության 60 տոկոսը, ապա 2015-2019 թթ. նրա մասնաբաժինը 31 տոկոս էր, իսկ Իսրայելինը՝ 60 տոկոս: Սրա հետ Ռուսաստանը մնում էր Հայաստանին զենքի հիմնական մատակարարը 2011-ից 2020 թվականներին: Ռուսաստանի Դաշնությանը բաժին է ընկել հանրապետության կողմից ներկրված սպառազինությունների 94 տոկոսը՝ առաքումներ կատարելով կա՛մ ապառիկով՝ փոքր տոկոսադրույքով, կա՛մ ռուսական ներքին գներով: Այս ժամանակահատվածում Հայաստան մատակարարվել են զրահափոխադրիչներ, հակաօդային պաշտպանության համակարգեր, համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր (MLRS) և տանկեր: 2016 թվականին Հայաստանը ձեռք էր բերել չորս «Իսկանդեր» մարտավարական հրթիռային համալիր և դրանց համար նախատեսված 25 հրթիռ: 2018 թվականից Հայաստանը սկսել է գնել ավելի ժամանակակից սպառազինություն: Վերջապես, աբխազական և հարավօսական բանակները՝ ինտեգրված ռուսական ռազմական պլանավորմանը, լիովին կախված են Ռուսաստանի ֆինանսական և ռազմական օգնությունից, ինչը Մոսկվային դարձնում է հանրապետությունների հիմնական ռազմավարական դաշնակիցը: Տարածաշրջանի պետությունների հետ Ռուսաստանի կադրային կապերը լայն տարածում ունեն: Մոսկվան ակտիվ քաղաքականություն է իրականացնում ռուսական ռազմաուսումնական հաստատություններում Հարավային Կովկասի երկրների զինվորականներին ներգրավելու, համատեղ վարժանքներ կազմակերպելու, մարտավարական գործողություններ վարելու և այլ հարցերում: Եթե Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ նման միջոցառումներ սկսել են անցկացվել ոչ վաղ անցյալում, ապա Ադրբեջանի և Հայաստանի հետ փոխգործակցության մեծ փորձ կա, և զորավարժությունները պարբերական բնույթ են կրել: Հայտնի է, որ 2018 թվականին Ռուսաստանում վերապատրաստում է անցել 132 ադրբեջանցի զինվո-

ական, իսկ 2019 թվականին նրանց են միացել ևս 74-ը: Այնուամենայնիվ, Հայաստանը շարունակում է մնալ առաջատարը, որտեղից 2018 թվականին վերապատրաստման և ռազմական կրթության համար ժամանել են 215 սպա և կուրսանտ: Այս ոլորտը օտարերկրյա պետությունների հետ Ռուսաստանի ռազմատեխնիկական համագործակցության կարևոր բաղադրիչն է, քանի որ այդ կերպ նրանցից է ձևավորվում ապագա ռազմական էլիտան: Այս ամենը մշակվում է համատեղ զորավարժությունների հետ, որոնք ամեն տարի տեղի են ունենում ինչպես Ռուսաստանի Դաշնության, այնպես էլ Հարավային Կովկասի հանրապետությունների տարածքներում: Ավելին, Հարավային Կովկասի երկրները՝ բացառությամբ Վրաստանի, ամեն տարի մասնակցում են միջազգային բանակային խաղերին, ինչը յուրատեսակ միավորող գործոն է ծառայում: Այսպիսով՝ Ռուսաստանի ռազմաքաղաքական ներկայությունը Հարավային Կովկասում շատ ընդգրկուն է և զարգացած: Միակ երկիրը, որի հետ Ռուսաստանը ռազմաքաղաքական ոլորտում հարաբերություններ չունի, Վրաստանն է: Չնայած Ադրբեջանը լայն կապեր է պահպանում ՆԱՏՕ-ի երկրների, հատկապես՝ Թուրքիայի հետ, սակայն նա ռուսական զենքի գնորդ է և պահպանում է «բարեկամական չեզոքություն» Ռուսաստանի նկատմամբ: Չնայած հարաբերությունների սառեցմանը՝ Հայաստանը մնում է Ռուսաստանի ռազմավարական դաշնակիցը և ռազմատեխնիկական ոլորտում մեծապես կախված է Մոսկվայից: Աբխազիան և Հարավային Օսիան դե ֆակտո տարածաշրջանում Ռուսաստանի պաշտոնական ռազմական ներկայության շարունակությունն են: Ընդհանուր առմամբ, Ռուսաստանն ավելի շատ է ներգրավված Հարավային Կովկասի հակամարտությունների մեջ, քան մյուս դերակատարները: Ռուսաստանի Դաշնությունը փորձում է պահպանել ազդեցությունը հայ-ադրբեջանական հակամարտության երկու կողմերի վրա՝ այսօր էլ առաջ քաշելով ուժերի հավասարակշռությունը պահպանելու չափազանց բարդ խնդիր, որը մյուս երկրները, հատկապես՝ Թուրքիան, ակտիվորեն փորձում են խախտել:

Թուրքիայի ռազմաքաղաքական ներկայությունը Հարավային Կովկասում. մարտավարակա՞ն, թե՞ ռազմավարական սպառնալիք

Տարածաշրջանում Թուրքիայի ռազմաքաղաքական ներկայությունը տարասեռ է: 1990-ականներից Անկարան խոր և ռազմավարական հարաբերություններ է կառուցել Բաքվի հետ, որոնք վերջնականապես ձևավորվեցին վերջին տասնամյակում՝ վերածվելով ռազմական դաշինքի: Թուրքական և ադրբեջանական հանրապետությունների միջև առաջին համաձայնագրերը կնքվել են 1992 թվականին և վերաբերում են թուրք զինվորականների կողմից ադրբեջանցի սպաների պատրաստմանը: Համաձայնագրերի հաջորդ փաթեթը կնքվել է 1996-ին և 1997-ին, երբ կողմերը պայմանավորվել են գլխավոր շտաբների մակարդակով համագործակցության մասին և համապատասխանաբար ընդունել ռազմավարական համագործակցության խորացման համատեղ հռչակագիր: Պայմանագրային բազան զգալիորեն ընդլայնվեց 2000-ականներին, երբ ստորագրվեցին մի քանի արձանագրություններ՝ ռազմական տեղագրության ոլորտում համագործակցության, Բաքվում ռազմական ուսումնական կենտրոնի ստեղծման, համատեղ ռազմական գնումների և ռազմարդյունաբերական համագործակցության վերաբերյալ:

2010 թվականին Թուրքիան և Ադրբեջանը ստորագրեցին ռազմավարական գործընկերության և փոխօգնության մասին համաձայնագիր, որը վերջնականապես պաշտոնականացրեց երկու երկրների ռազմական դաշինքը և նոր փուլ բացեց նրանց փոխգործակցության հարցում: Հենց այս տասնամյակում թուրք-ադրբեջանական համագործակցության ինստիտուցիոնալ շրջանակը լցվեց ռազմաքաղաքական բովանդակությամբ՝ ուժեղացված ռազմական մատակարարումների և ուսումնական ծրագրերի տեսքով: Միաժամանակ գործարկվեց նաև թուրք-ադրբեջանական համագործակցության համակարգող մարմինը՝ ռազմավարական համագործակցության բարձրագույն խորհուրդը:

Բովանդակային առումով թուրք-ադրբեջանական հարաբերությունները եզակի են՝ համեմատած մյուս խոշոր տերությունների փոխգործակցության հարավկովկասյան պետությունների հետ: Սրանք երկու երկրներ են, որոնք միավորված են լեզվով, մշակույթով և պատմությամբ: Մեծ մասամբ Թուրքիայի օգնությամբ Ադրբեջանը կարողացավ ստեղծել ժամանակակից, պրոֆեսիոնալ բանակ, որը հաղթեց 44-օրյա պատերազմում: Այսպիսով՝ Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ընթացքում թուրք-ադրբեջանական համագործակցության հաջողությունը հանգեցրեց Շուշիի հռչակագրի ստորագրմանը, որը կոչված էր նոր փուլ սկզբնավորելու Բաքվի և Անկարայի ռազմավարական դաշինքում: Բացի այդ՝ հռչակագրի ստորագրումը դե յուրե բացում է Ադրբեջանում թուրքական ռազմաբազա ստեղծե-

լու հնարավորությունը: Թուրքիայի և Վրաստանի միջև ռազմաքաղաքական համագործակցությունը լայնածավալ չէ, ինչպես թուրք-ադրբեջանականը, այլ կենտրոնացած է մի շարք առանցքային ոլորտներում (ենթակառուցվածքային օբյեկտների պաշտպանություն, անձնակազմի պատրաստում և համատեղ վարժանքներ): Վրաց-թուրքական փոխգործակցության առանձնահատկությունն այն է, որ Անկարան նախընտրում է Վրաստանի հետ հարաբերությունները կառուցել ճկուն ձևաչափով՝ Ադրբեջանի ներգրավմամբ: Նման եռանկյունու ստեղծումը պայմանավորված է Թուրքիայի աշխարհաքաղաքական պատկերացումներում Վրաստանի դիրքով: Թուրքիայի համար Վրաստանը ընդամենը տարածք է, որը Անկարային տանում է դեպի Կասպից ծովի ռեսուրսները, իսկ լայն իմաստով՝ եվրասիական «Նոր Մետաքսի ճանապարհ է»: 2002 թվականին Տրապիզոնում պայմանագիր է ստորագրվել Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի միջև, որով կողմերը պարտավորվել են համագործակցել ենթակառուցվածքային կառույցների անվտանգության ոլորտում: Թուրք-վրացական անվտանգության հարաբերություններին նոր լիցք հաղորդեց 2012 թվականին Տրապիզոնի հռչակագրի ստորագրումը: Փաստաթղթում ընդգծվում է քաղաքական և պաշտպանական ոլորտներում համագործակցությունն ընդլայնելու ցանկությունը: Բացի այդ՝ 2013 թվականին Բաթումիի գագաթնաժողովում ընդունվեց 2013–2015 թվականների եռակողմ գործողությունների ծրագիրը:

2016 թվականին Գաբալայում կայացած եռակողմ գագաթնաժողովում կողմերը պայմանավորվել են համատեղ վարժանքներ անցկացնել: Ի վերջո 2018 թվականին պաշտպանության նախարարների հաջորդ եռակողմ գագաթնաժողովում ստորագրվել է պաշտպանության և անվտանգության ոլորտում համագործակցության հուշագիր: Ընդհանուր առմամբ, եռակողմ ձևաչափը կարելի է համարել Անկարայի հաջողված արտաքին քաղաքական գործիքը, որը հստակորեն ցույց է տալիս Վրաստանի տարանցիկ բնույթը: Միևնույն ժամանակ Թուրքիային չի կարելի համարել վրացական ուղղությամբ անվտանգության կարևոր դերակատար: Անկարան Թբիլիսիի հետ կապված ՆԱՏՕ-ի շահերի առաջնորդը չէ: Հարավային Կովկասում Թուրքիայի ռազմաքաղաքական ներկայության առանցքային և ամենաարդյունավետ տարրը ռազմական պատրաստության ծրագրերն են և համատեղ վարժանքները: Թուրքական ռազմական ակադեմիաները, որոնք ավարտել են հազարավոր ադրբեջանցի զինվորականներ, ձևավորել են Ադրբեջանի ժամանակակից բանակի տեսքը, հանգեցրել են հանրապետության զինված ուժերում դավանաբանական փոփոխություններին և ստեղծել թյուրքական «ռազմական եղբայրության» ֆենոմենը: 2019 թվականի դրությամբ թուրքական ռազմական ակադեմիաներով անցել է ավելի քան 7 հազար ադրբեջանցի զինվորական: Ամեն տարի

ավելի քան երկու հարյուր ադրբեջանցի սպաներ սովորում են Թուրքիայում՝ Թուրքիայի ազգային պաշտպանության համալսարանի հովանու ներքո: 2022 թվականին Ադրբեջանը ներկայացրեց ռազմական կրթության համակարգը թուրքական ձևով վերակազմավորելու փաստը՝ հայտարարելով սեփական ազգային պաշտպանության համալսարանի ստեղծման մասին: Ի թիվս այլ բաների՝ Ադրբեջանի զինված ուժերի հրամանատարության և վերահսկման սկզբունքները և համակցված սպառազինության մարտավարությունը, թուրքական մեկնաբանությամբ, մոտ են ՆԱՏՕ-ի չափանիշներին: Այնուամենայնիվ, Անկարայի և Բաքվի միջև ռազմավարական գործընկերության ոչ պակաս կարևոր տարր են զորավարժությունները, որոնք վերջին տասը տարիների ընթացքում կրում են համակարգային բնույթ:

Այսպես՝ 2018 թվականին անցկացվել է յոթ համատեղ վարժանք, իսկ 2019 թվականին՝ տասներեք: Նման զորավարժությունների հիմնական նպատակը Թուրքիայի և Ադրբեջանի զինված ուժերի միջև օպերատիվ փոխգործակցության ուժեղացումն է: Պարբերական զորավարժությունները շարունակվել են 44-օրյա պատերազմից հետո՝ 2021 թվականի հոկտեմբերին, Նախիջևանում, իսկ 2022 թվականի սեպտեմբերին՝ ռազմաօդային ուժերի վարժանքներ «TurAz Qartali» («Թուրք-ադրբեջանական արծիվ»): Թուրքիան Վրաստանի հետ աշխատում է հիմնականում հատուկ գործողությունների ուժերի էլիտար ստորաբաժանումների պատրաստման ոլորտում, ինչպես նաև ձգտում է ընդլայնել Վրաստանի զինված ուժերի հետ փոխգործակցության տարածքը, ընդ որում, դրանք հիմնականում հիմնված են արևմտյան ուսումնական ծրագրերի վրա: «Կովկասյան արծիվ» կոչվող առաջին համատեղ զորավարժությունները մեկնարկել են 2017 թվականին: Զորավարժություններին ներգրավվել են Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի հատուկ նշանակության ստորաբաժանումները: Նման զորավարժություններ տեղի են ունեցել նաև 2019 և 2021 թվականներին: Բացի այդ՝ Բաքուն, Թբիլիսին և Անկարան 2021 թվականից անցկացնում են ամենամյա համակցված սպառազինության «Հավերժություն» զո-

ռավարժությունները: 2016 թվականին Գաբալայում կայացած գագաթնաժողովում կողմերը պայմանավորվեցին ստեղծել հատուկ դասընթացներ MTR-ի համար Վրաստանում՝ Սաչխերեի հանքարդյունաբերության ուսուցման դպրոցի հիման վրա: Ընդհանուր առմամբ, եռակողմ վարժություններն ունեն ընդգծված մասնագիտացված բնույթ (SSO): Թուրքական զենքի մատակարարումները Ադրբեջան, թեև բազմիցս զիջում են ռուսականին, սակայն ԼՂ երկրորդ պատերազմի ժամանակ լրատվամիջոցներում լայն արձագանք ունեցավ, հատկապես թուրքական գրոհային անօդաչու սարքերի կիրառման փաստը: Ներկայում Թուրքիան տրամադրում է սպառազինությունների սահմանափակ տեսականի՝ թեթև զրահատեխնիկա, հրթիռային համակարգեր, անօդաչու թռչող սարքեր, փոքր զենքեր, կապի, ուղղորդման և գիշերային տեսողության սարքեր: Հատկանշական է, որ թուրք-ադրբեջանական ռազմատեխնիկական համագործակցության առաջին ոլորտը եղել են թեթև և հրետանային զենքերը, ուղղորդման և կապի համակարգերը: 2000 թվականին Թուրքիան Ադրբեջանի ռազմածովային ուժերին է փոխանցել AB-25 տիպի AB-34 պարեկային նավը, իսկ 2013–2014 թթ. Ադրբեջանը գնել է «Բորա» 12 տրամաչափի թվով 200 դիպուկահար հրացան: Բացի այդ՝ Անկարան Բաքվին մատակարարել է «Օտոկար» ընկերության արտադրած «Կոբրա» տեսակի անիվավոր զրահամեքենաներ: 2022 թվականի սկզբի դրությամբ Ադրբեջանի զինված ուժերում կար 35 նման զրահամեքենա: Թուրքական արտադրության համազարկային կրակի ռեակտիվ համակարգերը (ՀԿՌՀ) դարձան ադրբեջանական բանակի համար կարևոր ձեռքբերում: Բաքուն ձեռք է բերել 30 հատ T-107, 40 հատ T-122 «Sakarya» և 21 հատ T-300 «Kasirga» M հրթիռային համակարգեր: Այնուամենայնիվ, ռազմատեխնիկական համագործակցության ամենահարուստ տարրը թուրքական «Bayraktar» TB2 անօդաչու թռչող սարքերի և STM «Kargu-2» թափառող զինամթերքի մատակարարումն էր: Այլ անօդաչու թռչող սարքերի հետ՝ հիմնականում իսրայելական արտադրության, թուրքական անօդաչու թռչող սարքերը նշանակալի դեր են խաղացել հայկական դիրքերի կրակը ճնշելու և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հակաօդային պաշտպանության ոչնչացման գործում:

Պատերազմից հետո Բաքուն որոշեց ընդլայնել համագործակցությունը Անկարայի հետ անօդաչու թռչող սարքերի ոլորտում: Բանակցություններ են տարվում Ադրբեջանում անօդաչու թռչող սարքերի համատեղ արտադրություն բացելու վերաբերյալ, այդ թվում՝ «Աքինջի» կոչվող նոր ծանր հարվածային անօդաչու թռչող սարքերի: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա Թուրքիան Հարավային Կովկասի այս հանրապետության համար զենքի էական մատակարար չէ: 2001 թվականին Անկարան Թբիլիսի տեղափոխեց երկու «Bell UH-1H Utility Helicopter» ուղղաթիռներ: Այդ ընթացքում 2008-2009 թթ. Թբիլիսին գնել է 76 «Nurol Ejder» զրահափոխադրիչ, 100 «Otokar Cobra» զրահամեքենա, երկու MRTP 33 դասի «Patrol Boat» տեսակի պարեկային նավ և մեկ MRTP 21 դասի պարեկային նավ: 2020 թվականից Թուրքիան սկսել է վրացական բանակին ոչ մահաբեր զենքի կանոնավոր անվճար մատակարարումներ: 2020 թվականին առաքվել է 12 զրահապատ էքսկավատոր և չորս բեռնատար: 2021 թվականին՝ հեռաչափեր և ինժեներական սարքավորումներ: Այսօր Թուրքիայի ռազմական օգնությունը Վրաստանին ավելի շատ խորհրդանշական բնույթ է կրում: Այսպիսով՝ Թուրքիան իր դերն ու կշիռն ունի տարածաշրջանային հարցերում. նա հանդես է գալիս որպես կարևոր գործընկեր Ադրբեջանի և Վրաստանի համար և Հարավային Կովկասի հանրապետություններին առաջարկում է այլընտրանք Ռուսաստանին, ԱՄՆ-ին և արևմտյան այլ երկրների՝ իրենց զբաղեցրած ռազմատեխնիկական համագործակցության ոլորտներում: Սա Թուրքիայի մրցակցային առավելությունն է, որը թույլ է տալիս Անկարային նշանակալի դեր խաղալ Հարավային Կովկասում՝ Ռուսաստանի և Արևմուտքի միջև առճակատման լույսի ներքո: Բայց, չնայած այն հանգամանքին, որ Շուշիի հոչակագիրը անուղղակիորեն ենթադրում է Ադրբեջանի տարածքում թուրքական ռազմաբազաներ ստեղծելու հնարավորություն, Անկարան դեռ չունի նման ռազմական օբյեկտներ Հարավային Կովկասում: Այնուամենայնիվ, Թուրքիան պարբերաբար համատեղ զորավարժությունների ժամանակ իր ուժերն է տեղակայում ադրբեջանական տարածքում, ինչը վկայում է Անկարայի կողմից ադրբեջանական տարածքի զարգացման գործընթացի մեկնարկի մասին: Ընդհանուր առմամբ, թուրքական անվտանգային քաղաքականությունը Հարավային Կովկասում բազմազան է: Մինչ Անկարան լիարժեք ռազմավարական դաշինք է կառուցել Բաքվի հետ, Թուրքիայի Հանրապետությունը Թբիլիսիի հետ համագործակցում է ավելի ճկուն և մասնագիտացված ձևաչափով՝ Վրաստանի հետ համագործակցությունը կապելով Ադրբեջանի հետ իր հարաբերությունների և տարածաշրջանում ընդհանուր շահերի հետ: Թուրքական քաղաքականության ուղղվածությունը սկզբունքորեն

հակառուսական է: Ադրբեջանի վերջնական կլանումը Թուրքիայի կողմից ռազմավարական մարտահրավեր է ռուսական շահերին: Վրաստանի հետ Թուրքիայի համագործակցությունն ինքնին էական վտանգ չի ներկայացնում, սակայն Թբիլիսիի ներգրավվածությունը Անկարայի գլխավորած եռակողմ ձևաչափերում մարտահրավեր է: Թբիլիսիի և Բաքվի դիրքերի սերտաճումը անվտանգության ոլորտում անբարենպաստ է Մոսկվայի համար:

Եզրակացություն

Տարածաշրջանային երեք խաղացողները՝ Ռուսաստանը, Իրանը և Թուրքիան ձգտում են կառուցել տարածաշրջանում ներկայության երեք տարբեր մոդելներ՝ սեփական շահերն առաջ մղելու համար:

Ռուսաստանը, որպես ԽՍՀՄ-ի և Ռուսական կայսրության իրավահաջորդ, ունի ամենատարբեր և խոր ներկայություն: Սակայն Մոսկվան ներգրավված է Հարավային Կովկասում առկա բոլոր հակամարտությունների մեջ, ինչը մյուս խաղացողների ներթափանցման հետ մեծապես սահմանափակում է մանևրելու հնարավորությունը: Մոսկվայի պարտավորությունները դաշնակիցներ Աբխազիայի, Հարավային Օսիայի և Հայաստանի նկատմամբ սահմանում են Ադրբեջանի և Վրաստանի հետ մերձեցման սահմանը: Այդուհանդերձ, տարածաշրջանային խաղացողների թվում չկան պետություններ, որոնք կարող են ամբողջությամբ փոխարինել Մոսկվային զենքի մատակարարման ոլորտում և, ընդհանրապես, որպես իշխանություն պրոյեկտելու ունակ դերակատար լինել:

Իրանն օգտվում է տարածաշրջանում 2020 թվականից հետո ստեղծված իրավիճակից սեփական դիրքերը ամրապնդելու նպատակով՝ առաջին հերթին կառուցելով հարաբերություններ Հայաստանի հետ: Թեհրանը կարող է Երևանին զենք առաջարկել այն պայմաններում, երբ ռուսական մատակարարումների հնարավորությունները սահմանափակ են հատուկ գործողության պատճառով:

Այնուամենայնիվ, Իրանի շահերը պահանջում են թույլ չտալ ինչպես թուրքական (թյուրքական), այնպես էլ արևմտյան (ամերիկա-իսրայելական) ազդեցության ուժեղացումը: Իրանը հայտարարել է Զանգեզուրի միջանցքի ուժային բացմանը ռազմականորեն հակազդելու պատրաստակամության մասին: Թեհրանն առավել ևս մտահոգված է Ադրբեջանի և Իսրայելի ռազմատեխնիկական համագործակցությամբ: Ստեղծված իրավիճակը Իրանին հնարավորություն է տալիս ավելի ակտիվ դիրքորոշվել՝ օգտվելով Մոսկվայի սահմանափակ մանևրից և Անկարայի հստակ դիրքորոշումից: Երկարաժամկետ հեռանկարում իրանական ազդեցության ուժեղացումը կվնասի ռուսական շահերին, սակայն կարճաժամկետ հեռանկարում

անվտանգության ոլորտում Ռուսաստանի Դաշնությունն ու Իրանը իրավիճակային գործընկերներ են: Թուրքիան չափազանց ակտիվ քաղաքականություն է վարում Հարավային Կովկասում՝ փորձելով առավելագույն դիվիդենտներ ստանալ 44-օրյա պատերազմում Ադրբեջանի հաղթանակից: Անկարան շարունակում է զարգացնել ռազմատեխնիկական համագործակցությունը Բաքվի հետ և ձգտում է Թբիլիսիին ներգրավել բազմակողմ ձևաչափերում: Միևնույն ժամանակ Թուրքիայի միանշանակ դիրքորոշումը ղարաբաղյան ճգնաժամի և Զանգեզուրի միջանցքի հարցում նրան թույլ չի տալիս հանդես գալու որպես խաղաղարար և տարածաշրջանային կայունության երաշխավոր: Ընդհանուր առմամբ, ներկա պայմաններում Անկարան մոտ է տարածաշրջանում իր ազդեցության սահմանագծին հասնելուն: Սակայն երկարաժամկետ հեռանկարում թուրքական ազդեցության շարունակական ներթափանցումն Ադրբեջան վտանգ է ներկայացնում Ռուսաստանի Դաշնության շահերի համար, քանի որ խոսքը Ադրբեջանի ինքնիշխանության դանդաղ կլանման մասին է: Տարածաշրջանային երեք խաղացողների գործողությունները մեծապես ձևավորում են ուժերի նոր հավասարակշռություն Հարավային Կովկասում: Տարածաշրջանում պատմականորեն ներկա երեք տերությունների գործունեությունը տեսականորեն կարող է նպաստել ռուս-արևմտյան առճակատման տրամաբանությունից նրա դուրս գալուն: Այնուամենայնիվ, այս պահին Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի փոխգործակցությունն ավելի հավանական է, որ ավելի շուտ էսկալացիայի գործոն լինի, քան դեէսկալացիայի: Դա պայմանավորված է նրանով, որ Հարավային Կովկասն ավելի հետաքրքիր է տարածաշրջանային եռյակի երկրների համար՝ որպես տարանցիկ տարածք, որն ապահովում է կապ Ասիայի, Մերձավոր Արևելքի և Սևծովյան տարածաշրջանի հետ: Այս նկատառումներն են ընկած Հարավային Կովկասում ձևավորվող ուժերի նոր հարաբերակցության հիմքում: ■

ՀՀ-ԱՄՆ փոխայցերը 2023 թ. ընթացքում

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

2023 թ. աչքի ընկավ հայ-ամերիկյան հարաբերությունների ակտիվացմամբ, որի ընթացքում տեղի ունեցան փոխայցեր հայ և ամերիկացի պաշտոնյաների միջև: Այնուամենայնիվ, ամենաբարձր մակարդակի փոխայցելություններ՝ նախագահ-վարչապետ, փոխնախագահ-փոխվարչապետ, այդպես էլ տեղի չունեցան: Հարաբերությունների աշխուժացումը կարելի է պայմանավորել մի քանի գործոնով: Առաջին և թերևս ամենագլխավոր պատճառը հայ-ադրբեջանական հարաբերություններն են՝ Ղարաբաղյան հակամարտության վերջնական լուծման առումով ԱՄՆ շահագրգռվածությունը: Այդ է պատճառը, որ 2023 թ. Միացյալ Նահանգները հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման հարցում ստանձնեց հիմնական միջնորդի առաքելությունը՝ հատկապես հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Ռուսաստանը զբաղված է ուկրաինական պատերազմով, և վերջինս իր դիրքերը զգալիորեն զիջել է Հարավային Կովկասի տարածաշրջանում: Ուստի սա է պատճառը, որ Միացյալ Նահանգները, փորձելով միջնորդի դեր ստանձնել հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում, ձգտում է Հայաստանում և ընդհանուր առմամբ Հարավային Կովկասի տարածաշրջանում նվազեցնել ռուսական ազդեցությունը և փոխարենը Թուրքիային՝ իր ռազմավարական դաշնակցին, հաղորդել տարածաշրջանային ազդեցություն ունեցող տերության կարգավիճակ:

Այս համատեքստում հարկ է առանձնացել 2023 թ. ընթացքում ԱՄՆ միջնորդությամբ տեղի ունեցած բանակցությունները Հայաստանի և Ադրբեջանի միջև: Էնթոնի Բլինքենի, Նիկոլ Փաշինյանի և Իլհամ Ալիևի միջև առաջին եռակողմ հանդիպումը տեղի ունեցավ փետրվարի 18-ին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում[1]:

Բանակցությունների հաջորդ փուլը ԱՄՆ միջնորդությամբ տեղի ունեցավ մայիսի 1-4-ի ընթացքում Վաշինգտոնում: Բանակցություններն ընթանում էին Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի միջև Ջորջ Շուլցի արտաքին գործերի ազգային ուսումնական կենտրոնում: ԱԳ նախարարներն արդեն իսկ հանդիպել էին ինչպես ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի, այնպես էլ ԱՄՆ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանի հետ[2]: Հենց այս բանակցությունների ավարտից հետո է Բլինքենը նշմարում երկրների միջև հնարավոր համաձայնագրի կնքման մոտալուտ լինելը: Վերջինս հավատացած էր, որ համաձայնագիրը արդեն տեսանելի է և հասանելիության սահմաններում է[3]:

ԱՄՆ միջնորդությամբ 2023 թ. վերջին բանակցությունները տեղի ունեցան հունիսի 27-29-ը: Այս համատեքստում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հունիսի 27-ին Վաշինգտոնում հանդիպեց ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի, իսկ հունիսի 28-ին՝ ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանի հետ: Բլինքենի մասնակցությամբ Միրզոյանի և Բայրամովի միջև բանակցությունները կրկին տեղի ունեցան Ջորջ Շուլցի արտաքին գործերի ազգային ուսումնական կենտրոնում[4]:

ԱՄՆ միջնորդությամբ բանակցությունների մեկ փուլ էլ նախատեսվում էր անցկացնել այս տարվա ավարտին՝ նոյեմբերի 20-ին, սակայն Ադրբեջանը հրաժարվել էր մասնակցությունից՝ պայմանավորելով իր որոշումը ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ջեյմս Օ'Բրայենի՝ Ներկայացուցիչների պալատում արած հայտարարությունների հետ: Իր հայտարարության մեջ Օ'Բրայենը նշել էր.«Մենք հստակ հասկացրել ենք, որ սեպտեմբերի 19-ի իրադարձություններից հետո Ադրբեջանի հետ ոչինչ նորմալ չի լինի, քանի դեռ մենք առաջընթաց չենք տեսնում խաղաղություն հաստատելու ուղղությամբ» և հավելել, որ Վաշինգտոնը չեղարկել է ադրբեջանցի պաշտոնյաների «բարձր մակարդակի այցերը» և դադարեցրել է ռազմական ու այլ օգնությունը Ադրբեջանին[5]:

Եվս մեկ հանդիպում Արարատ Միրզոյանի և ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի միջև տեղի է ունեցել սեպտեմբերի 20-ին Նյու Յորքում ՄԱԿ ԳԱ 78-րդ նստաշրջանի շրջանակներում տեղի ունեցած «Ժողովրդավարության արդյունքները» (Democracy Delivers Initiative) համաժողովի մեկնարկից առաջ: Քննարկման առարկան կրկին հայ-ադրբեջանական հարաբերություններն էին[6]:

Իսկ սեպտեմբերի 22-ին նույն նստաշրջանի շրջանակներում Արարատ Միրզոյանը հանդիպել է ԱՄՆ Պետքարտուղարի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով օգնական Յուրի Քիմի հետ[7]:

Պայմանավորված բանակցություններում ԱՄՆ-ի մեծ հետաքրքրվածությամբ պարբերական հանդիպումներ են տեղի ունեցել նաև կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական, ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ Լուիս Բոնոյի և ՀՀ մի շարք պաշտոնյաների միջև, ինչպիսիք են վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը և փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը:

Միացյալ Նահանգների կողմից ակտիվության պլիք նկատվեց Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի բլոկադայի և Արցախից հայերի բռնի տեղահանման ժամանակահատվածում: Մասնավորապես հենց այս շրջանում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տնօրեն Սամանթա Փաուերը այցելեց Հայաստան և Ադրբեջան: Սեպտեմբերի 25-ին վերջինս ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով օգնականի պաշտոնակատար Յուրի Քիմի ուղեկցությամբ ժամանեց Հայաստան՝[8] նույն օրը հանդիպելով ՀՀ վարչապետի հետ: Սամանթա Փաուերի այցին հաջորդեց հայտարարություն, որտեղ ասվում էր Հայաստանին 11,5 միլիոն ԱՄՆ դոլարի հրատապ մարդասիրական օգնության տրամադրման մասին՝ 1 միլիոն ԱՄՆ դոլար՝ ՄԶԳ-ի և 10,5 միլիոն ԱՄՆ դոլար՝ Պետքարտուղարության միջոցով:

ԱՄՆ ՄԶԳ տնօրեն Սամանթա Փաուերի Հայաստան այցից հետո հաջորդ մեկ ամսվա ընթացքում զգալի ակտիվություն նկատվեց ՄԶԳ պաշտոնյաների Հայաստան այցելությունների հարցում: Մասնավորապես հոկտեմբերի 6-ին փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն ընդունեց Եվրոպայի և Եվրասիայի հարցերով Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) տնօրենի տեղակալ Ալեքսանդր Սոկոլովսկիին[9]: Նույն օրը վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանն ընդունեց ԱՄՆ ՄԶԳ պատվիրակությանը, որի կազմում էին Եվրոպայի և Ասիայի գործերով ԱՄՆ ՄԶԳ ղեկավարի տեղակալ Ալեքս Սոկոլովսկին, ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն Ջոն Ալելոն և ԱՄՆ ՄԶԳ արտակարգ իրավիճակների արձագանքման համակարգող Մայք Լամբրայթը[10]: Հոկտեմբերի 23-ին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի ղեկավար Էրին Մլքիին ընդունել են փոխվարչապետներ Մհեր Գրիգորյանն[11] ու Տիգրան Խաչատրյանը[12]:

Փոխայցեր եղել են նաև ՀՀ ԱԺ պատգամավորների և ԱՄՆ Կոնգրեսի անդամների միջև: Մասնավորապես 2023 թ. մայիսի 10-ին ՀՀ ԱԺ Հայաստան-ԱՄՆ բարեկամական խմբի անդամները Վաշինգտոնում հանդիպել են ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի նախկին խոսնակ, կոնգրեսական Նենսի Փելոսիին, Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ֆրենկ Փալոնին, Ներկայացուցիչների պալատի անդամներ Ռոբ Մենենդեսին, Դեբի Դինգլին և Ջեն Շչեկովսկիին[13]: Իսկ սեպտեմբերի 25-ին ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը ընդունել է ԱՄՆ սենատոր Գերի Փիթերսին[14]:

Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին հանդիպումներ են եղել նաև Ազգային ժողովի նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանի և Հարավային Եվրոպայի և Կովկասի հարցերով ԱՄՆ փոխպետքարտուղարի տեղակալ Ջոշուա Հաքի[15], ինչպես նաև ԱՄՆ կոնգրեսական Ջո Ուիլսոնի հետ[16]:

Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն, իր հերթին, 2023 թ. ապրիլին աշխատանքային այց է կատարել Միացյալ Նահանգներ, որի ընթացքում ապրիլի 11-ին հանդիպել է ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ

Փաշինյան-Ալիև հանդիպումը ԱՄՆ պետքարտուղար Բլինքենի մասնակցությամբ, Մյունխեն, 18-ը փետրվարի

Միրզոյան Բայրամով հանդիպումը Բլինքենի միջնորդությամբ, Վաշինգտոն, մայիսի 1-4

Էրիկա Օլսոնին և ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ, կովկասյան բանակցությունների հարցով ավագ խորհրդատու Լու Բոնոյին. քննարկվել են տարածաշրջանային անվտանգության հարցերը[17]:

Հաջորդ օրը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունում (USAID) կայացավ ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի հանդիպումը ԱՄՆ ՄԶԳ կառավարչի տեղակալ Էրին Մոքիի հետ[18]: ԱՄՆ այցի շրջանակներում Մհեր Գրիգորյանը նաև հանդիպեց թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության հարցերով ԱՄՆ փոխպետքարտուղար Թոդ Ռոբինսոնի հետ[19], ինչպես նաև ԱՄՆ գանձապետարանի քարտուղարի տեղակալ Ուոլի Ադեյեմոյին[20]:

Հայաստանում Մհեր Գրիգորյանը հունիսի 27-ին ընդունել է ԱՄՆ պետդեպարտամենտի Միջազգային անվտանգության և զենքի չտարածման բյուրոյի միջուկային էներգիայի առևտրային մրցունակության գծով ավագ խորհրդական Ջասթին Ֆրիդմանի գլխավորած պատվիրակությանը՝ քննարկելով միջուկային էներգետիկայի ոլորտում համագործակցության հնարավոր ուղղությունների հարցը[21]:

Եվս երկու աշխատանքային այց ԱՄՆ իրականացրել է ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը հուլիս և դեկտեմբեր ամիսների ընթացքում: Իր երկու այցերի ընթացքում Գրիգորյանը հանդիպել է ԱՄՆ նախագահի Ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանի հետ[22]:

Ակնհայտ է, որ 2023 թ. Միացյալ Նահանգների պաշտոնյաների ակտիվ շփումները ՀՀ պաշտոնյաների հետ պայմանավորված էին հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման հարցում Ամերիկայի շահագրգռվածության հետ: Վաշինգտոնը փորձում է օգտագործել իր տրամադրության տակ եղած բոլոր գործիքները, որպեսզի օգնի կողմերի միջև խաղաղության պայմանագրի կնքմանը: Կարելի է պնդել, որ սա 1992 թվականից ի վեր ամերիկյան դիվանագիտության ամենաակտիվ փուլն է Հարավային Կովկասում, և արտաքին հանգամանքները հոգուտ ԱՄՆ-ի են գործում: Հարավային Կովկասում ստեղծվել է աշխարհաքաղաքական մի միջավայր, որին, կարծես թե, Վաշինգտոնը սպասել է գրեթե երեք տասնամյակ:

Հղում

1 Secretary Blinken's Meeting with Armenian Prime Minister Pashinyan and Azerbaijani President Aliyev, https://www.state.gov/secretary-blinkens-meeting-with-armenian-prime-minister-pashinyan-and-azerbaijani-president-aliyev/, (մուտք՝ 01. 12.2023):

2 Մամուլի հաղորդագրություն, https://www.mfa.am/hy/press-releases/2023/05/04/pressrelease/11994, (մուտք՝ 04.12.2023):

3 Secretary Antony J. Blinken at the Bilateral Peace Negotiation Closing Session with Armenian Foreign Minister Ararat Mirzoyan and Azerbaijani Foreign Minister Jeyhun Bayramov, https://www.state.gov/secretary-antony-j-blinken-at-the-bilateral-peace-negotiation-closing-session-with-armenian-foreign-minister-ararat-mirzoyan-and-azerbaijani-foreign-minister-jeyhun-bayramov/,(մուտք՝04.12.2023):

4 Մամուլի հաղորդագրություն, https://www.mfa.am/hy/press-releases/2023/06/29/arm_aze/12069:

5 Azerbaijan Signals Conditions For U.S.-Mediated Talks With Armenia, https://www.azatutyun.am/a/32740251.html:

6 Արարատ Միրզոյանը մասնակցել է «Ժողովրդավարության արդյունքները» համաժողովին, https://www.mfa.am/hy/press-releases/2023/09/20/fm_democracy/12214:

7 ՀՀ ԱԳ նախարարի հանդիպումը ԱՄՆ Պետքարտուղարի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով օգնականի հետ, https://www.mfa.am/hy/press-releases/2023/09/22/fm_us/12229:

8 Administrator Samantha Power Arrives in Armenia, https://www.usaid.gov/news-information/press-releases/sep-25-2023-administrator-samantha-power-arrives-armenia:

9 Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն ընդունել է ԱՄՆ ՄԶԳ տնօրենի տեղակալին, https://www.gov.am/am/news/item/15674/:

10 Արայիկ Հարությունյանն ընդունել է ԱՄՆ ՄԶԳ պատվիրակությանը, https://www.gov.am/am/news/item/15672/:

11 Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն ընդունել է ԱՄՆ ՄԶԳ Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի ղեկավարին, https://www.gov.am/am/news/item/15701/:

12 ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանն ընդունել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ղեկավարի գլխավորած պատվիրակությանը, https://www.gov.am/am/news/item/15633/:

13 Հայկ Կոնջորյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով ԱՄՆ-ում է, www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=18722&year=2023&month=05&day=11&lang=arm:

14 Միացյալ Նահանգները հայ ժողովրդի կողքին է. ԱՄՆ սենատոր Գերի Փիթերսը՝ ՀՀ ԱԺ նախագահին, www.parliament.am/news.php? cat_id=2&NewsID=19341&year=2023&month=09&day=25&lang=arm:

15 Ռուբեն Ռուբինյանն ընդունել է Հարավային Եվրոպայի եւ Կովկասի հարցերով ԱՄՆ փոխպետքարտուղարի տեղակալին, www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=19506&year=2023&month=10&day=25&lang=arm:

16 Ռուբեն Ռուբինյանն ընդունել է ԱՄՆ կոնգրեսական Ջո Ուիլսոնին, www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=19669&year=2023&month=11&day=19&lang=arm:

17 Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը Վաշինգտոնում հանդիպել է ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալի և ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահի հետ, https://www.gov.am/am/news/item/15517/:

18 Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը հանդիպել է ԱՄՆ ՄԶԳ կառավարչի տեղակալին, https://www.gov.am/am/news/item /15522/:

19 Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը հանդիպում է ունեցել թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության հարցերով ԱՄՆ փոխպետքարտուղարի հետ, https://www.gov.am/am/news/item/15521/:

20 Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է ԱՄՆ գանձապետարանի քարտուղարի տեղակալին, https://www.gov.am/am/news/item/15520/:

21 Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն ընդունել է ԱՄՆ պետդեպարտամենտի Միջազգային անվտանգության և զենքի չտարածման բյուրոյի ավագ խորհրդականի գլխավորած պատվիրակությունը, https://www.gov.am/am/news/item/15578/:

22 ԱԽ քարտուղարն աշխատանքային այցով կմեկնի Վաշինգտոն, https://www.seco.am/information/press_releases/650?lang=hy, (մուտք՝ 01.2024):

Ռուս-չինական հարաբերությունները նոր աշխարհակարգում

Արփի Աբրահամյան
Քաղաքագիտության և ազգային անվտանգության հարցերի մասնագետ

Ռուս-չինական հարաբերությունները թևակոխել են նոր դարաշրջան:

2023-ի մարտի 21-ին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նախագահ Սի Ցզինպինը և ՌԴ նախագահ Վ.Վ.Պուտինը արել են համատեղ հայտարարություն համապարփակ գործընկերության և ռազմավարական փոխգործակցության խորացման վերաբերյալ[1]: Կողմերը հաստատել են, որ երկկողմ հարաբերությունները զարգանում են.

2001-ի հուլիսի 16-ի Ռուսաստանի Դաշնության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև բարիդրացիության, բարեկամության և համագործակցության պայմանագրի հիման վրա[2]:

Ռուսաստանի Դաշնության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության 2021-ի հունիսի 28-ի[3] համատեղ հայտարարության հիման վրա, որը ընդունվել է երկու երկրների միջև բարիդրացիության, բարեկամության և համագործակցության պայմանագրի ստորագրման քսանամյակի առթիվ:

Ռուսաստանի Դաշնության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նոր դարաշրջան մտնող միջազգային հարաբերությունների և գլոբալ կայուն զարգացման վերաբերյալ համատեղ հայտարարության հիման վրա, որը հրապարակվել է 2022 թվականի փետրվարի 4-ին[4]:

Համաձայն հայտարարության՝ համապարփակ գործընկերության և ռազմավարական փոխգործակցության ռուս-չինական հարաբերությունների ամրապնդումն ու խորացումը, նոր դարաշրջան մտնելը արտաքին ազդեցությունից անկախ ռազմավարական ընտրություն է, որը հիմնված է կողմերից յուրաքանչյուրի ազգային առանձնահատկությունների վրա և համապատասխանում է հիմնարար շահերին, որոնք չեն ենթարկվում արտաքին գործոնների ազդեցությանը:

Կողմերը պատրաստակամություն են հայտնել վճռականորեն պաշտպանելու միջազգային համակարգը, միջազգային իրավունքի վրա հիմնված աշխարհակարգը և միջազգային հարաբերությունների հիմնարար նորմերը՝ հիմնված ՄԱԿ-ի կանոնադրության նպատակների և սկզբունքների վրա: Կողմերը մտադիր են.

- ամուր փոխադարձ աջակցություն ցուցաբերել միմյանց հիմնարար շահերը պաշտպանելու համար, առաջին հերթին՝ ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, անվտանգությունը և զարգացումը,

– հավատարիմ մնալով փոխշահավետության սկզբունքին՝ խորացնել և ընդլայնել գործնական համագործակցությունը արդիականացման գործընթացում համատեղ զարգացման և բարգավաճման նպատակով:

- խթանել բազմաբևեռ աշխարհակարգին, տնտեսական գլոբալիզացիային և միջազգային հարաբերությունների ժողովրդավարացմանը, նպաստել ավելի արդար և ռացիոնալ ձևով գլոբալ կառավարման զարգացմանը:

Չինական կողմը դրական է գնահատում միջազգային հարաբերությունների արդար, բազմաբևեռ համակարգ ձևավորելու ռուսական կողմի կառուցողական և հետևողական ջանքերը: Ռուսաստանը շահագրգռված է կայուն և բարգավաճ Չինաստանով, իսկ Չինաստանը՝ ուժեղ և հաջողակ Ռուսաստանով:

Կողմերը կոչ են անում միջազգային հանրությանը կոլեկտիվ քննարկումների և համատեղ գործողությունների սկզբունքի հիման վրա ակտիվորեն մասնակցել անվտանգության գլոբալ կառավարմանը, ապահովել կայուն անվտանգություն՝ օգտագործելով համապատասխան միջազգային մեխանիզմներ:

Կողմերը դեմ են յուրաքանչյուրի ներքին գործերին արտաքին ուժերի միջամտությանը, որ մի պետություն իր արժեքները պարտադրի այլ պետությունների, ժողովրդավարությունն ու ազատությունը օգտագործի որպես քաղաքական գործիք՝ այլ պետությունների վրա ճնշում գործադրելու համար:

Կողմերը խորապես մտահոգված են միջազգային անվտանգության ոլորտում առկա լուրջ մարտահրավերներով. ոչ մի պետություն չպետք է ապահովի իր անվտանգությունը այլ պետությունների անվտանգության հաշվին:

Համաձայն հայտարարության՝ ՌԴ-ն և ՉԺՀ-ն կշարունակեն սերտ համագործակցությունը տարածաշրջանային և գլոբալ անվտանգության հարցերի շուրջ՝ ամրապնդելու համար ՇՀԿ-ի (ШОС) դերն ու ազդեցությունը նրա տարածքում խաղաղության, անվտանգության և կայունության ապահովման գործում:

Բանակցություններ Մոսկվայում, մարտի 20-22, 2023 թ.

Ռուսաստանը բարձր է գնահատում Չինաստանի կողմից ԲՐԻԿՍ (БРИКС) XIV գագաթնաժողովի հաջող հյուրընկալումը: Կողմերը ասոցիացիայի մյուս անդամների հետ պատրաստ են իրականացնել BRICS-ի նախորդ գագաթնաժողովների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները, խորացնել գործնական համագործակցությունը բոլոր ոլորտներում:

ՌԴ և ՉԺՀ-ն մտադիր են զարգացնել համագործակցությունը Ռուսաստան-Հնդկաստան-Չինաստան» և Ռուսաստան-Չինաստան-Մոնղոլիա» ձևաչափերի շրջանակներում, ամրապնդել փոխգործակցությունը Արևելյան Ասիայի տարածաշրջանում (ASEAN-ի ասոցիացիա)[5]:

Կողմերը վճռական են ուժեղացնելու համակարգումը G20-ի և այլ բազմակողմ մեխանիզմների շրջանակներում, խրախուսել G20-ին՝ արձագանքելու միջազգային ֆինանսական և տնտեսական ոլորտում առկա մարտահրավերներին, բարելավել համաշխարհային տնտեսական կառավարման համակարգը արդար և ռացիոնալ հիմունքներով: Կողմերը պաշտպանում են Աֆրիկյան միության լիիրավ անդամակցությունը G20-ին[6], որը տեղի է ունեցել 2023-ի սեպտեմբերի 9-10-ը Նյու Դելիում՝ Հնդկաստանի նախագահությամբ:

Ավելին՝ 2023-ի նոյեմբերի 22-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը մասնակցել է G20-ի եզրափակիչ գագաթնաժողովին (on-line):

Համաձայն հայտարարագրի՝ ՌԴ-ն և ՉԺՀ-ն խորացնում են միջպետական հարաբերությունները և զարգացնում երկխոսության մեխանիզմները տարբեր ոլորտներում:

Կողմերը մտադիր են իրականացնել ապրանքների և ծառայությունների ռուս-չինական առևտրի որակյալ զարգացման ճանապարհային քարտեզը, աջակցել էլեկտրոնային առևտրի զարգացմանը, բարձրացնել առևտրատնտեսական համագործակցության շրջանակն ու արդյունավետությունը՝ ապահովելով արտադրական, մատակարարման և լոգիստիկ շղթաների կայունությունը և անվտանգությունը:

Վ. Պուտինը իր ելույթում նշել է. «Չինաստանը դարձել է ՌԴ առաջատար գործընկերը Հեռավոր Արևելքի տնտեսական ներուժի զարգացման գործում. Վլադիվոստոկի ազատ նավահանգստի շրջանակներում Չինաստանի ներդրողները 10,8 միլիարդ դոլար ընդհանուր արժողությամբ 52 ծրագիր են իրականացնում»[7]:

Մինչև 2030-ը Ռուսաստանն ու Չինաստանը մտադիր են ապրանքաշրջանառությունը հասցնել 300 միլիարդ դոլարի[8]:

Կողմերը մտադիր են սերտ գործընկերություն իրականացնել էներգետիկ ոլորտում, աջակցել ռուսական և չինական ձեռնարկություններին նավթի և գազի, ածխի, էլեկտրաէներգիայի, միջուկային և այլ ոլորտներում էներգետիկ համագործակցության նախագծերի իրականացման գործում:

Էներգետիկ փոխազդեցությունը ընդլայնվում է: Ռուսաստանը Չինաստանին նավթի, բնական գազի՝ ներառյալ հեղուկ գազ (СПГ), ածխի և էլեկտրաէներգիայի ռազմավարական մատակարարն է: Ատոմային էներգիայի օբյեկտների շինարարությունն ընթանում է ըստ ժամանակացույցի. ռուսական բիզնեսն ի վիճակի է բավարարել Չինաստանի տնտեսության կողմից էներգառեսուրսների աճող պահանջարկը:

Գազի մատակարարումների ընդհանուր ծավալը մինչև 2030 թվականը կկազմի առնվազն 98 միլիարդ խորանարդ մետր՝ գումարած 100 միլիոն տոննա հեղուկ բնական գազը: Ռուսաստանից «Սիբիրի ուժը-2» («Сила Сибири – 2») գազատարը Մոնղոլիայով դեպի ՉԺՀ կապահովի 50 միլիարդ խորանարդ մետր գազի հուսալի, կայուն մատակարարումներ[9]:

Կողմերը կամրապնդեն փոխգործակցությունը տրանսպորտի ոլորտում, կբարելավեն միջսահմանային ենթակառուցվածքները, կավելացնեն անցակետերի թողունակությունը և կապահովեն դրանց կայուն գործունեությունը:

Մտադիր են շարունակել աջակցությունը Ռուսաստանի Դաշնության տարածքով Չինաստան-Եվրոպա տարանցման երկաթուղային և ծովային բեռնանափոխադրումների զարգացմանը և բարձրացնել դրանց արդյունավետությունը:

Բարելավվում են տրանսպորտային և լոգիստիկ ենթակառուցվածքները:

Շահագործման են հանձնվել Բլագովեշչենսկ-Հեյհե (Благовещенск – Хэйхэ) ճանապարհային և Նիժնելենինսկոյե-Տունցզյան (Нижнеленинское- Тунцзян) երկաթուղային կամուրջները, որոնք կնվազեցնեն Ռուսաստանի և Չինաստանի միջև ապրանքների փոխադրման ծախսերն ու ժամանակը, կընդլայնեն առևտրի աշխարհագրությունը և կմեծացնեն Ասիա-խաղաղօվկիանոսյան երկրների (АТР- Азиатско-Тихоокеанский регион) հետ տարանցման ծավալները[10]:

Ռուսաստանի եվրոպական մասում ձևավորվում է միջազգային «Հյուսիս-Հարավ» միջանցք՝ կապելով բալթյան և Արկտիկայի ռուսական նավահանգիստները Պարսից ծոցի ափերի և Հնդկական օվկիանոսի նավահանգիստների հետ. հյուսիսային Մուրմանսկ քաղաքից մինչև իրանական Բանդար Աբբաս ապահովվելու է անխափան երկաթուղային հաղորդակցություն[11]:

Միևնույն ժամանակ Կենտրոնական Սիբիրից հարավային ուղղությամբ երկաթուղային երթուղիներ են կառուցվում դեպի Չինաստան, Մոնղոլիա, Հնդկական և Խաղաղ օվկիանոսների նավահանգիստներ[12]:

Նախատեսվում է Մոնղոլիայի տարածքով Ռուսաստանից Չինաստան նոր գազատարի կառուցման նախագծի ուսումնասիրման և համաձայնեցման աշխատանքների իրականացումը:

Կողմերը կխորացնեն փոխշահավետ համագործակցությունը տիեզերական ոլորտում. տիեզերական գործունեության ոլորտում համագործակցության զարգացման ծրագրի իրականացման շրջանակներում՝ «Ռոսկոսմոս» («Роскосмос») տիեզերական գործունեության պետական կորպորացիայի և Չինաստանի ազգային տիեզերական կազմակերպության միջև 2023–2027 թթ.:

Կողմերը հաստատում են եվրասիական մեծ գործընկերության համակարգված ձևավորման և «Մեկ գոտի, մեկ ճանապարհի» կառուցման հիման վրա եվրասիական մայրցամաքի ժողովուրդների երկկողմ և բազմակողմ ինտեգրացիոն գործընթացների զարգացումը: Չինական կողմը աջակցում է ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների խթանմանը, ռուսական կողմը՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը: Համատեղ ջանքեր են գործադրում՝ միավորելու ԵԱՏՄ զարգացման ծրագրերը և «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը՝ եվրասիական տարածաշրջանում փոխկապակցվածությունն ամրապնդելու և առևտրի համաձայնագրերի իրականացման ուղղությամբ:

2023-ի հոկտեմբերի 17-18-ը Պեկինում անցկացվել է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» համաժողովը. ավելի քան 150 երկիր և 30 միջազգային կազմակերպություն ստորագրել են «Մեկ գոտի և մեկ ճանապարհ» ծրագրի շրջանակներում համագործակցության փաստաթղթեր[13]:

Անդրադառնալով միջուկային զենք ունեցող հինգ պետությունների ղեկավարների համատեղ հայտարարությանը (միջուկային պատերազմը և սպառազինությունների մրցավազքը կանխելու մասին)՝ ՌԴ-ն և ՉԺՀ-ն կոչ են անում այդ երկրներին գործնականում հետևել հայտարարության հիմնական դրույթներին, նվազեցնել միջուկային պատերազմի ռիսկը և միջուկային զենք ունեցող պետությունների միջև ցանկացած զինված հակամարտության հավանականությունը:

Կարևորվում է այն, որ միջուկային ուժերը չպետք է միջուկային զենք տեղակայեն իրենց ազգային տարածքներից դուրս և պետք է դուրս բերեն արտերկրում տեղակայված բոլոր միջուկային զենքերը:

Կողմերը հաստատում են, որ միջուկային զենքի չտարածման մասին պայմանագիրը միջուկային զինաթափման միջազգային մեխանիզմների և միջուկային զենքի չտարածման միջազգային ռեժիմի հիմնաքարն է:

Համաձայն հայտարարության՝ վերահաստատում են իրենց հավատարմությունը սույն պայմանագրով ստանձնած պարտավորություններին և կշարունակեն համակարգել ջանքերը պայմանագրի պահպանման և



Ստորագրված պայմանագրի փոխանակում, Մոսկվա, մարտի 22, 2023 թ.

ամրապնդման ուղղությամբ՝ ի շահ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման:

Կողմերը լուրջ անհանգստություն են հայտնում Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ռազմավարական կայունության վրա ունեցած հետևանքների և ռիսկերի վերաբերյալ՝ կապված ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ավստրալիայի (АУКУС) միջև անվտանգության եռակողմ գործընկերության ստեղծման և միջուկային սուզանավերի կառուցման նրանց ծրագրերի հետ:

Կողմերը վերահաստատում են Իրանի միջուկային համաձայնագրի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2231 բանաձևի կատարման շուտափույթ վերսկսման կարևորությունը և բոլոր շահագրգիռ կողմերին կոչ են արել ընդունել քաղաքական որոշումներ, որոնք կնպաստեն բանակցությունների վերսկսման դրական արդյունքին:

Ռուսաստանն ու Չինաստանը մտահոգություն են հայտնում ԱՄՆ-ի կողմից գլոբալ հակահրթիռային պաշտպանության համակարգեր ստեղծելու և դրա տարրերն աշխարհի տարբեր շրջաններում տեղակայելուն ուղղված ջանքերի ակտիվացման, ինչպես նաև ասիական-խաղաղօվկիանոսյան և եվրոպական տարածաշրջաններում միջին և ավելի կարճ հեռահարության ցամաքային հրթիռների տեղակայման առիթով:

Ռուսաստանը և Չինաստանը դեմ են առանձին երկրների՝ արտաքին տարածքը զինված առճակատման ասպարեզի վերածելու փորձերին, ինչպես նաև դեմ են ռազմական գերակայության հասնելուն և այն ռազմական գործողությունների համար օգտագործելուն: Կոչ են անում ԱՄՆ-ին դադարեցնել միջազգային և տարածաշրջանային անվտանգության և գլոբալ ռազմավարական կայունության խաթարումը:

Ռուսական կողմը վերահաստատում է իր հավատարմությունը «մեկ Չինաստանի» սկզբունքին, ընդունում է, որ Թայվանը ՉԺՀ-ի անբաժանելի մասն, դեմ է Թայվանի անկախությանը ցանկացած ձևով և վճռականորեն աջակցում է չինական կողմի գործողություններին՝ պաշտպանելու իր պետական ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը:

Բանակցություններ Մեկ գոտի, մեկ ճանապարհ ծրագրի շրջանակում, Պեկին, 17-ը հոկտեմբերի, 2023 թ.

Ռուսաստանը ողջունում է Չինաստանի պատրաստակամությունը՝ դրական դերակատարություն ունենալու ուկրաինական ճգնաժամի քաղաքական և դիվանագիտական կարգավորման գործում և չինական կողմի կազմած «Ուկրաինական ճգնաժամի քաղաքական կարգավորման վերաբերյալ Չինաստանի դիրքորոշման մասին» փաստաթղթում շարադրված կառուցողական նկատառումները:

Կողմերը նշում են, որ երկխոսությունը ուկրաինական ճգնաժամի կայուն լուծման լավագույն միջոցն է. միջազգային հանրությունը պետք է աջակցի այդ ուղղությամբ գործադրվող կառուցողական ջանքերին:

Կողմերը կոչ են անում դադարեցնել բոլոր այն քայլերը, որոնք նպաստում են լարվածության սրմանը և ռազմական գործողությունների երկարաձգմանը, դեմ են ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը շրջանցող բոլոր միակողմանի պատժամիջոցներին:

ՌԴ-ն և ՉԺՀ-ն պայմանավորվել են ուժեղացնել համագործակցությունը «գունավոր հեղափոխություններին», սահմանային կազմակերպված և տնտեսական հանցագործություններին հակազդելու գործում:

Կողմերը պնդում են, որ ՆԱՏՕ-ն պետք է խստորեն պահպանի հիշյալ կազմակերպության տարածաշրջանային և պաշտպանական բնույթի հետ կապված պարտավորությունները: Նրանք կոչ են անում ՆԱՏՕ-ին հարգել այլ պետությունների ինքնիշխանությունը, նրանց անվտանգությունն ու շահերը, քաղաքակրթական, պատմական և մշակութային բազմազանությունը և օբյեկտիվ ու անաչառ վերաբերվել այլ պետությունների խաղաղ զարգացմանը:

ՌԴ նախագահը անդրադարձել է ՆԱՏՕ-ի գործունեությունը Ասիա տեղափոխելու Արևմուտքի փորձերին: Նրա խոսքով՝ այս կազմակերպության գործունեությունը դուրս է գալիս Հյուսիսատլանտյան բլոկի կանոնադրական նպատակներից. «Դա կոչվում է Հյուսիսատլանտյան դաշինք, ի՞նչ պետք է անի Ասիայում, իրենք իրենց ներքաշում են Ասիա, սադրում են այնտեղ, թեժացնում իրավիճակը, ստեղծում տարբեր կազմերով ռազմաքաղաքական նոր դաշինքներ»[14]:

Կողմերը դեմ են Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում փակ բլոկային կառույցների, դաշինքային քաղաքականության և հակադիր ճամբարների ձևավորմանը: Ռազմական անվտանգության հարցերում կողմերին մտահոգում է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ ՆԱՏՕ-ի կապերի շարունակական ամրապնդումը, կազմակերպության կողմից տարածաշրջանային խաղաղության և կայունության խաթարումը:

ՌԴ-ն և ՉԺՀ-ն անդրադարձել են Միացյալ Նահանգների հնդկախաղաղօվկիանոսյան տարածաշրջանի խաղաղության և կայունության վրա բացասական ազդեցությանը՝ պայմանավորված սառը պատերազմի մտածելակերպով:

Կողմերը հանդես են գալիս Մերձավոր Արևելքում խաղաղության և կայունության պաշտպանության օգտին, աջակցում են տարածաշրջանի երկրներին ռազմավարական անկախության ամրապնդման և հրատապ խնդիրները երկխոսության և խորհրդակցությունների միջոցով լուծելու գործին:

Կողմերը ողջունում են Սաուդյան Արաբիայի և Իրանի միջև երկխոսության միջոցով հարաբերությունների կարգավորումը, պաղեստինյան հիմնախնդրի համապարփակ և արդարացի կարգավորումը՝ հիմնված երկու պետության սկզբունքի վրա:

Կողմերը աջակցում են Սիրիայի ինքնիշխանությանը, անկախությանը և տարածքային ամբողջականությանը, Լիբիայի ինքնիշխանության, անկախության և տարածքային ամբողջականության պաշտպանությանը և նպաստում են քաղաքական կարգավորման համապարփակ գործընթացի առաջխաղացմանը, որն իրականացվում և ղեկավարվում է հենց լիբիացիների կողմից:

Կողմերը նշում են Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության դրական ներդրումը տարածաշրջանային անվտանգության ապահովման գործում: Կողմերը կամրապնդեն շփումները Պարսից ծոցի տարածաշրջանում՝ ձևավորելու համար Պարսից ծոցի տարածաշրջանի հավաքական անվտանգության ճարտարապետությունը:

Կողմերը պատրաստ են ամրապնդել փոխհամակարգումը Կենտրոնական Ասիայի երկրներին աջակցելու համար՝ ապահովելու իրենց ինքնիշխանությունը և ազգային զարգացումը, չեն ընդունում «գունավոր հեղափոխություններ» ներմուծելու փորձերը և արտաքին միջամտությունը տարածաշրջանի գործերին:

Կամրապնդեն շփումներն ու համակարգումը աֆրիկյան պետություններին առնչվող հարցերի շուրջ, կշարունակեն համագործակցությունը Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացման գործում և կշարունակեն խթանել կայունությունն ու բարգավաճումը տարածաշրջանում:



Լուսանկարահանում բանակցություններից հետո , Պեկին, 17-ը հոկտեմբերի 2023 թ.

Փաստաթղթում նշվում է, որ Ռուսաստանի և Չինաստանի հարաբերությունները ռազմաքաղաքական դաշինք չեն, դաշինքային բլոկ կամ առճակատման բնույթ չեն կրում և ուղղված չեն երրորդ երկրների դեմ:

Հասկանալի է, սակայն, որ այս հարաբերությունների առանցքում զարգանում է ռազմաքաղաքական-տնտեսական հզոր դաշինք, որի շուրջ ձևավորվում է տարածաշրջանային պետությունների, քաղաքական միավորների, դաշինքների կոնսենսուս:

Այսպիսի հզորության առկայությամբ է ՌԴ նախագահը հայտարարում, որ ռուս-չինական հարաբերություններն աշխարհում կայունության էական երաշխիքներից են[15]:

Փաստաթղթում առանցքային է այն փաստը, որ ՌԴ և ՉԺՀ ազգային արժույթները փոխադարձ առևտրում ավելի ու ավելի են օգտագործվում: Երկու երկրների միջև ապրանքաշրջանառության երկու երրորդն իրականացվում է ռուբլով և յուանով[16]:

Ինչպես նշում է Վլադիմիր Պուտինը. «Մենք կողմ ենք չինական յուանի օգտագործմանը Ռուսաստանի Դաշնության ու Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների միջև վճարումների ժամանակ: Վստահ եմ, որ վճարումների այս ձևերը կզարգանան ռուս գործընկերների և երրորդ երկրների՝ նրանց գործընկերների միջև, ինչպես արդեն ասացի, յուանով»[17]:

Սա մարտահրավեր է հավաքական Արևմուտքին, ՆԱՏՕ անդամ երկրներին. տնտեսապես «կոտրելու է Արևմուտքի մեջքը», խորացնելու է ԵՄ անդամ երկրների միջև անհամաձայնությունները թե՛ տնտեսական, թե՛ ուկրաինական ճգնաժամի հետ կապված հարցերում և այլն:

Այսինքն՝ ՌԴ-ն և ՉԺՀ-ն իրենց որակում են որպես նոր աշխարհակարգի գլխավոր ճարտարապետներ, ժամանակակից աշխարհում խոշոր պետությունների հարաբերությունների օրինակ են՝ նպաստելով նոր տեսակի միջազգային հարաբերությունների, նոր աշխարհակարգի ձևավորմանը:

Հղումներ

1 Совместное заявление Российской Федерации и Китайской Народной Республики об углублении отношений всеобъемлющего партнёрства и стратегического взаимодействия, вступающих в новую эпоху, http://www.kremlin.ru/supplement/5920 /24.12.2023/:

2 Договор о добрососедстве, дружбе и сотрудничестве между Российской Федерацией и Китайской Народной Республикой, http://www.kremlin.ru/supplement/3418:

3 Совместное заявление Российской Федерации и Китайской Народной Республики к двадцатилетию подписания договора о добрососедстве, дружбе и сотрудничестве между Российской Федерацией и Китайской Народной Республикой, http://static.kremlin.ru/media/events/files/ru/hkwONx0FSpUGgXPaRU3xUHRmkRneSXIR.pdf:

4 Совместное заявление Российской Федерации и Китайской Народной Республики о международных отношениях, вступающих в новую эпоху и глобальном устойчивом развитии, http://www.kremlin.ru/supplement/5770 /24.12.2023/:

5 Совместное заявление Российской Федерации и Китайской Народной Республики об углублении отношений всеобъемлющего партнёрства и стратегического взаимодействия, вступающих в новую эпоху, http://www.kremlin.ru/supplement/5920 /24.12.2023/:

6 Տես նույն տեղում:

7 Տես նույն տեղում:

8 Российско-китайские переговоры, http://www.kremlin.ru/events/president/news/70748 /24.12.2023/:

9 Посол КНР заявил о планах РФ и Китая активизировать контакты на всех уровнях, https://www.gazeta.ru/politics/news/2023/12/19/21956971.shtml?updated:

10 Российско-китайские переговоры, http://www.kremlin.ru/events/president/news/70748:

11 Տես նույն տեղում:

12 Международный форум «Один пояс, один путь», http://kremlin.ru/events/president/news/72528 /24.12.2023/:

13 Տես նույն տեղում:

14 Полный текст программного выступления Си Цзиньпина на церемонии открытия 3-го Форума высокого уровня по международному сотрудничеству в рамках «Пояса и пути», https://rus.yidaiyilu.gov.cn/news/focus/334508.htm /24.12.2023/:

15 Отношения Китая и России -- один из существенных гарантов стабильности в мире -- В. Путин, https://rus.yidaiyilu.gov.cn/news/focus/338910.htm:

16 Տես նույն տեղում:

17 Տես նույն տեղում:

18 Российско-китайские переговоры, http://www.kremlin.ru/events/president/news/70748:

19 Տես նույն տեղում:

Տիգրան Դևոյանցը Առաջին Հանրապետության անվտանգության ապահովման դիրքերում: Պայքար ադրբեջանա-թուրքական նկրտումների դեմ (մաս 2)

Վանիկ Հրանտի Վիրաբյան
Պատմ. գիտ. դոկտոր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

Տիգրան Դևոյանցի ընտանիքը բազմանդամ է եղել. նա ունեցել է չորս եղբայր և երեք քույր: 1903 թ. ընդունվել է Երևանի ռուսական գիմնազիա: Ուսումնառության տարիներին մասնակցել է ցարական իշխանությունների կողմից հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման և հայկական դպրոցների փակման հետ կապված աշակերտական հուզումներին, որի պատճառով հեռացվել է դպրոցի երրորդ դասարանից և փախել է Թիֆլիս: Նրա փոխարեն ձերբակալվել է ավագ եղբայրը՝ Հակոբը, որը 5-6 ամսվա բանտարկությունից հետո ոստիկանապետին 5000 ռ. կաշառք տալով՝ ազատվում է բանտից, իսկ հետագայում Սիմֆերոպոլում գնդակահարվում է բոլշևիկների կողմից[30]:

Ըստ 1915-1916 թթ. և 1918-1920 թթ. Տ. Դևոյանցի գործունեության՝ արխիվային փաստաթղթերի և վավերագրերի մեր կատարած հետազոտությունը ակնհայտորեն վկայում է, որ վերջինիս հայթայթած տեղեկությունները եթե իրատեսորեն հաշվի առնվեին, հնարավոր կլիներ խուսափել շատ սխալներից, և կարիք չէր լինի զուր տեղը մեղքի առյուծի բաժինը բարդել ռուսական բանակի հետախուզական համակարգում անհամեմատ ավելի համեստ աստիճանակարգ զբաղեցրած հետախույզի վրա, ինչպես դա փորձեցին անել գեներալ Պ. Օգանովսկին, Կ. Սասունին և ուրիշներ:

Տիգրան Դևոյանցի կարծիքով՝ պետությունն, առհասարակ, նրա ինքնուրույնությունն ու քիչ թե շատ լիարժեք արտաքին քաղաքականությունը, և վերջին հաշվով, ազգային-պետական անվտանգությունն անհնարին է պատկերացնել՝ առանց այդ համակարգի բաղկացուցիչը կազմող հետախուզական և հակահետախուզական գործի հիմնավոր կազմակերպման: Այդ տեսանկյունից նա շատ դիպուկ է նկատել. «Հետախուզությունը պետության աչքն ու ականջն է: Հետախուզական բաժանմունքը խաղաղ ժամանակ կը պատրաստի պատերազմի համար եւ անդադար կուսումնասիրէ թշնամիի ուժերու դասաւորութիւնը, զօրաշարժի յատակագիծը, զօրքերու տեսակներն ու որակը, ամրութիւնները, հաղորդակցութեանց միջոցները, կապը, մթերքներն ու ռազմամթերքի պահեստները, բերքը, ժողովրդի տնտեսական եւ առողջապահական վիճակը, անոր տրամադրութիւնը, ազգութիւններու փոխյարաբերութիւնը եւ անոնց վերաբերմունքը դէպի պետութիւնը, պահեստի զօրամասերը, հրամանատարներու բնաւորութիւնը, գետերու խորութիւնը տարւայ չորս եղանակներուն, անցնելիք տեղերը, նոր շինուող ճանապարհները, օդակայանները եւ այլն, եւ այլն: Հետախուզական բաժանմունքին կը վերաբերի նաեւ աշխատիլ փչացնել թշնամիի հաղորդակցութեանց միջոցները, պայթեցնել ռազմամթերքի պահեստները, այրել պաշարները, հիւանդութիւններ տարածել մանրէներու միջոցաւ, ապստամբութիւններ, ներքին խռովութիւններ առաջ բերել թշնամիի երկրի ներսը, կապվիլ անոնց հեռախօսի եւ հեռագրի թելերու հետ, բանալ ծածկագիր հեռագիրները: Մի խօսքով, հմուտ հետախոյզը իր գործելակերպի եւ գործունեութեան մեջ ոեւէ սահման չունի, նա պետք է շարժի պահանջի և պայմաններու համեմատ»[31]:

Հայկական հետախուզական ծառայությունները խրթին խնդիրների առջև կանգնեցին նամանավանդ Վրաստանում և Ադրբեջանում, Թուրքիայում և այլուր, ուր գործ ունեին անհամեմատ ավելի մեծ նյութական-ֆինանսական ռեսուրսներ ունեցող վրաց-ադրբեջանա-թուրքական հատուկ ծառայությունների հետ, որոնք ավելի շահեկան վիճակում էին գտնվում: Այդ իրավիճակը շատ պատկերավոր է բնութագրել ինքը՝ Տիգրան Դևոյանցը, որն իր «Կեանքիս դրուագներից» հուշաշարում գրում է. «Իսկ բիւդճեն այնքան պզտիկ էր, այնքան աննշան՝ հայկական ռուբլիներով, որ Հայաստանից դուրս համարեայ արժէք չունէր: Մինչդեռ այդ ճիւղերին պէտք է յատկացնէին շատ խոշոր գումարներ՝ երկրի ինքնապաշտպանութեան համար, որովհետեւ այդ երկու ճիւղերը պէտք է կազմէին Հայաստանի պզտիկ պետութեան աչքերը եւ ականջները, դիւանագիտական դիմումների հիմքը»[32]:

Զինվորական նախարարության ղեկավարությունը՝ ի դեմս գեներալ-լեյտենանտ Հ. Հախվերդյանի, նախարարների խորհրդի գործերի կառավարչին ուղղված 1920 թ. մայիսի 10-ի գրությամբ (№ 7988) խնդրում էր գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետ կապիտան Դևոյանցի տրամադ-

ության տակ բաց թողնել 657 հազար ռուբլի գումար՝ շեշտելով, որ այդ գումարը ծայրահեղ անհրաժեշտություն է[33]: Նշված գրության վրա զինվորական նախարարը մակագրել էր՝ խնդրելով արագացնել նշված խնդրի լուծումը (№ 7629/2634)[34]:

Դա, ըստ էության, ապացուցվեց նաև Առաջին հանրապետության տարիներին, որի ժամանակ Տ. Դևոյանցի և նրա զինակիցների կողմից, մասնավորապես Կ. Պոլսում նրա խմբի ծավալած հետախուզական գործունեության շնորհիվ հայթայթվեցին արժեքավոր տեղեկություններ, որոնք պատշաճ ուշադրության և գնահատման դեպքում կարող էին էապես զգաստացնել սևրյան-արևմտյան մտասևեռում որդեգրած ՀՀ քաղաքական-պետական այրերին և նրանց նպատակամղել ձեռնարկելու հարկ եղած ռազմաքաղաքական նախապատրաստություններն ընդդեմ հայկական սահմանի ողջ երկայնքով տեղաբաշխվող և Հայաստանի դեմ պատերազմի նախապատրաստվող թուրքական բանակի:

Մեկ այլ առիթով Դևոյանցը ավելացնում էր հետևյալը. «Երեւանում գտնուող Ատերբէյճանի դիւանագիտական միսիան ոչ միայն անսովոր արագութեամբ յայտնում էր Թիֆլիս եւ Բագու Հայաստանի զօրքերի դասաւորութեան եւ զօրքերի ու ռազմամթերքի փոխադրութեանց մասին, այլեւ իր ձեռքի տակ ունեցած էր Հայաստանի գաղտնի հրամանագրերն ու հրահանգները»:

Հարկ է հատուկ արձանագրել, որ այս դեպքում հայ հետախույզները պարզապես հաջող են գործել և ձեռք են բերել կարևորագույն տեղեկատվություն, ինչը գործնականում ծառայեց Ադրբեջանի դեմ Գ. Նժդեհի գլխավորած զորամասերի վճռորոշ հաղթանակին:

Վկայակոչելով *Տ. Դևոյանցին*՝ կարելի է փաստել, որ երբ Ադրբեջանը խոշոր քանակությամբ զորքեր էր կենտրոնացնում Զանգեզուրի դեմ՝ ի դեմս հայկական հետախուզական ծառայության, ՀՀ կառավարությունը կարողացավ ձեռք բերել ռազմավարական մեծ արժեք ներկայացնող տեղեկատվություն, ինչն օգնեց հակառակորդի հետ ռազմաքաղաքական հակամարտությունում հասնել ծանրակշիռ արդյունքների: Այդ մասին *Տ. Դևոյանցը* շեշտում է հետևյալը. «Հայաստանի կառավարութիւնը կարողացաւ կաշառել Ատերբէյճանի զօրքերի սպայակոյտի պետին, որ մի վրացի գնդապետ էր: Վերջինս ոչ միայն տուեց մեզ Ատերբէյճանի զօրքերի դասաւորութիւնը, այլեւ դասաւորեց թաթարական զօրամասերը այնպիսի ձեւով, որ մեր բանակը շատ հեշտութեամբ ջարդեց նրանց եւ գրաւեց նրանց թնդանօթները, գնդացիրները եւ բաւական ռազմամթերք»[35]:

Տիգրան Դևոյանցը ընդգծում է հետևյալը. «Բարեբախտաբար, Հայաստանի կառավարութիւնը օրը օրին այս հեռագիրների միջոցով իրազեկ էր պահում թշնամու ծրագիրներին եւ ըստ այնմ էլ՝ միջոցների դիմում: Եթե Ատերբէյճանի դիւանագիտական ներկայացուցիչը չէզոք գօտիի վրայ չթալանուէր «աւազակների» կողմից, Թիֆլիսի վրայով Բագուից ուղարկուած գումարով միայն Շարուր-Նախիջեւանի շրջանի թաթարական բանակի թիւը պետք է հասնէր 10.000-ի. նոյն համեմատութեամբ պէտք է աւելանար կռուող թաթարների թիւը Բէյուկ-Վիդիի, Զանգիբասարի եւ այլ շրջանների մէջ, եւ ամբողջ Հայաստանի հայութիւնը պիտի գտնուեր բնաջնջման սպառնալիքի տակ»[36]:

Տիգրան Դևոյանց

Հայաստանի կառավարութիւնը անհրաժեշտ է գտնում, հիմնուած հաստատ տեւեալների վրա, ցաւ ի սիրտ յայտարարել, որ իր գործողութիւններով *Պ. Թեքինսկին*[37] անձամբ նպաստել է Հայաստանի Հանրապետութեան և երկրի անդորրութեան դէմ ուղղուած շարժումներին»[38]: Այդ մասին շատ հստակ փաստում է *Տ. Դևոյանցը* իր նշանավոր *«Կեանքիս դրուագներից»* հուշաշարքում. «Երեւանի մէջ Ազրբէյճանը շատ լաւ լրտեսական ցանց ունէր կազմակերպած»[39]:

Այս տեսակետն է պաշտպանում նաև *Ս. Վրացյանը*. «Խան-Թեքինսկիի Երևան հասնելու առաջին իսկ օրից Հայաստանի արտաքին գործոց նախարարությունը ծանոթ էր նրա ծածկագրին. *Խան-Թեքինսկիի* ուղարկած և ստացած բոլոր հեռագրերը նախքան իրեն հասնելը հայտնի էին դառնում Հայաստանի կառավարությանը: 1920 թ. մայիսին, Ազրբեջանի խորհրդայնացումից հետո, այդ հեռագրերը հրատարակեցին առանձին գրքույկով. «Գաղտնի փաստաթղթեր» (Ազրբեջանի դավադրական գործունեության մի էջ), 1920 թ., Երևան, հրատ. «Ռազմիկի»[40]: Մեկ այլ տեղ *Ս. Վրացյանը* ավելացնում է. «Անկախութիւնների հենց առաջին օրերից Ադրբէյջանը հանգիստ չթողեց Հայաստանը: Թուրքերի աջակցութեամբ ազրբէյջանցիները աշխատում էին գրգռել Հայաստանի թուրք-թաթարական բնակչութիւնը հայկական իշխանութեան դէմ: Ազրբէյջանեան դէսպան *Խան Թեքինսկին* գլխաւոր դերակատարն էր այդ գործում: Երկրի զանազան կողմերում նա պահում էր գործակալներ, առատ դրամ էր ստանում Բագուից եւ գաղտնի տեղեկութիւններ էր հաղորդում իր կառավարութեան: Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան պաշտօնեայ Պ.Եակուլեանը շուտով բացեց շիֆրը, որով *Խան-Թեքինսկին* հեռագիրներ էր փոխանակում իր կառավարութեան հետ»[41]: Այդ մասին է գրում նաև *Աբր. Գյուլխանդանյանը*. «Թէեւ արտաքնապէս պահ-

ւում էին բարեկամական յարաբերութիւններ եւ այդ երկու երկիրները միմեանց մօտ ներկայացուցիչներ ունէին, սակայն Ադրբէջանի կառավարութիւնն ամէն ճիգ էր գործադրում, որպէսզի Հայաստանի մէջ եղած մահմեդական տարրերը չենթարկուեն հայկական կառավարութեան: Եւ այդ նպատակով Ադրբէջանը աջակցում էր նրանց զէնքով, զինուորական ղեկավարներով, մանաւանդ դրամով»[41]:

ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղված 1919 թ. մայիսի 24-ի գաղտնի գրությամբ (N 0084) գլխավոր շտաբի պետի և հետախուզական բաժնի պետի պաշտոնակատարներ Ալ. Շնեուրը և Հ. Խան-Կոտուրսկին հայտնում էին, որ գլխավոր շտաբի կողմից շտապ Էրզրում, Մուշ, Վան և Թուրքահայաստանի մյուս քաղաքներն է գործուղվել շտաբս-կապիտան Տ. Դևոյանցը՝ զինվորական գերատեսչության գծով 1919 թ. հուլիսի 18-ի հրամանով, որը ստորագրել էին կառավարության նախագահ Ալ. Խատիսյանը և զինվորական նախարար գեներալ-մայոր Ք. Արարատյանը. «Զինվորական նախարարության գլխավոր շտաբի բաժնի պետի օգնական շտաբս-կապիտան Տիգրան Դևոյանցը ստանում է կապիտանի կոչում»[42]: Գրության մեջ ասվում էր, որ միաժամանակ նրա կողմից կարող են կատարվել արտաքին գործերի նախարարության առաջադրած խնդիրները, եթե այդպիսիք նրան առաջիկայում կհանձնարարվեն՝ խնդրելով այդ մասին շտապ հաղորդել գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունք[43]: Ուղևորության վերջնական նպատակը Կ. Պոլիս հասնելն էր և այնտեղ հետախուզական գործը կազմակերպելը:

Իր հուշագրությունում Տ. Դևոյանցը պատմում է որոշ մանրամասներ, որոնք չափազանց հետաքրքիր են և հնարավորություն են տալիս ամբողջականացնել շատ պատմաքաղաքական դրվագներ: Տ. Դևոյանցը գրում է. «Ես գնդապետ Շնաուրի («Շնաուրը» Սարդարապատի ճակատամարտից հայտնի Ալեքսանդր Շնեուրի աղավաղված ազգանունն է - Վ. Վ.) հետ պէտք է ուղեւորուէի Պոլիս եւ Կիլիկիա՝ որոշ զինուորական միսիայով: Վերջը Շնաուրը պէտք է վերադառնար Հայաստան, իսկ ես պէտք է մնայի Պոլիս հետախուզական գործը կազմակերպելու համար: Գնդ. Շնաուրը վերադարձաւ Երեւան, իսկ ես մնացի Պոլիս: Կարճ ժամանակուայ մէջ կապ հաստատեցի դաշնակից պետութեանց ինդելիջենս սերվիսների հետ: Հայաստանի կողմից թէ՛ ապրելու եւ թէ՛ հետախուզական գործը վարելու համար ամսական ինձ տալիս էին ընդամենը 20 լիրա (այս տվյալը չի հաստատվում Տ. Դևոյանցի վկայությամբ, քանզի Փարիզ գեներալ Գաբրիել Ղորղանյանին (Կորգանովին) ուղարկված 1919 թ. սեպտեմբերի 29-ի զեկուցագրում (այն ուղարկվում է նաև ՀՀ հետախուզական բաժանմունքի հասցեով - № 26) այլ տվյալի ենք հանդիպում. այնտեղ վերջինս փաստում է, որ ինքը օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար գնդապետ Շնեուրից բնակվելու և աշխատանքների կատարման համար ստացել է 60.000 ռուբլի՝ կովկասյան բոներով, որը կազմում էր 450 թղթյա լիրա, այսինքն՝ ամիսը՝ 225 լիրա)[44]: Յուսահատուած՝ առաջին շաբաթն իսկ ուզում էի հեռագրել Հայաստան, որ ինձ յետ կանչեն: Բայց այդ միջոցին ինձ այցելեց դաշնակիցների հետախուզական բաժանմունքի մի ներկայացուցիչը ու առաջարկեց իրենց հաշուին կազմակերպել ամբողջ Արեւելքի հետախուզական գործը: Համաձայնուեցի մի պայմանով, որ իմ բոլոր ստացած տեղեկութիւնները ուղարկեմ նաեւ Հայաստան: Համաձայնուեցին»[45]: Կ. Պոլսում Տ. Դևոյանցը, համագործակցելով մի շարք հետախույզների և մասնավորապես հետագայում Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրի աշխատակից Հայկազ Ղազարյանի հետ, որն այդ ժամանակ անգլիական զինվորական ծառայության մեջ էր գտնվում, սկսում են միասին հայթայթել և զանազան եղանակներով Հայաստան ուղարկել արժեքավոր տեղեկատվություն Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների, տարածաշրջանային այլևայլ քաղաքական փոփոխությունների ու շրջադարձերի մասին. «Տեղեկատուութեան տեսակէտով շատ արժէքաւոր էին Ե. Թ.-ի[46] ամեն օր ինձ տուած լուրերը: Ամէն օր նա տալիս էր ինձ պատճէնները Թուրքիոյ բոլոր նախարարութիւնների գաղտնի նամակների, հրահանգների, հեռագիրների՝ ստացուած ու ուղարկուած: Այդ միջոցին սկսուել էր «Միլլի» շարժումը, եւ Պոլսոյ կեդրոնական կառավարութիւնը աչքակապուկ էր խաղում դաշնակիցների հետ հակառակ այն բանին, որ նա էլ ուժ էր տալիս գաղտնի կերպով այդ շարժումին»[47]: Սակայն ամեն ինչ հարթ չէր ընթանում, երբեմն էլ առաջանում էին քաշքշուկներ ու նույնիսկ ընդհարման հասցնող լարված իրավիճակներ, առավել ևս երբ դա տեղի էր ունենում բուն հետախուզական աշխատանքներն իրականացնող խմբի ներսում, որի ղեկավարներից մեկը Կ. Պոլսում Տ. Դևոյանցն էր՝ իր 2 օգնականներով, թարգմանչով՝ անգլերենի, ֆրանսերենի, թուրքերենի իմացությամբ[48]: Տ. Դևոյանցի մի հաղորդագրությունից ակնհայտ է դառնում, որ տարաձայնություններ կային Կ. Պոլսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ֆերնանդ Թախթաջյանի[49] հետ, որն այդ հետախուզական ամփոփագրերն ուղարկում էր Երևան: Ըստ Տ. Դևոյանցի՝ դա հետևանք էր այն բանի, որ Երևան ուղարկած տեղեկատվությունն ավելի արժեքավոր էր, քան այն, ինչ Ֆ. Թախթաջյանը ներկայացնում էր ՀՀ ռազմաքաղաքական ղեկավար մարմիններին: Դա էլ հանգեցնում էր նախանձոտ, կասկածամիտ վերաբերմունքի միմյանց փոխհարաբերություններում, որն էլ, անկասկած, վնասում էր հետախուզական գործին: Ֆ. Թախթաջյանը բազմիցս դիմել էր Երևան Տ. Դևոյանցին Կ. Պոլսից ետ կանչելու պահանջագրով[50], որն էլ բացասական երևույթ էր հետախուզական գործի առօրյայում, քանզի ավելորդ քաշքշուկները ընդամենը անդամալուծում էին պետականորեն կարևոր գործի՝ հետախուզության կազմակերպումը և նրա հետագա ուղղորդումը հոգուտ հայրենիքի: Տ. Դևոյանցը կարևորում էր տեղեկատվության ճիշտ օգտագործումը. «Կարեւոր լուրերի առաքումը միայն այն ժամանակ արժէք կունենայ, երբ այդ լուրերը լաւ կը դասաւորուին եւ օգտակար կը դարձուին նրանց, որոնք կազմում են պետութեան աչքերն ու ականջները»[51]:

Հետաքրքրություն են ներկայացնում Կ. Պոլսից Փարիզ գեներալ Գ. Ղորղանյանին ուղարկված մի շարք տեղեկատվական ծրարներ, որոնցում կարևոր փաստեր են ներկայացվում թուրքական զորքերի տե-

դաշարժերի, նրանց ձեռնարկումների և նախապատրաստությունների մասին, որոնք ընդգծված հակահայկական բնույթ ունեին: Գ. Ղորղանյանին ուղղված 1919 թ. օգոստոսի 18-ի զեկուցագրում Տ. Դևոյանցը փաստեր էր բերում Վանի շրջանում 11-րդ դիվիզիայի գործունեության (4 մարտկոցների հետ), ինչպես նաև 2-3 զինամթերքի պահեստների կազմակերպման, Դիլմանի և Ուրմիայի շրջանում քուրդ Սմկոյի և Իսմայիլ-աղայի մասին (1500 զինված քուրդ և այլն)[52]:

1919 թ. օգոստոսի 19-ին գեներալ Գ. Ղորղանյանին ուղղված զեկուցագրում նշում է, որ Բրուսում (Պրուս - մասնագիտական գրականության մեջ այս պատմական տեղանվան առավել կիրառական տարբերակը «Բուրսա» անվանումն է - Վ. Վ.) իշխանությունը աստիճանաբար հանձնվում է երիտթուրքերին, որոնք գաղտնի կազմակերպում են չեթնիկների խմբեր: Տ. Դևոյանցն ավելացնում է, որ Բրուսի երիտթուրքերից դաշնակիցների համար իրենց գործողություններով հատկապես վտանգավոր են իրավաբան Օսման Նուրին, «Էրթողրուլ» թերթի խմբագիր Ջիյա Շաքիրը, հայտնի չեթնիկ Դավուդը, որոնք եգիպտոսյան հայտնի հեղափոխական Աբդուլ-Կադիրի հետ ձգտում են շարժում առաջ բերել անգլիացիների դեմ: Նրանք բազմիցս հայտարարել են, որ Մ. Քեմալը իրենց լիազորել և հանձնարարել է կազմակերպել աշիրեթական խմբեր, որ իրենք համագործակցում են նաև Ադրբեջանի հետ, ուր ապաստան են գտել շատ թուրք և արաբ «հեղափոխականներ»՝ տեղեկություն տալով նաև Վան-Ալաշկերտի շրջանում Ք[Գ]ոնիայից տեղափոխված չեթնիկների մասին՝ Հուսեյն փաշայի գլխավորությամբ, որոնք կառավարությունից խոշոր գումարներ են ստացել[53]:

Ինչպես պարզվում է կապիտան Տ. Դևոյանցի 1919 թ. օգոստոսի 19-ի զեկուցագրից (8a/ 8a-6)՝ ուղղված գեներալ Ղորղանյանին, Կ. Պոլսում հետախուզական գործերը կապված էին մեծ բարդությունների հետ, և դրանցից հնարավորինս ապահովագրվելու նպատակով նա փորձում է ապավինել վերջինիս օգնությանը: Զեկուցագրում նշվում էր, որ Կ. Պոլիս է գործուղվել ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի կողմից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանը դեռևս ընդունված չէ դաշնակիցների կողմից՝ զանազան պատահականություններից ապահովագրվելու նպատակով (մասնավորապես՝ Թուրքիայից) ինքը թախանձագին խնդրում է, որ եթե հնարավոր է, ուղարկել որևիցե վկայական դաշնակցային հրամանատարության կողմից (լինի անգլիական, ֆրանսիական, իտալական, հունական), որպեսզի ինքը լեգալ ձևով ապրի և հարաբերություններ հաստատի անգլիական հետախուզության հետ (կապիտան Նեու), որին տալիս էր տեղեկությունների ամփոփագրերը՝ դա համարելով ոչ բավարար: Դևոյանցը գտնում է, որ վկայականը ուղարկվի Կ. Պոլիս ժամանող հայկական պատվիրակության միջոցով՝ կապի ապահովման նկատառումներից ելնելով[54]:

Կապիտան Տ. Դևոյանցը Ղորղանյանին ուղարկած 1919 թ. օգոստոսի 23-ի գաղտնի զեկուցագրով (8a/ 8a-5) տեղեկացնում է, որ Տրապիզոնի վիլայեթում բոլոր թուրքական կուսակցությունները միավորվել են ու գործում են «Միություն և առաջադիմություն» կուսակցության հրահանգների համաձայն, իսկ Էրզրումի համագումարից հետո խնդիր է դրվել հակադրվել թուրքական տարածքները գրավելու բոլոր փորձերին՝ ընդգծելով, որ Տրապիզոնում, Ռիզեում, Ունիայում և ընդհանրապես Լազիստանում բնակչությունը հոյակապ կազմակերպված է և կապեր ունի Աջարիայի ու Ադրբեջանի հետ: Դևոյանցը փաստում է վրացիների հակահայկական գործունեության մասին և ուշագրավ վկայակոչումներ է բերում Կ. Պոլսում Վրաստանի ներկայացուցիչ Ռիխցլաձեի գործունեության մասին, որը հաճախակի հանդիպում էր ստամբուլյան Չուրուկ Սուլի Մահմուդ փաշայի հետ՝ բանակցություններ վարելով երիտթուրքերի հետ հայերի դեմ համատեղ գործողությունների վերաբերյալ: Ասվածին Դևոյանցը հավելում է, որ իբր թե ընդառաջ գնալով տեղական թուրք բնակչության խնդրանքին՝ խոչընդոտելու հայկական պետության կազմավորման գործին, կառավարությունում որոշվել է Գոնիայի (Քոնիա) և Անկարայի շրջաններում գտնվող 50.000 և 40.000 փախստական թուրքերին ու քրդերին համապատասխանաբար տեղափոխել Վանի, Մուշի և Բիթլիսի շրջանները: Դևոյանցը հետաքրքիր փաստեր է ներկայացնում թուրքական զորքերի տեղաշարժի մասին, որոնք Վանից նետվել են Բայազետի հովիտ (33-րդ, 126-րդ, 127-րդ գնդերը), իսկ 9-րդ դիվիզիայի 34-րդ, 50-րդ, 51-րդ գնդերը (յուրաքանչյուրում՝ 2000-2500 սվին) տեղաբաշխվել էին Էրզրում-Հասան-Կալայի շրջանում, 3 դիվիզիա՝ Օլթիի ուղղությամբ և այլն: 36-րդ դիվիզիայի 106-րդ, 107-րդ և 108-րդ գնդերը 15-րդ կորպուսի կազմի մեջ չեն մտել, 36-րդ դիվիզիան ապրիլի վերջերին Էրզրումի վրայով անցել է Սվազ և դրանից այն կողմ՝ այդ ընթացքում հարկադրելով տեղական հարուստներին դրամ հավաքել զորքի համար[55]:

Գ. Ղորղանյանին ուղարկված 1919 թ. օգոստոսի 24-ի զեկուցագրում Տ. Դևոյանցը (N 10-8a/8a–4) փաստեր է ներկայացնում «Միլլի Թաշկիլաթ» շարժման կազմակերպման մասին Դիարբեքիրում, Սղերթ[դ]ում, Նարզանում և Բիթլիսում, որտեղ Աթար Հաքքի բեյը, Շեվքի բեյը, Սմիռնայի ժանդարմերիայի նախկին պետ գնդապետ Ազիզ Փիրինջի Սիթքին և այլք Հայաստանի կազմավորմանը հակադրվելու համար դրամ են հավաքել, կազմակերպել չեթնիկների խմբեր, իսկ Մուշի շրջանի քրդերի առաջնորդ Մուսա բեկը Մ. Քեմալի կողմից նշանակվել է Մուշի հովտում գտնվող բոլոր քրդական ուժերի հրամանատար: Դևոյանցը միաժամանակ տվյալներ էր ներկայացնում 11-րդ կովկասյան դիվիզիայի և 18-րդ, 33-րդ, 34-րդ գնդերի, 3-րդ կորպուսի 5-րդ դիվիզիայի, 15-րդ կորպուսի մասին և այլն[56], որոնք չնայած ունեին որոշ կիսատ-պռատություն և լրացման, ճշգրտման կարիք էին զգում, սակայն միանգամայն բավարար էին, որ սթափեցնող դեր կատարեին և ազդակ լինեին ՀՀ զինվորական-քաղաքական իշխանություններին լուրջ նախապատրաստությունների համար:

Որոնումները շարունակվում էին, հետախուզությունը Կ. Պոլսում փորձում էր լիարժեք կայանալ, ինչքանով որ դա հնարավոր էր առկա պայմաններում, որոնք շատ սահմանափակ էին, հատկապես՝ ֆինանսական առումով: Այդ մասին կարելի է դատել Տ. Դևոյանցի 1919 թ. նոյեմբերի 3-ի մի գրառումից, որում

նա նշում է, որ ինքը սեպտեմբերի 26-ին գնդապետ Շնեուրից նամակ է ստացել, որով վերջինս հայտնում էր, որ շուտով կուղարկի 150.000 ռ.: Տ. Դևոյանցը հայտնում է, որ մինչև դրամի հասնելը ինքը ռուսական դիվանագիտական միսիայից պարտք է վերցրել 4000 ֆրանկ, որպեսզի աշխատանքները չդադարեն[57]: Դևոյանցը ջանադրությամբ լծվում է գործի, և շուտով արդյունքները երևում են: Ինչպես ակնհայտ է դառնում Տ. Դևոյանցի՝ գեներալ Գ. Ղորղանյանին Փարիզ ուղարկված 1919 թ. հոկտեմբերի 25-ի զեկուցագրից, այդ ժամանակ արդեն հաջողվել էր հրաշալի փոխհարաբերություններ հաստատել անգլիացիների հետ, որոնցից նաև փաստաթուղթ է ստանում, որ ինքը ծառայում է գերագույն կոմիսարիատին կից՝ հայտնելով, որ գավառներում սեփական գործակալների միջոցով իր անունից կազմված ամփոփագրերը հանձնվում էին անգլիական ներկայացուցչին, որը հեռագրով դրանք հայտնում էր Կ. Պոլսի շտաբ, որտեղից էլ հաղորդագրությունների պատճենները փոխանցվում էին իրեն, և ինքը չէր ցանկանա այս ամենը թողնել ֆինանսական բարդությունների պատճառով[58]: Կ. Պոլսում հետախուզական աշխատանքների կազմակերպումն ընթանում էր բարդություններով, քանզի Դևոյանցի գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթային ապահովվածությունը բավարար չէր: Դա երևում է Տ. Դևոյանցի՝ գեներալ Գ. Ղորղանյանին ուղարկված 1919 թ. նոյեմբերի 7-ի զեկուցագրից (N 53), որում վերջինիս հայտնում էր, որ ձեռքի տակ ունի միայն զինվորական նախարարությունից ստացված միայն մեկ փաստաթուղթ, և այն էլ կազմված է այնպես, որ անհարմար է ցույց տալ, քանզի այնտեղ գրված է, որ «գործուղվում է Կ. Պոլիս՝ դիվանագիտական ներկայացուցչություն և Կիլիկիա՝ հայկական զորքերի գլխավոր հրամանատարի մոտ»[59]: Վերը նշվածից ելնելով՝ Դևոյանցը գեներալ Ղորղանյանից խնդրում էր հայկական պատվիրակության անունից կամ իր կողմից իրեն տրամադրել անհրաժեշտ փաստաթուղթ, որը հնարավորություն կտա ապահովել ավելի լավ կապ[60]:

1919 թ. դեկտեմբերի մոտերքը Տ. Դևոյանցը ՀՀ զինվորական նախարարության ղեկավարության պահանջագրով ետ է կանչվում Կ. Պոլսում իր կարևոր առաքելությունից, ուր նա պետք է մնար մինչև 1920 թ. մայիսը, սակայն հանգամանքներն ավելի զորեղ են գտնվում: Այս խնդրի վերաբերյալ որոշ կարևոր փաստերի ենք հանդիպում Տ. Դևոյանցի 1919 թ. նոյեմբերի 11-ին գեներալ Գ. Ղորղանյանին ուղարկած հերթական զեկուցագրից, որով հայտնում էր, որ Կ. Պոլիս է ժամանել պորուչիկ Խան-Կոտուրսկին, որը հայտնել է, որ իրենց մոտ տեղի է ունենում ազգայնացում (նկատի ունի երևի կառավարական հիմնարկների հայացման գործընթացը, որի պատճառով շատ ռուսալեզու սպաներ զորացրվեցին հայկական բանակից), և գնդապետ Շնեուրը, գեներալներ Նազարբեկովը և Հախվերդովը զեկուցագրեր են ներկայացրել պաշտոնաթողության մասին, որ գլխավոր շտաբը իբր թե լուծարվում է և այդ իսկ պատճառով էլ որոշել են լուծարել հետախուզական ծառայությունը Թուրքիայում՝ բավարարվելով միայն «դիվանագիտական հետախուզությամբ», որի համար 15 օր հետո Երևանից կուղարկեն 300 լիրա՝ հրահանգավորումով մեկնել



Ալեքսանդր Շնեուր, ՀՀ 1-ին հանրապետության հետախուզության և հակահետախուզության հիմնադիրներից

Երևան: Դևոյանցը այդ կապակցությամբ սրտնեղում է՝ ասելով, որ դեռ պարտքեր ունի, որ քանի դեռ պաշտոնական գրություն չի ստացել, ինքը մինչև դեկտեմբերի 5-ը ստիպված կլինի մնալ Կ. Պոլսում[61]: Այնուամենայնիվ, Տ. Դևոյանցը շարունակում է դժվարություններով լի աշխատանքը՝ հետևողականորեն և նախանձախնդրորեն ձեռնարկելով հարկ եղած հետախուզական միջոցառումները, փորձում է հետևել, թե ինչ չափով են իր նախաձեռնած աշխատանքները իրականություն դառնում: Ինչպես պարզ է դառնում Դևոյանցի՝ գեներալ Ղորղանյանին Փարիզ ուղարկված 1919 թ. նոյեմբերի 17-ի զեկուցագրից (N 55), նա երկու անգամ հանդիպել է գնդապետ Ալ. Շնեուրի օգնական, պորուչիկ Խան-Կոտուրսկու հետ և պարզել է, որ իր կողմից Երևան ուղարկված նյութը չի մշակվում, չի հաղորդվում արտաքին գործերի նախարարին, այլ ընդամենը զորամասերի համարները մտցվում են ամփոփագրերի մեջ և շաբաթը մեկ հաղորդվում զորամասերին: Դևոյանցը բողոքում է դրա դեմ՝ ասելով, որ Երևանում չկան գործը հասկացող մարդիկ, էլ ինչ խոսք կարող է լինել աշխատանքի գնահատման մասին, և դա այն դեպքում, երբ ինքը շարունակում է չքավորանալ՝ վախենալով մարդկանց աչքերին նայել, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների բնակվելու ու աշխատանքի համար ծախսելով ընդամենը 735 լիրա, որի մասին արդարացնող փաստաթղթերը «Դաշնակցություն» կուսակցության վկայականի, կատարված բոլոր ծախսաթղթերի հետ՝ անհրաժեշտ ստորագրություններով, նոյեմբերի 1-ը ուղարկվել են Երևան՝ վավերացված տեղական ռազմական միության սպաների, ՀՅԴ կուսակցության կողմից:

Հետախուզական աշխատանքները փակուղի են մտնում, ու ինչպես պարզվում է գնդապետ Ա. Շնեուրի՝ կապիտան Տ. Դևոյանցին ուղարկած հոկտեմբերի 28-ի նամակից, ֆինանսավորումը կատարվել է միայն հոկտեմբեր ամսվա համար, հետևաբար նրան մնում էր մտածել ետ գնալու մասին[62]: Ինչպես պարզվում է ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովի որոշմամբ ստեղծված

գերագույն դատական ատյանի 1920 թ. ապրիլի 3-ի նիստում կապիտան Վահագն Մուրադյան[ց]ի տված ցուցմունքներից, ինքն է առաջարկել ետ կանչել Դևոյանցին Կ. Պոլսից այն պատճառաբանությամբ, որ իբր թե իրենք «անոր ստանալիք տեղեկութիւնները» կարող էին ստանալ Ադրբեջանի և Թիֆլիսի իրենց ընկերներից[63], ինչն այնքան էլ չէր համապատասխանում իրողությանը և ապացուցվում է Կ. Պոլսից Տ. Դևոյանցի կողմից գեներալ Գ. Ղորղանյանին Փարիզ ուղարկված զեկույցներից, որոնց մի մասը սույն հրապարակման հավելվածում ներկայացված է: Վ. Մուրադյանցը վերը նշված դատական ատյանի նիստում պնդում է, որ Դևոյանցին Կ. Պոլսից ետ կանչելով՝ իրենք նյութական տեսակետից շահում էին, քանզի «Տիգրանը Պոլիս աւելի քան ամսական 33.000 ռուպլի կը ծախսէր, մեր պիւտճէին կէսը գրեթէ»[64], ինչը ակնհայտ չափազանցություն էր: Մուրադյանը կարծում էր, որ «Տիգրան՝ որպէս բազվեդկայի գործէն լավ հասկացող մը» մնար Երևանում՝ ասելով, որ ի հակառակ իր կարծիքի՝ Ալ. Շնեուրը, որին պաշտոնի բերումով ենթարկվում էր Դևոյանցը, պնդել էր Կ. Պոլսում Տ. Դևոյանցի մնալու հարցում: Ի վերջո, ինչպես պնդում է Վ. Մուրադյանը ՀՅԴ դատական ատյանի նիստում, այն բանից հետո, երբ ինքը հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնում փոխարինում է Ալ. Շնեուրին, իր կողմից հրաման է արձակվում Կ. Պոլսից Դևոյանցին ետ կանչելու մասին[65], ինչն էլ տեղի է ունենում: Ստեղծված իրավիճակում Տ. Դևոյանցը նախապատրաստվում էր դեկտեմբերի 1-5-ը ընկած ժամանակահատվածում մեկնել Բաթումի, որպեսզի նոր պարտքերի և կազմակերպական բնույթի դժվարությունների առաջ չկանգնի՝ որպես պահեստային տարբերակ ունենալով Սևաստոպոլ մեկնելու հնարավորությունը (Սևաստոպոլ, Բազարնայա հրապարակ, N 1)[66]: Իսկ գեներալ Գ. Ղորղանյանին ուղարկած 1919 թ. նոյեմբերի 23-ի զեկուցագրում Տ. Դևոյանցը Կ. Պոլսից դեպի Երևան իր ետ կանչելու կապակցությամբ դժկամություն արտահայտելով՝ միաժամանակ վրդովվում էր, որ ֆինանսական հարցերի խնդրում ինքն աջակցություն չստացավ Կ. Պոլսի ոչ մի հայկական հաստատությունից, նաև Թախթաջյանից չստացավ անհրաժեշտ ջերմություն իր համար ողբերգական այդ օրերին, և այդ իրավիճակում ինքը խնդրում է Նորին Գերազանցությունից վարվել իր հետ, ինչպես նպատակահարմար կգտնի[67]: Ահա այսպես լուծարվեց հայկական հետախուզության խումբը Կոստանդնուպոլսում, դադարեցվեց վերջինիս օգտաշատ գործունեությունը:

Հետաքրքիր է նշել, որ Կ. Պոլսից մեկնելուց առաջ, ինչպես այդ մասին պատմում է իր հուշերում Տ. Դևոյանցը, դաշնակից պետություններից մեկը դիմում է նրան իրենց մոտ ծառայության անցնելու առաջարկով, սակայն հայ հետախույզը չի համաձայնվում՝ նախընտրելով աշխատել հայկական հետախուզական ծառայությունում և վերադաս մարմինների կարգադրությունները կատարել, հավատարիմ մնալ իրեն հանձնարարված գործին և հայրենիքի գաղափարին. «Պոլսից մեկնելուց առաջ մի դաշնակից պետութեան պատասխանատու ներկայացուցիչը ինձ փորձեց համոզել, որ հրաժարուեմ իմ Հայաստանի պաշտօնից, մնամ իրենց մօտ շատ լաւ ամսականով՝ իրենց հաշուին ամբողջ Արեւելքի հետախուզական գործը կազմակերպելու համար: Առաջարկում էր 10.000 տոլար ամսական բիւճէ: Ես կտրուկ կերպով մերժեցի: Երեւանը, իմ հայրենիքս, ինձ կանչում էին, պէտք է մեկնէի»[68]: Ճանապարհին անցնում էր Բաթումով, այնուհետև Թիֆլիսով, ուր նրան լավ հիշում էին, դեռևս թարմ էին Մետեխի բանտից փախչելու հիշողությունները[69]: Չնայած Տ. Դևոյանցը զինված էր ամեն տեսակի հանձնարարականներով անգլիական, ֆրանսիական սպայակույտի և մասնավորապես անգլիական հետախուզական ծառայությունների կողմից, որոնք նրան աջակցում էին Վրաստանի վրայով անցնելու և այլևայլ հարցերում, և ըստ այդմ էլ՝ նա համագործակցության մեջ էր գտնվում վերջիններիս հետ, այդուհանդերձ այդ միջոցին նրանք այդքան օգտակար չեղան, մանավանդ անգլիացիները, որոնք պատրաստվում էին հեռանալ Բաթումիից և Անդրկովկասից: Տ. Դևոյանցին դեպի Երևան հաջող ուղևորության հարցում օգտակար է լինում Բաթումիի ֆրանսիական հյուպատոսը և մասնավորապես Հայաստանում գտնվող ֆրանսիական ռազմական ներկայացուցչության աշխատակից կապիտան Ա. Պուադեբարը, որը նաև հետախուզական բաժանմունքի վարիչ էր: Նա Բաթումում ընդունում է Տ. Դևոյանցին և դեպի Երևան նրա ուղևորության ընթացքում իր սալոն-վագոնով կազմակերպում անցումը վրաց-հայկական սահմանով:

Դևոյանցը հայտնվում է Երևանում և սպասում հերթական ծառայողական նշանակմանը: Նա Երևանում ներկայանում է ընդհանուր սպայակույտի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետ, կապիտան Վահագն Գալուստի Մուրադյանին, որին համարում էր կանոնավոր կրթություն չստացած մեկը և լավ կարծիքի չէր նրա մասին[70], ինչը չէր համապատասխանում իրականությանը և ամենևին էլ չի հաստատվում համապատասխան փաստերով: Հետախուզական և հակահետախուզական բաժնի պետ Վ. Գ. Մուրադյանը նրան ուղարկում է Կարս՝ այնտեղի զորամասերի հետախուզությունը վարելու: Ինչպես նշում է Տ. Դևոյանցը, ինքն այդ վերաբերմունքից շատ հուսախաբ էր, որովհետև մինչև Կ. Պոլիս ուղևորությունը վարել էր ՀՀ պատերազմական նախարարության հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետի պաշտոնը և իր համար վիրավորական էր համարում նման նշանակումը, որը, մեր կարծիքով, շատ կարևոր էր, քանզի նրան էր վստահվում Կարսի անկյունաքարային նշանակություն ունեցող հանգույցը, իսկ այդ հանգամանքը չէր կարելի անկարևոր համարել և անտեսել: Թերևս այստեղ Տ. Դևոյանցը չափն անցնում էր՝ գտնելով, որ Վ. Մուրադյանը «չունէր եւ ոչ մի հետախուզական գործակալ, իսկ հակահետախուզական ճիւղի մէջ արձանագրուած էին 15-ի չափ գործակալներ, որոնք մտել էին այդտեղ միայն զինուորագրութիւնից ազատուելու համար ու միանգամայն անպէտք էին այդ գործի համար»[71]:

Այդուհանդերձ, հայկական հետախուզական ծառայությունը՝ ի դեմս Տ. Դևոյանցի, ունեցավ իր հենակետը Թուրքիայի սրտում՝ Կ. Պոլսում, որտեղից Հայաստան էր ուղարկվում քաղաքական տարբեր

փոփոխությունների, քեմալական ուժերի ձեռնարկումների և դաշնակիցների վերաբերմունքի ու դիրքորոշման հնարավոր վայրիվերումների մասին կարևոր տեղեկատվություն. «Լաւ էր, որ Պոլսից մեկնելուս միջոցին (1919 թ. վերջերին) այստեղ թողեցի մի կորիզ (Ժ. Ա.-ի գ[հ]լխաւորութեամբ, որը Կ. Պոլսից հունական «Աւերով» զրահաւորի ռադիոյի կայանի միջոցով եւ «Աւերովի» ծածկագրով հեռագրեր էր հաղորդում Երևան՝ գնդապետ Խօլթիին[72]), որը խոստացաւ պարբերաբար, առանց վարձատրութեան, Հայաստանի սիրոյն համար ուղարկել ինձ Հայաստանի հետ առնչութիւն ունեցող կարեւոր հետախուզական լուրեր: Այդ կորիզը հին, փորձուած հայ հետախոյզներից էր բաղկացած: Նրանք ծախսում էին ամսական տասնեակ հազար տոլարներ՝ աշխատելով դաշնակից պետութիւնների համար:

Երեւանում ստացայ այդ մարմնից առաջին ծրարը՝ վաւերական հեռագիրների պատճէններով, ծածկագիր Էրզրումից Պոլիս Կարաբէքիր Քեազիմ փաշայի՝ ուղարկուած պատերազմական նախարարին: Ամփոփեցի եւ տպագրելով N 14, սեպտեմբերին՝ խիստ գաղտնի ուղարկեցի իմ նախարարին, զօրամասերի պետերին եւ մի օրինակ էլ տուի կապ. Մ.-ին՝ մեր սպայակոյտի «պետին»: Այդ հեռագիրները ցոյց էին տալիս, թէ ինչ դասաւորութեամբ (N N գնդերի եւ դիվիզիաների), ինչ ուղղութեամբ եւ ե՞րբ թրքական ոյժերը պիտի յարձակուեն Հայաստանի վրայ ու գրաւեն Կարսը, Օլթին, Սարիղամիշը, Արդահանը, Իգդիրը եւ այլն: Այդ ամփոփումն ունեմ այսօր ձեռքիս տակ:

Մաթեմատիկական ճշդութեամբ հետագային գործադրուեց այդ հեռագիրների բովանդակութիւնը Հայաստանի նկատմամբ: Բայց ինչպէ՞ս ընդունուեց լուրը մէր պաշտօնական իշխանութեան կողմից: Լսեցի, որ մեր քաջ սպայակոյտի պետը անուանել էր ինձ խելագար, իսկ նախարարներից մեկն ասել էր. «Այդ Դեւոյեանցի ցնդաբանութիւններն են»»[73]: Չափազանց կարևոր է հստակ արձանագրել, որ դեռևս 1919 թ. հոկտեմբերի 6-ին գեներալ Գ. Ղորղանյանին ուղարկած զեկուցագրում (N 3) Տ. Դևոյանցը հենց Երևան ուղարկված այդ փաստաթղթի մասին է խոսում՝ ընդգծելով, որ կից ուղարկում է զինվորական մինիստրությունից (Թուրքիա) ձեռք բերված զորքերի տեղաշարժերի և այլնի մասին մի շարք հեռագրեր, որոնք ծածկագրված վիճակում փոխանակվել են թուրքական 15-րդ կորպուսի հրամանատար Ք. Կարաբեքիր փաշայի և ռազմական նախարարի միջև[74]:

Չափազանց դիտարժան է և իր ժամանակին դրա արժևորման դեպքում կարող էր կիրառական օգտակարություն ունենալ 1919 թ. նոյեմբերի 1-ի մի հետախուզական գաղտնի զեկույցը, որում Տիգրան Դևոյանցը ներկայանում է որպես «կապիտան Աշոտ», ինչը նրա բազմաթիվ ծածկանուններից մեկն է: Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթի իր հասցեատեղից Բաթումիի հյուպատոսի միջոցով Երևան՝ գլխավոր շտաբին առընթեր հետախուզական և հակահետախուզական բաժնին ուղարկված գաղտնի այս զեկույցում Տ. Դևոյանցը հույժ արժեքավոր հետախուզական տեղեկություններ է հաղորդում Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների և տարաբնույթ տեղաշարժերի մասին: Այսպես՝ տեղեկացնելով այն մասին, որ Էրզրումի կառավարությունը որոշել է չենթարկվել Փարիզի վեհաժողովի որոշումներին՝ չափազանց կարևորում է մի հանգամանք, այն է՝ թուրքական նոր դիվիզիաների վերստեղծման փաստը՝ ասելով, որ Հայաստանի դեմ-հանդիման ձևավորվել է և տեղաբաշխվել 5 դիվիզիա, որոնց առաջադրանքն է եղել գործել Կարսի դեմ և Բայազետի ուղղությամբ: Այդ դիվիզիաները, որոնք մտնում էին Ք. Կարաբեքիրի գլխավորած 15-րդ կորպուսի մեջ, որոնցից 3-րդ դիվիզիան, ըստ Դևոյանցի, գործելու էր Օլթիի ուղղությամբ, 9-րդ և 36-րդ դիվիզիաները՝ Էրզրում-Հասան-Կալա գծի վրա, 12-րդը՝ Խորասան-Քեթակ և 11-րդ դիվիզիան՝ Վան-Բրուս ուղղությամբ: Ըստ այդ զեկույցի՝ Էրզրումի մարզում, բացի այդ ամենից, բնակչությանը բաժանվել էր 60 հազար հրացան, իսկ Քոնիայում, Անգորայում, Կաստեմունիում, Բրուսում, Թալիկեսիրում, Պանդերմայում և այլուր ձևավորվում էին չեթնիկական խմբեր. 400 հոգուց բաղկացած 56-րդ դիվիզիան Բրուսում էր, Քոնիայի շրջանում գործում էր 20-րդ և 23-րդ դիվիզաներից կազմված 12-րդ կորպուսը՝ Քուչուկ Ջեմալ փաշայի գլխավորությամբ, որի շտաբի պետը բինբաշի Մուստաֆա բեյն էր, իսկ շտաբի պետը՝ գայմագամ Սեադդինը: Հայտնվում էր, որ ամենուր զինվորական զորաջոկատների կազմավորման գործընթացներ են ընթանում, որոնց հրազեն է տրվել[75]:

1919-1920 թթ. աշուն-ձմեռ ժամանակահատվածում Տ. Դևոյանցի կողմից Կ. Պոլսից ուղարկված և նրա բացակայության ժամանակ այստեղից ստացված հեռագրերի, զեկուցագրերի և ամփոփագրերի կարևորությունը հաստատում է նաև Ռ. Հովհաննիսյանը[76]: 1920 թ. սեպտեմբերի 28-ին Մ. Քեմալի անմիջական հրահանգով թուրքական զորքերը ավազակային հարձակման անցան Հայաստանի Հանրապետության դեմ նրա ռազմական ուժը և երկիրը անդամահատելու նպատակով: Եվ ինչպես փաստում է Ռուբեն Սաֆրաստյանը, վկայակոչելով մի շարք թուրքական հույժ գաղտնի և ծածկագիր փաստաթղթեր, այդպիսով իրականություն դարձավ Մ. Քեմալի դեռևս 1920 թ. փետրվարին առաջ քաշած գաղափարը Հայաստանի դեմ պատերազմ սկսելու վերաբերյալ, թե «կովկասյան պատը», այսինքն՝ Հայաստանը, հետևից պիտի քանդվի: Այդպես պիտի իրականանար վերջինիս գլխավոր մտահղացումը՝ դիվանագիտական ճակատում մեջտեղից վերացնել Հայաստանի Հանրապետությունը..., ինչը հաջողությամբ պսակվեց 1921 թ., երբ ստորագրվեցին Մոսկվայի ու Կարսի խայտառակ պայմանագրերը[77]:

1919 թ. մայիսին Տ. Դևոյանցը ձեռնամուխ է լինում իր հայտնի ուղևորությանը Արևմտահայաստանի կարևոր քաղաքները՝ Էրզրում, Մուշ, Վան, ինչպես և Կ. Պոլիս և այլուր: 1920 թ. ապրիլից նա գլխավորում է գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքը, ինչն էլ ուղղակի վկայում է նրա բարձր աստիճանակարգի մասին հետախուզական ծառայության համաստեղությունում: Հայկական հետախուզությունն աշխատում էր, և այս հարցում հետախույզ Տիգրան Դևոյանցը բացառություն չէր:

Տ. Դևոյանցը վերլուծության ենթարկելով այդ տարիների բարդ աշխարհաքաղաքական իրադարձու-

թյուններին վերաբերող հետախուզական մի շարք տեղեկագրեր՝ պնդում է. «Հայաստանի պատերազմական նախարարութիւնը եւ Փարիզի հայաստանյան պատուիրակութիւնը դեռ 1920 թ. ապրիլին գիտէին տաճիկ-մեծամասնական յարձակումների մասին»[78]: Դրան *Տ. Դևոյանցը* խիստ բազմանշանակ ավելացնում է հետևյալը. «Հայաստանի հետախուզական բաժանմունքի ստացած գաղտնի զեկուցումների մէջ շատ անգամն շեշտւում էր, որ Տաճկաստանի ազգային ուժերը *Մուստաֆա Քէմալ փաշայի* ղեկավարութեամբ շտապ վերակազմւում, կազմակերպւում են: Եւ հակառակ դաշնակիցների կտրուկ հրահանգներին՝ երիտասարդ թուրքեր[ը] հասան իրենց նպատակին, այն է՝ կազմեցին *Ֆերիզ Ռիզա փաշայի* նոր դահլիճը բացառաբար իրենց կուսակիցներից, եւ այդպես «Միլլի Թաշկիլաթի» դրութիւնը դարձավ օրինական»[79]: Իսկ Սովետական Ռուսաստանի բռնած դիրքորոշման վերաբերյալ *Տ. Դևոյանցը* հանգում է աքսիոմատիկ եզրակացության. «Եվրոպական պետութիւններից ամէնից շատ Անգլիան էր օգնում ռուսական ճերմակ բանակներին, ուստի սովետները որոշ շարժում առաջ բերին Անգլիոյ դէմ մահմեդական երկրների մէջ եւ հովանաւորեցին *Էնվեր եւ Նուրի փաշաներին* ու նրանց նմաններին: Իհարկե, Սովետական Ռուսաստանի այս քայլը վնասում էր Հայաստանին, բայց նկատի ունեցէք, որ դիւանագիտութիւնը գութ չունի: Այստեղ պէտք է աւելացնեմ իմ համոզումը, որ Սովետական Ռուսաստանը թէեւ այդ շրջանում հովանաւորում էր *Քեմալին*, բայց «շան հետ բարեկամանալով՝ փայտը միշտ ձեռքին էր պահում» ու հետեւում նրա բոլոր քայլերին:

Այդուհանդերձ, թե՛ բոլշևիկները և թե՛ քեմալականները ստեղծված իրադրությունը գնահատեցին շատ իրատեսորեն և արեցին անհրաժեշտ քաղաքական եզրակացություններ, որոնք բխում էին իրենց խորքային շահերից, ինչը գրեթե լիովին անտեսվեց հայկական կողմից: Այդ մասին են վկայում մի շարք փաստեր, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թե՛ բոլշևիկները և թե՛ թուրքերը դատարկախոսությամբ չեն զբաղվել, ավելին՝ վերջիններիս Կարմիր Ռուսաստանի կողմից ցուցաբերվել է ռազմաքաղաքական աջակցություն: Այսպես՝ ինչպես երևում է գեներալ Գ. Ղորղանյանին հասցեագրված *Տ. Դևոյանցի* 1919 թ. հոկտեմբերի 22-ի հեռագրից (№ 42), դեռ 1919 թ. վերջերին անգամ Սև ծովով, մոտորանավակով Թուրքիա են հասցվել անհրաժեշտ քանակի զենք ու զինամթերք, հանդերձանք (հավանաբար հենց իտալացիների օգնությամբ), որոնք ուղարկվել են գավառները «Միլլի» շարժման գրոհայիններին զինելու համար[80]: Դա հաստատվում է նաև ՀՀ բանակի շտաբի հետախուզական բաժանմունքի կապիտան *Տ. Դևոյանցի* կողմից 1920 թ. ապրիլի 23-ի գաղտնի ամփոփագրի (№ 15) տվյալներով, որտեղ հաստատվում է, որ զենքն ու զինամթերքը դեղորայքի և այլ իրերի անվան տակ քողարկվելով Կարմիր Խաչի դրոշի քողածածկույթի ներքո՝ մասնավորապես փոխադրվել են Սվազ ու Մալաթիա, իսկ այնտեղից էլ բաշխվել են հունական ու հայկական ռազմաճակատներին[81]:

Կապիտան *Դևոյանցը* Կ. Պոլսից Փարիզ գեներալ *Գ. Ղորղանյանին* ուղարկված 1919 թ. հոկտեմբերի 7-ի զեկուցագրում (№ 33) ընդգծում է Գերմանիայում պատերազմի տարիներին սպայական դպրոցն ավարտած *«Հասան»* անունով ոմն վրացի սպայի մասին, որն Իզմիթի շրջանում կազմակերպված աշխատանք էր ծավալել լազերի, չերքեզների և թուրքերի մեջ՝ լայն կապեր պահպանելով Վրաստանի հետ[82]:

Հայկական հետախուզությունը աշխատում էր օբյեկտիվ, հավաստի տեղեկատվություն հավաքել՝ ի նպաստ հանրապետության անվտանգության խնդիրների լուծման: Այդ հարցերի լուծմանն էր ծառայում նաև 1919 թ. նոյեմբերի 9-ի հետախուզական ամփոփագիրը, որը կցված էր № 21 գործին: Դրանում գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետ, կապիտան *Վ. Մուրադյանը* և նրա օգնական, պոդպորուչիկ *Միքայել Դոդոխյանը* արժեքավոր տվյալներ էին հաղորդում Մալաթիայում և Խարփութում երիտթուրքերի, Ալաշկերտ-Ղարաքիլիսայի շրջանում թուրքական 11-րդ դիվիզիայի գործունեության մասին, որի շտաբը գտնվում էր Բայազետում: Հետաքրքիր է նշել, որ այս հետախուզական հաղորդագրության հեղինակները նաև ուշագրավ տվյալ էին ներկայացնում այն մասին, որ իբր թե Անդրկովկասում գտնվող *Էնվեր փաշան* իր ծառայություններն է առաջարկել *Մուստաֆա Քեմալին*՝ պատրաստակամություն հայտնելով վերջինիս տրամադրել 18 հազար զինված մարդ (հետաքրքիր է նշել, որ ինչպես գրում է այդ օրերին Կ. Պոլսում հայկական հետախուզական ծառայության գործունեության կազմակերպիչ *Տ. Դևոյանցը* Փարիզ գեներալ *Ղորղանյանին* ուղարկված 1919 թ. նոյեմբերի 23-ի զեկուցագրում, *Էնվեր փաշան Մ. Քեմալին* նաև խոստացել է դրամ՝ ոսկով)[83], նաև նշում, որ Բրուսում ազգային բանակի կազմակերպմամբ զբաղվում է հայտնի երիտթուրք, Բաղդադի նախկին ոստիկանապետ *Նուրի Ահմեդ Նուրի փաշան*: Սակայն առավել հետաքրքիրն այս ամփոփագրի մի այլ տվյալ է. դրանում նշվում էր ծովային մինիստր *Սալիհ փաշայի* հեռագրի մասին զինվորական մինիստրին, որում *«Միլլի»* շարժման զինվորականներին, զինվորներին խորհուրդ էր տրվում արտաքնապես ցույց տալ իրենց պատրաստակամությունը Անտանտի առաջ՝ ցրելու ազգային զինված ուժերը, իսկ իրականում գաղտնապես չդադարեցնել զինված ուժերի ձևավորման գործընթացները՝ նախատեսելով բացահայտ հանդես գալ միայն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը և պատեհ առիթը կլինի: Թատերական ներկայացում կազմակերպելով՝ թուրք քաղաքական-զինվորական առաջնորդները օրենքով իբր թե վերացված էին համարում 17-րդ կորպուսը, որպեսզի հնարավորություն ունենային ուժեղացնելու 14-րդ կորպուսը՝ հույների դեմ հանդես գալու համար (իրականում 17-րդ կորպուսի բոլոր զինվորները և սպաները մտան 14-րդ կորպուսի մեջ): Հետախուզական ամփոփագրում նշվում էր այն մասին, որ Տրապիզոն-Էրզրումի շրջանում գտնվող 3-րդ դիվիզիայում հաշվվում է 1750 սվին, Վան-Ալաշկերտ, Բայազետի շրջանում գտնվող 11-րդ դիվիզիայում՝ 3300 մարդ, իսկ Խորասան-Հասան Կալայի շրջանում գտնվող 12-րդ թուրքական դիվիզիայի կազմում՝ 2000 զինվոր[84]: Իհարկե, սրանք շատ ամբողջական և հավաքական տվյալներ չէին, պակասող օղակները քիչ չէին, սակայն եղածն էլ վկայում է այն

մասին, որ հայկական հետախուզությունը փորձում էր լավ պատկերացումներ ունենալ թուրքական ուժերի մասին, ինչը տարբեր պատճառներով ոչ միշտ էր հաջողվում: Եվ այնուհանդերձ, թշնամուն իրապես հակազդելու փորձեր էին արվում, իսկ հավաքված տեղեկատվությունը բավարար էր թշնամուց զգուշանալու և ռազմաքաղաքական լուրջ նախապատրաստություններ տեսնելու համար:

Միաժամանակ, ինչպես տեղին նշվում է *Տ. Դևոյանցի* 1919 թ. օգոստոսի 13-ի զեկուցագրում (№ 3)՝ ուղղված Փարիզում գտնվող գեներալ *Ղորղանյանին*, չնայած այն հանգամանքին, որ Էրզրումում գտնվող դաշնակցային ռազմաքաղաքական միսիայի ներկայացուցիչները թուրքերի նախապատրաստությունների մասին տեղյակ են պահում Կոստանդնուպոլսում գտնվող դաշնակցային հրամանատարությանը խնդրանքով՝ զինված ուժ գործադրել աղետից խուսափելու համար, վերջիններս դրսևորում են հենց *Ռաուֆ բեյի* և մյուսների մատնանշած անվճռականությունը, ինչն էլ, ինչպես վկայում է *Դևոյանցը*, համարձակություն է տալիս թուրք առաջնորդներին՝ գնալու 5-6 նոր դիվիզիաների կազմավորմանը՝ գլխավոր նպատակ դնելով Կարսի և Բիթլիսի ուղղությամբ ռազմաքաղաքական առաջխաղացումը՝ ընդ որում, 36-րդ դիվիզիան կենտրոնացնելով Օլթիի (3-րդ, 7-րդ, 11-րդ գնդերը), 9-րդ և 36-րդ դիվիզիաները՝ Էրզրում-Հասան Կալայի շրջանում, 12-րդը՝ Խորասան-Քեթակի ուղղությամբ, 11-րդը՝ Վան-Բայազետի հովտում (33-րդ, 126-րդ և 127-րդ գնդերը, որոնք մտնում էին *Մ. Քեմալի* գլխավորած 15-րդ կորպուսի կազմի մեջ): *Դևոյանցը* ավելացնում էր, որ միլլիականները, օգտվելով այդ բարենպաստ վիճակից, գնացին դեպի շարքային թուրքերի զինումը Էրզրումի մարզում: Բացի վերոհիշյալից՝ բնակչությանը բաժանեցին մոտ 60.000 հրացան՝ դրան զուգահեռ կազմակերպելով չեթնիկների խմբեր և դա այն դեպքում, երբ անգլիացիները բավարարվում էին խաղաղ զգուշացումներով, ինչը բնականաբար ազդեցություն չէր գործում թուրքերի վրա[85], որոնք ազատ էին իրենց գործողությունների ընդհանուր ծրագրման գործում: Դարձյալ հենվելով հետախուզական գործակալական տվյալների վրա՝ նշվում էր, որ երկրորդ այդպիսի համագումար նախատեսվում է անցկացնել Սվազում (Կ.Պոլսում գտնվող *Տ. Դևոյանցը* գեներալ *Ղորղանյանին* ուղղված 1919 թ. հոկտեմբերի 6-ի զեկուցագրում (№ 32) հետևյալ հետաքրքիր նշումն է կատարում այն մասին, որ Սվազում *Մուսթաֆա Քեմալ փաշային* կից գտնվել են երեք վրացի և երկու ադրբեջանցի սպաներ, որոնք էլ հենց մասնակցել են Սվազի կոնգրեսին[86])՝ մեծ մասշտաբով քննարկելու թուրքական սահմանների պաշտպանության հարցը: Վերջապես բոլոր միջոցները ձեռնարկվեցին՝ ուժեղացնելու բանակային զորամասերը և քուրդ-թաթարական բանդաները հայկական սահմանի ողջ երկայնքով՝ վկայակոչելով 15-րդ թուրքական կորպուսի հրամանատարի Էրզրումից Կոստանդնուպոլիս զինվորական նախարարի հասցեով ուղարկած հեռագիրը, որում շեշտվում էր, որ մոտեցող իրադարձությունների կապակցությամբ հայկական սահմանագծի վրա ձեռնարկվում են նախապատրաստական միջոցառումներ: Զեկուցագրում ընդգծվում էր, որ այդ նախապատրաստությունները իրենց սպասեցնել չտվեցին՝ արագ արտահայտվելով կոնկրետ գործընթացներում:

Հարկ է նշել, որ դաշնակիցների հնարավոր անտարբերության և կասկածների մասին Անտանտի գծով իրենց փոքր դաշնակցի՝ Հայաստանի հանդեպ և այդ առումով Թուրքիայի կողմից ձեռնարկվող ագրեսիվ գործողությունների առիթով ուշագրավ տեսակետ է արտահայտում *Տ. Դևոյանցը*՝ համաձայնելով նաև *Վ. Մուրադյանի* վերը բերված մի շարք մտքերի հետ. «Թէեւ իրենց պահանջները առաջ քաշելու համար քէմալականները բաւականաչափ ուժ չունէին, բայց իրենց յոյսը դրած էին դաշնակիցների անվճռական լինելու վրայ: Կ'ուզէին իրենց ունեցած ուժերով առայժմ գրաւել Իզմիրը եւ Անդրկովկասի մասը մինչեւ Արփաչայ, որովհետեւ կը խորհէին, թէ այս անելու ժամանակը ամենանպաստաւորն էր: Այդ կերպով կարող էին իրենց ազգակիցների մէջ ստեղծել ոգեւորութիւն և վստահութիւն իրենց հետապնդած գաղափարների գործադրութեան համար: Միաժամանակ նրանք ուզում էին Փարիզի խորհրդաժողովը դնել կատարուած իրողութեան առջեւ:

Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի 1920 թ. փետրվարի 7-ի ամփոփագրում (N 11) կապիտան *Վ. Մուրադյանը* և նրա օգնական, պոդպորուչիկ *Մ. Դոդոխյանը* հայտնում են, որ թուրքական 15-րդ կորպուսը առգրավելով կազմացրված 4-րդ բանակի զինանոցները՝ պատրաստվում է դուրս գալ հայկական սահմանի վրա, միաժամանակ ուժեղացվում են 12-րդ, 13-րդ, 14-րդ և 20-րդ կորպուսները: Ամփոփագրում հատուկ նշվում էր, որ հենց այդ կորպուսների գործողությունների հետ էլ պետք է համաձայնեցնի իր գործողությունները Ադրբեջանի բանակը և մշակի համատեղ պլան, ինչի համար Ադրբեջանի բանակ են հրավիրվել թուրք սպա հրահանգիչներ[87]: Շատ ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ զորքերի գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի 1920 թ. ապրիլի 5-ի ամփոփագիրը (N 14), որը կարևոր, թեկուզև այսօրվա մոտեցումների տեսանկյունից տեղ-տեղ վիճարկելի տեղեկատվություն է հաղորդում Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունների ու դեպքերի մասին: Դրանում ասվում էր, որ թուրքական բանակի թիվը 51.476 մարդ է, իսկ Էրզրումում գտնվող 15-րդ կորպուսինը՝ 13.338 մարդ: Ամփոփագրում հայտնվում էր, որ 15-րդ կորպուսի դիվիզիաներից 12-րդի շտաբը գտնվում է Խորասանում, 35-րդ գնդինը՝ Քեոփրու-Քեոյում, 36-րդ գնդինը՝ Ջիվինում, Հասան-Կալայում գտնվում է հրետանային մարտկոց՝ 4 հրանոթներով: Գործակալական այդ տվյալների համաձայն՝ 15-րդ կորպուսը պատրաստվում էր գործողությունների հայկական սահմանի վրա՝ նպատակ ունենալով հայերին ետ շպրտել Կարսի նահանգից և վերականգնել, այսպես կոչված, Հարավարևմտյան մահմեդական հանրապետությունը՝ դրանով իսկ կապ հաստատելով Ադրբեջանի հետ: Ամփոփագրում նաև ասվում էր, որ Կ.Պոլսի կառավարությունը առաջարկել է կորպուսի հրամանատար Քյազիմ փաշային մինչև թուրքական հարցի լուծումը առաջիկայում ձեռնպահ մնալ գործողություններից, որպեսզի չխանգարեն թուրքական խնդրի լուծմանը Թուրքիայում, սակայն մշտապես պատրաստ լինել հնարավոր ակտիվ գործողությունները

ների: Դրանում նաև ասվում էր, որ կորպուսի զորամասերի առջև դրված են որոշակի նպատակներ, այդ թվում՝ *Խալիլ բեյի* զորամասին հրահանգ է տրվել ամրապնդվել Մերդենեկ-Արդահան ուղղությամբ՝ Արդահանի և Կարսի մարզերը գրավելու համար, իսկ մյուս դիվիզիաները պետք է գործեին Սարիղամիշի ուղղությամբ, որի համար Զարաբխանյան Շուրային հատկացվել է 700 բերդանկա, 4400 փամփուշտ[88], ինչը գրեթե այնքան էր, ինչքան, ըստ Դևոյանցի, Թուրքիային թույլատրվում էր ունենալ՝ ըստ դաշնակիցների հետ ունեցած համաձայնության, թեև թուրքերը, դատելով այդ փաստերից, դիմում էին քողածածկված քայլերի՝ իրենց իրական գործողություններն ի ցույց չդնելով հակառակորդներին, ինչպես նաև Փարիզի քաղաքագետներին՝ աշխարհի ճակատագիրը տնօրինող եվրոպական լիդերներին, չնայած դրա կարիքը չկար, քանզի եվրոպական դաշնակիցները և մասնավորապես բրիտանացիները ներքուստ հակված էին սերտ կապեր ունենալու քեմալական առաջնորդների և Մ. Քեմալի հետ ընդդեմ բոլշևիկյան Ռուսաստանի կայսերապաշտական ծրագրերի իրականացման և նոր ռուսաստանյան «իմպերիայի» ստեղծման: Գեներալ Գ. *Ղորղանյանին* ուղղված 1919 թ. նոյեմբերի 7-ի զեկուցագրում (№ 51) *Տ. Դևոյանցը* Կ. Պոլսից գրում էր, որ Թուրքիան պետք է ունենար 9 կորպուս՝ 20 դիվիզիաներով, որոնց մեջ պետք է ունենային ընդամենը 54.503 մարդ, այսինքն՝ ամեն մի դիվիզիան՝ 2020 զինվոր, և քանի որ 12-րդ և 9-րդ դիվիզիաների թվակազմն այդ պահին ավելին է եղել՝ 2296 մարդ, իսկ զենքի տակ են եղել 39.947-ը, դաշնակիցների կողմից թույլատրվել է զորակոչել ևս 12.260-ին[89]: Սա, իհարկե, հետո խախտվել է, սակայն այս և 1920 թ. ապրիլի 5-ի տվյալները գրեթե համընկնում են, ինչը վկայում է, որ թուրքական բանակի թվակազմը եղել է ընդհանուր առմամբ կայուն՝ տատանվելով 51-54 հազարի միջակայքում:

Թուրքական զորքերի տեղաբաշխման մասին պատկերացումների ամբողջացման, ճշգրտման տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև ՀՀ զորքերի գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետ, կապիտան *Դևոյանցի*՝ գեներալ *Ղորղանյանին* ուղարկված 1919 թ. ապրիլի 29-ի գաղտնի ամփոփագրի (№ 33) տվյալները, ըստ որոնց՝ Ալաշկերտից Բայազետ ընկած տարածքում տեղաբաշխված են 1000 կանոնավոր ասկյարներ, իսկ Ալաշկերտի հովտում և բարձունքներում՝ շուրջ 6000 ոչ կանոնավոր քուրդ կամավորական զորամասեր, որոնք մտնում են *Քյազիմ Կարաբեքիր փաշայի* գլխավորած 15-րդ կորպուսի մեջ: Հայտնվում էր նաև, որ Քուլպի շրջանում (Սուրմալու) *Շամիլ բեկի* տրամադրության տակ կան 250 թուրք կարգապահ ասկյարներ, իսկ սպա *Յուզբաշի Քեմալ էֆենդու* գլխավորությամբ գործում են մինչև 3000 զինված տեղական թաթարներ և քրդեր՝ որպես պարտիզաններ՝ ձեռքի տակ ունենալով 4 հրանոթ (2-ը՝ լեռնային) և 4 գնդացիր: Ավելացվում էր, որ *Շամիլ բեկը* ուղարկվել է Բայազետ, Ալաշկերտ և Ղարաքիլիսա՝ 25 ուղտերի քարավանի ուղեկցությամբ զենք ու զինամթերք ստանալու համար, իսկ Սարիղամիշի շրջանում գործում է, այսպես կոչված, «թուրք կոմունիստների» բանդան[90]:

Առհասարակ, փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ հետախույզները իրենց կողմից հաղորդվող տեղեկատվության հարցում նախանձախնդիր էին, շահագրգռված էին դրանց հավաստիության և գաղտնիության ապահովման մեջ, մանավանդ, երբ դա վերաբերում էր թուրք-ադրբեջանական մեքենայություններին և դրանց շուտափույթ բացահայտմանը: Այսպես՝ 1920 թ. մայիսի 13-ին ՀՀ արտաքին գործերի նախարարությանը կից տեղեկատվական բաժնի պետին ուղղված դիմումագրում (Po 403) ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետ *Տիգրան Դևոյանցը* տեղեկացնում էր, որ մայիսի 11-ին (N Po 395) ԱԳ նախարարին է ուղարկվել Կ.Պոլսից ստացված կարևոր գաղտնի տեղեկատվություն և այդ կապակցությամբ արտաքին գործերի նախարարությանը իր վրդովմունքի մասին՝ կապված հետախուզական ամփոփագրերից մեկի անթույլատրելի ապագաղտնազերծման հետ, որի հետևանքով էլ մամուլ էր սպրդել գաղտնի տեղեկատվություն Կիլիկիայում տեղի ունեցած իրադարձությունների և, որ շատ ավելի կարևոր էր, հայկական սահմանի վրա թուրքական նախապատրաստությունների մասին, որոնք էլ կասկածելի հանգամանքներում ընկել էին «Յառաջ» թերթի խմբագրություն և տպագրվել մայիսի 13-ի համարում[91]:

Իսկ իրավիճակը 1918-1920 թթ. շատ խճճված էր և տագնապալից: 1920 թ. ապրիլի 25-ին պոդպորուչիկ *Մ. Դոդոխյանը* մի շատ հետաքրքիր զեկուցագիր է ուղարկում իր վերադասին՝ հետախուզական բաժնի պետ, կապիտան *Տ. Դևոյանցին*, որն այն անմիջապես ուղարկում է ՀՀ արտաքին գործերի նախարարին: Դրանում ասվում էր, որ առկա տեղեկությունների համաձայն, որոնք հենվում են թուրքական աղբյուրների վրա, Կոսսորը Օլթիի, Իդի և այնուհետև Էրզրումի հետ կապված է մեկ միասնական հեռագրակապով, որտեղից էլ կապված է Կ. Պոլսի հետ: Հենց Կ. Պոլսից էլ թելադրվում է, թե ինչ վարքագիծ պետք է որդեգրեն էրզրումյան միլիկանները: Տեղեկատվության շատ կարևոր մի մանրամասն ևս ներկայացնենք. ըստ դրա՝ իբր թե Էրզրումում գտնվող 15-րդ կորպուսը պատրաստվում է իրեն հայտարարել բոլշևիկյան և շարժվել Հայաստանի վրա, որպեսզի իբր թե պահանջի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի իրագործումը և ըստ այդմ՝ զբաղեցնի դրանով նախատեսված տարածքները: *Մ. Դոդոխյանը,* դարձյալ հենվելով նույն աղբյուրների վրա, տեղեկացնում էր, որ 15-րդ կորպուսի հրամանատարները գտնվում են կապի մեջ անգլիացիների հետ, որոնք համաձայնվել են այդ տարածքների զբաղեցման հետ, սակայն պայմանով, որ թուրքերը խաղաղ բնակչությանը ձեռք չեն տա (այս հանգամանքը զարմացնում է հայ հետախույզին, քանզի հայերը և Հայաստանը մեծ ակնկալիքներ ունեին դաշնակիցներից, սակայն խորքային փաստերը այլ բաների մասին էին վկայում - Վ. Վ.): *Մ. Դոդոխյանը* նաև տեղեկացնում էր, որ Օլթիում գտնվող թուրք գնդապետ *Ջաֆար բեկը* հույներին ուղարկված նամակում շնորհակալություն էր հայտնում այն բանի համար, որ վերջիններս բացասաբար են վերաբերվել Հայաստանի կառավարության կողմից հայտա-

ռարված զորահավաքին: Զեկուցագրում նաև նշվում էր Օլթիում կենտրոնացած շուրջ 2000-անոց թուրքական կանոնավոր զորքի մասին՝ դրան հավելելով, որ թուրքերի մեջ քարոզչություն է տարվում այն մասին, թե հայերն ինչ ուզում են, թող անեն, շուտով թուրքերը գալու են: Զեկուցագրում փաստեր կան նաև Նախիջևանում տեղի ունեցած շարժումների և այնտեղ գտնվող 200 հոգանոց չեթնիկական խմբի մասին[92]:

Եվս մեկ խոսուն փաստ հայկական հետախուզության կայացման կենսագրությունից: Դատելով արխիվային կցկտուր որոշ տվյալներից՝ հետախուզությունը միշտ չէ, որ հաջողակ է եղել, սակայն դրանք վկայում են, որ անգամ Առաջին հանրապետության դժվարին տարիներին հայ հետախույզների կողմից իրական և զգալի ջանքեր են գործադրվել՝ ձեռք բերելու կարևոր և նպատակային տեղեկատվություն տարածաշրջանային զանազան ռազմաքաղաքական իրողությունների և հատկապես Թուրքիայի վերաբերյալ: Այսպես՝ դատելով *Տ. Դևոյանցի* 1919 թ. հոկտեմբերի 29-ի զեկուցագրից՝ ուղղված գեներալ *Ղորղանյանին*՝ հոկտեմբերի 28-ին Էրզրումում գտնվող *Ք. Կարաբեքիր փաշայի* կողմից հրաման է ստորագրվել մի հայի գնդակահարության մասին, որը գողացել էր զորային շիֆրը (ծածկագիրը), և այդ կապակցությամբ Կ. Պոլիս ուղարկված հեռագրում *Կարաբեքիրը* ռազմական նախարարից պահանջում էր հոկտեմբերի 29-ին անհապաղ կորպուսների հրամանատարներին ուղարկել նոր, ավելի բարդ շիֆր[93]: Ակնհայտորեն այս ամենը և մենագրության շարադրանքում ու սույն հրապարակման հավելվածներում ներառված փաստերն ու մեր կողմից բերված բազմաթիվ հետախուզական ամփոփագրերը, հայ հետախույզների և մասնավորապես՝ Փարիզ գեներալ *Գաբրիել Ղորղանյանին* և ՀՀ գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքին ուղարկված *Տիգրան Դևոյանցի* կողմից հայթայթված հույժ գաղտնի զեկույցները նկատի ունենալով՝ մենք չենք կարող համաձայել *Արմ. Մանուկյանի* այն եզրահանգման հետ, թե առանձնապես նկատելի էր «*Թուրքիայի նկատմամբ հետախուզական գործունեության, մեղմ ասած, թուլությունը, հատկապես վերջինիս բանակի մասին տեղեկություններ հայթայթելու ուղղությամբ*»[94]: Դա նաև վկայում է հայ հետախույզների դժվարին «ոդիսականի» և այն մասին, որ հետախուզությունը այդ տարիներին գործելով իրատեսական հնարավորությունների շրջանակներում՝ ոչ միայն պարզապես գործում էր, այլև փորձում խիզախել՝ գործելով շատ ավելի փորձված և նենգ թշնամու դեմ, կանխարգելելով թշնամու գործակալների գործունեությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, իսկ նրանց կողմից ՀՀ ռազմաքաղաքական շրջանակներին ներկայացված արժեքավոր տեղեկատվությունը բավարար էր, որ վերջիններս ոչ միայն զգաստանային, ուշքի գային սևրյան խանդավառությունից, այլև ձեռնարկեին արդյունավետ քայլեր՝ շտկելու ՀՀ բանակում առկա թերությունները, պատշաճ միջոցներ ձեռնարկեին պետական սահմանի ու երկրի պաշտպանունակության ամրապնդման ուղղությամբ:

Այդ պայմաններում Առաջին հանրապետության հետախույզների գործունեությունն անավարտ մնաց,

Օլիվեր Բոլդուին, անգլիացի գնդապետ. 1920 թ. կամավոր ծառայել է ՀՀ 1-ին Հանրապետության բանակում:

այդ թվում և՝ Տիգրան Դևոյանցի, որի ոդիսականը շարունակվեց: Նրա անունը մենք հանդիպում ենք Մեծ Բրիտանիայի վարչապետ Ստենլի Բոլդուինի որդի Օլիվեր Բոլդուինի հուշագրությունում, որը որպես գնդապետ ծառայության մեջ էր հայկական բանակում: Փաստելով, որ 1921 թ. փետրվարյան խռովահույզ հակաբոլշևիկյան ընդվզման, ապստամբության փոթորկալից օրերին Լոռու չեզոք գոտի ուղարկվածների թվում էր նաև «Հայաստանի հետախուզության նախկին ղեկավար Դավոյանցը (Բոլդուինը, անկասկած, նկատի ունի 1914-1920 թթ. հետախուզական գործունեությամբ աչքի ընկած հայազգի սպա, հանրահայտ հետախույզ Տիգրան Թադևոսի Դևոյանցին)՝ իր գործում արտակարգ տաղանդի տեր մի մարդ, որը ժամանակին հետախուզության սպա էր եղել Մեծ իշխան Նիկոլայի շտաբում: Նա ազատ խոսում էր հայերեն, ռուսերեն, թուրքերեն, գերմաներեն, ֆրանսերեն ու անգլերեն և հասնելով Վրաստանի սահմանին՝ կարողացավ փախչել Կոստանդնուպոլիս, որտեղ նրա տիրապետած տեղեկատվությունը մեծ արժեք էր ներկայացնում դաշնակիցների համար: Այս ամբողջ ընթացքում բոլշևիկները Հայաստանում ոչինչ չէին անում ցրտից ու սովից զանգվածաբար մեռնող չքավոր մարդկանց վիշտը թեթևացնելու համար»[95]:

Տաղանդաշատ և իր սիրած գործին մինչև ուղն ու ծուծը նվիրված հետախույզի գործունեությունը ընդհատվում է Առաջին հանրապետության մայրամուտով և ի թիվս այլոց՝ անցնելով ծանր փորձությունների միջով՝ Տ. Դևոյանցը ի վերջո հանգրվանում է հեռավոր Ամերիկայի Միացյալ Նահանգների Բոստոն քաղաքում, սակայն մեզ համար դեռ չպարզված հանգամանքներում նա այցելել է Բելգիա:

ԱՄՆ-ում, երկար ժամանակ ապրելով Նյու Յորքի Բրոնքս փողոցի վրա, ինչպես և նրա զինակից Ալ. Շեուրը, Տիգրան Դևոյանցը հրապարակում է բարձրարժեք հուշագրություն իր հետախուզական կենսագրության և ոդիսականի մասին: ■

Օգտագործված գրականություն

[30] Տես Դէոյեանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1943, թիւ 6 (239), նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 48:
[31] Դէոյեանց Տիգրան, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ» (Փարիզ), 1938, Ջ տարի, թիւ 3, Յունիս-Սեպտեմբեր, էջ 59:
[32] Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, Nº 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 84 -85:
[33] ՀԱԱ, ֆ. 202, g. 1, գ. 42, մաս II,, գ. 118ш (146), թ. 33:
[34] Նույն տեղում, թ. 34:
[35] Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N⁰ 4 (249), Յուլիս-Օգոստոս, էջ 83:
[36] Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, Nº 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 81:
[37] Թեքինսկի Մամեդ (Մուհամմեդ) խան (1880-1938 թթ.) – իրավաբան, 1919 թ. հունվարի 29-ից մինչև հոկտեմբերի 10-ը եղել է Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում, 1920 թ. հոկտեմբերի 11-ից մինչև 1920 թ. ապրիլի 28-ը՝ արտգործմինիստրի տեղակալ, 1938 թ. գնդակահարվել է ՆԳԺԿ եռյակի որոշմամբ, արդարացվել 1955 թ.: Տես Назим Мустафа, Первый дипломатический представитель Азербайджана в Армении Мухаммед Хан Текински: Газета «Азербайджан», 27 мая 2018 года.: Кельбизаде Эльнур, Мухаммед хан Текинский-История дипломатии: Տես: *http://www.azerbaijan-news.az/index. php? mod= 3&id=147821:*
Թեքինսկին եղել է Ադրբեջանի ամենավտորձառու և հեռանկարային դիվանագիտական-հետախուզական կադրերից, որի վնասազերծումը և դավադիր քայլերի կանխումը Հայաստանի Հանրապետության ՀՀ հետախուզական ծառայության և մասնավորապես *Տիգրան Դևոյանցի* կողմից երբևիցե ձեռնարկված ամենահաջող և հմուտ գործողություններից էր:
[38] Տես «Հայաստանի աշխատավոր», Երևան, 19 օգոստոսի, 1919, N 123:
[39] Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, Nº 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 88:
[40] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 310: Ռուբէն, Հայ հեղափոխականի մը յիշատակները, Է. հատոր, Գ. հրատ., էջ 193: Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. Դէպքեր. Դէմքեր. Ապրումներ, Ե. Հատոր, Պէյրութ, 1966, էջ 102: Հարկ է ավելացնել, որ այս խնդրում կարևոր մասնակցություն է ունեցել Տ. Դևոյանցը, որին առաջինն է հաջողվել բացահայտել դրանց բանալին, գաղտնազերծել դրանք և կանխարգելել քայքայիչ ձեռնարկումները Հայաստանի, նրա իշխանությունների դեմ. - Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, Nº 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 87:
[41] Վրացեան Ս., Կյանքի ուղիներով, Ե. հատոր, էջ 102: Հարկ է հատուկ նշել, որ այս կապակցությամբ հայտնի հետախույզ *Տիգրան Դևոյանցը* հայտնում է, որ ինքն է գաղտնազերծել բոլոր հայտնի 75 գաղտնագիր-հեռագրերը, որոնք ՀՀ արտաքին գործերի նախարարությունն ապօրինաբար իրեն է վերագրել. - Դէոյեանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, Nº 2 (247), Մարտ - Ապրիլ, էջ 87-90, 1945, N 4 (249), Հուլիս-Օգոստոս, էջ 82-83:
[41] Տես ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 299, թ. 9, թիվ 150, ֆ. 206, g. 1, գ. 84, թ. 27, Հայաստանի Հանրապետությունը 1918 -1920 թթ., Քաղաքական պատմություն. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. Գ. Գալոյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 110:
[42] Տես ՀԱԱ, ֆ. 204, g. 1, գ. 132, թ. 392, 394:
[43] Նույն տեղում, ֆ. 200, g. 1, գ. 155, թ. 10:
[44] Այս տվյալը չի հաստատվում իր իսկ *Տ. Դևոյանցի* վկայությամբ, քանզի գեներալ *Գ. Ղորղանյանին* ուղարկված 1919 թ. սեպտեմբերի 29-ի զեկուցագրում (N 26) այլ փաստի ենք հանդիպում. *Դևոյանցը* այնտեղ գրում է, որ ինքը օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար գնդապետ *Շնեուրից* աշխատանքների կատարման և բնակվելու համար ստացել է 60.000 ռուբլի՝ կովկասյան բոներով, որը կազմում էր 450 թուրքական թղթյա լիրա, այսինքն՝ ամիսը 225 լիրա: Տես Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/ 17, պահ. 12, դ. 3):
[45] Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 1 (246), Յուն-Փետր, էջ 60-61:
[46] Հավանաբար խոսքը վերաբերում է Կ. Պոլսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ *Ֆ. Թախիրաջյանին* կամ էլ երբեմն որոշ փաստաթղթերում նշվող *Բախիրաջյանին*: Դրանք նույն անձնավորության ազգանվան քիչ այլափոխված տարբերակներն են. - Վ. Վ.:
[47] Նույն տեղում:
[48] Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/ 17, պահ. 12, դ. 3:
[49] Տես Omar Viganò, The Armenian Diplomatic Mission in Constantinople (1918-1923) in the Archivio Apostolico Vaticano, STORICAMENTE.ORG Laboratorio di Storia, DOI: 10.12977/stor810, pp. 1-31:
[50] Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 1 (246), Յուն-Փետր, էջ 61:
[51] Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 1 (246), Յուն-Փետր, էջ 60-61:
[52] Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 9/ 9, պահ. 12, դ. 3:
[53] Նույն տեղում:
[54] Նույն տեղում:
[55] Նույն տեղում:
[56] Նույն տեղում:
[57] Նույն տեղում, թիվ 17 /17, պահ. 12, դ. 3, թ. 87:
[58] Նույն տեղում:
[59] Նույն տեղում:
[60] Նույն տեղում:
[61] Նույն տեղում:
[62] Նույն տեղում:
[63] Հարությունյան Ա., ՀՅ Դաշնակցության 1918-1920 թթ. Պատմության վավերագրերը, «ՎԷՄ», համահայկական հանդես, Ջ (ԺԲ) տարի, 2014, թիվ 4 (48), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 249:
[64] Տես նույն տեղում:
[65] Տես նույն տեղում
[66] Տես Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17 /17, պահ. 12, դ. 3, թ. 87:
[67] Տես նույն տեղում:
[68] Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 83:
[69] Այդ կապակցությամբ նա 1919 թ. նոյեմբերի 11-ին *Գ. Ղորղանյանին* ուղղած զեկուցագրում նշում էր, որ Աջարիայով և Արդահանով գնալուց խուսափելու համար ավելի լավ կլինի պաշտոնաթող լինի և մեկնի Սևաստոպոլ՝ հարազատների մոտ, ուր իրեն կզորակոչեն կամավորական բանակ: Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/ 17, պահ. 12, դ. 3:
[70] Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 1 (246), Յուն-Փետր. էջ 53, 61, 1945, N 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 83- 84:
[71] Նույն տեղում, 1945, N 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 83- 84:
[72] Տես Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1946, N⁰ 6 (257), Նոյ.-Դեկտ., էջ 109-110: Հավանաբար դա վերաբերում է Երևանում հավատարմագրված բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչության զինվորական կցորդ Կուրտին, որի հետ կային բազմակողմանի կապեր, ինչը բխում էր առկա իրավիճակից. -Վ. Վ.:
[73] Դէոյեանց Տիգրան, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 85:
[74] Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/ 17 պահ. 12, դ. 3:
[75] Տես ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 162, թ. 43:
[76] Տես Hovannisian R. G., The republic of Armenia, vol. II, p. 68, 177-178, 489:
[77] Սաֆրաստյան Ռ. Ա., Մուսթաֆա Քեմալ. Պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), էջ 76, 80, 85: Սաֆրաստյան Ռ. Ա., Թուրք-հայկական պատերազմի շրջանի թուրքական վավերագրեր (1920 թ. նոյեմբեր): Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XXV), Եր., Զանգակ-97, 2006, էջ 414:
[78] Դէոյեանց Տիգրան. Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1947, N 2 (259), Մարտ-Ապրիլ, էջ 107:
[79] Նույն տեղում, 1946, N 2 (253), էջ 103:
[80] Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/ 17, պահ. 12, դ. 3, թ.17:
[81] Տես ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 427, մաս I, թ. 176, գ. 441, թ. 111:
[82] Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/17, պահ. 12, դ. 3:
[83] Նույն տեղում:
[84] ՀԱԱ, ֆ. 199, g. 1, գ. 73 (71), թ. 187-188:
[85] Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 9/9, պահ. 12, դ. 3:
[86] Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/17, պահ. 12, դ. 3, թ. 40:
[87] Տես ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 441, թ. 33:
[88] Նույն տեղում, գ. 427, մաս II, թ. 249:
[89] Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/17, պահ. 12, դ. 3:
[90] Նույն տեղում:
[91] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 427, մաս II, թ. 300-301:
[92] Նույն տեղում, ֆ. 200, g. 1, գ. 441, թ. 116:
[93] Տես Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/ 17, պահ. 12, դ. 3, թ. 81:
[94] Մանուկյան Արմ., Հայաստանի հատուկ ծառայությունները (1918-2010). Մենագրություն, Երևան, Հեղ. Հրատ., 2018, էջ 45:
[95] Բոլդուին Օլիվեր, Վեց բանտարկություն և վեց հեղափոխություն. Անգլ. թարգմ. Լ. Ջիլֆուղարյանը, Երևան, Անտարես, 2022, էջ 134-135:

Դժգոհությունը առաքինություն է, բայց ոչ միշտ

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Կրնանք դժգոհիլը առաքինություն մը նկատել:

Առաջին հերթին ինքնիրմէ դժգոհ ըլլալը առաքինություն է. մինչ ինքնագոհությունը սանձիչ, ամլացուցիչ ազդեցություն մը ունի ու կը կասեցնէ յառաջադիմությունը, «ինքնադժգոհությունը», եթէ կրնանք այդպիսի բառ մը գործածել, ընդհակառակն, ունի մղիչ ուժ մը, որ ինքնաբարելաւման ու զարգացման կ'առաջնորդէ:

Դժգոհ ըլլալ աշխատանքէդ, աշխատանքի չափէդ ու որակէդ, արդիւնաւէտութենէդ եւ այլն: Դժգոհ ըլլալ վարմունքէդ շրջապատիդ՝ ընտանիքիդ, գործընկերներուդ կամ համայնքիդ հանդէպ: Դժգոհ ըլլալ ազատ ժամանակիդ ի զուր վատնումէ: Դժգոհությունը կրնայ ըլլալ այլազան, բազմապիսի, տարբեր պատճառներով ու տարբեր նպատակներով:

Դժգոհությունը առաքինություն է նաեւ հաւաքական կեանքին մէջ, մանաւանդ հաւաքական կեանքին մէջ: Ո՛չ մէկ քայլ յառաջ կրնանք երթալ առանց մնայուն դժգոհութեան:

Ամեն տարեվերջի, երբ յանձնախումբեր, մարմիններ, թէ հաստատություններ իրենց նիւթական, թէ բարոյական հաշուետուությունը կը կատարեն, օգուտ մը չեն ունենար իրենց յաջորդներուն, եթէ իրենց իրագործումներուն եւ նուաճումներուն կողքին չնշեն նաեւ իրենց առջեւ ելած դժուարությունները ու իրենց թերացումները,– որոնցմէ դժգոհ եղած պիտի ըլլան անկասկած,– ու չընեն սրբագրութեան առաջարկներ: Եւ այդ հաշուետուությունները ընկալող գերադաս մարմիններն ու ժողովներն ալ թերացած պիտի ըլլան իրենց թիւ մէկ պարտաւորութեան մէջ, որն է պատասխանատուութեան կանչել ստորադասները, եթէ իրենց գնահատականներուն մէջ չբանաձեւեն նաեւ թերացումները, այսինքն՝ գոհունակությունն ու դժգոհությունը չմիատեղեն ու բացասականը դրականի վերածելու առաջարկներ ալ չընեն:

Այս գործընթացին մէջ տեղ չունին անձնական յարաբերությունները, գործող անձերու նկատմամբ սեփական նախասիրությունները կամ կեցուածքները: Դժգոհությունը կատարուած գործին նկատմամբ պիտի ըլլայ, անոր արդիւնքին նկատմամբ, միայն բացառիկ պարագաներու՝ գործողներու գործելակերպին կամ վարմունքին, եթէ, ի հարկէ, աչք ծակող սայթաքումներ չեն ունեցած անոնք:

Պէտք չէ շփոթել դժգոհությունն ու գանգատը:

Ճիշտ է, կը գանգատինք, երբ բանէ մը՝ արարքէ մը, խօսքէ մը կամ իրավիճակէ մը դժգոհ կ'ըլլանք: Գանգատը, սակայն, ունի կրաւորական բնոյթ մը: Եթէ ճաշարանը քեզի հրամցուած ապուրի պնակին մէջ մազ մը տեսնես, սպասեակին կը գանգատիս, կը պահանջես, որ փոխէ ապուրդ: Բայց այդ քեզի չէ՛ առնչուած: Եթէ գոհ չմնաս, յաջորդ անգամ այդ ճաշարանը չես յաճախեր: Նոյն ձեւով կրնաս գանգատիլ շատ բաներէ, որոնց բարելաւման ի խնդիր դուն ընելիք կրնաս չունենալ: Դժգոհությունը, սակայն, կ'ենթադրէ, որ այդ բարելաւման մէջ դուն ալ դերակատար կրնաս ըլլալ: Դժգոհությունը ներգործուն պիտի ըլլայ:

Ապուրին ու մազին օրինակը միշտ մտաբերելու ենք, երբ դժգոհություն կ'ունենանք մեր հաւաքական կեանքի արատներէն: Եթէ մեր դժգոհությունը գանգատէ մը անդին չանցնի, ան կը դադրի առաքինություն ըլլալէ: Կը վերածուի թերութեան: Մեղանչումի՛ նոյնիսկ: Որո՞ւ կ'ուղղուի մեր գանգատը: Գործող անձերուն եւ մարմիններո՞ւն: Կազմակերպություններուն եւ հաստատություններո՞ւն:

Արդար չ'ըլլար գանգատողին ըսել. «Փոխանակ տեւաբար գանգատելու՝ եկո՛ւր, թեւերդ սոթէ՛ եւ քու ներդրումո՛վդ փորձէ սրբագրել այն թերությունը կամ թերությունները, որոնցմէ դժգոհ ես»: Իսկ եթէ այդ կազմակերպություններէն բարեփոխություն չես ակնկալեր, այն ատեն ստեղծէ քո՛ւ կազմակերպությունդ, թէկուզ ամենէն համեստ տարողությամբ եւ քո՛ւ հասկցած ձեւովդ բեր մասնակցությունդ հաւաքական կեանքին, բայց բեր՝ փոխանակ հեռու մնալու անկէ՝ պատրուակ բռնելով առկայ թերիները կամ այդպէս արդարացնելով ինքնասեւեռումդ:

Այո՛, մեր դժգոհությունները կրնան տարբեր դրսեւորումներ ունենալ՝ յանձնախումբի մը կամ վարչության մը մէկ անդամի փոփոխութենէն մինչեւ յեղափոխություն կամ պետական յեղաշրջում, բայց առաջին հերթին անոնք ծագած պիտի ըլլան կացություն մը, իրավիճակ մը բարելաւելո՛ւ մտադրութենէն:

Այդ պարագային, անկասկած, անոնք առաքինությունն պիտի ըլլան: ■

2024 թ. հունվարի 18-ին լրացավ ՀՅԴ հիմնադիր երրորդության անդամ Ռոստոմի (Ստեփան Զորյան) մահվան 105-րդ տարելիցը

Թիւ 101-65 արխիւային այս փաստաթուղթը նամակ մըն է, որ կրնայ ուղղուած ըլլալ Պարսկաստան, Կովկաս կամ Ժնև: 4 փոքր էջ: Ռոստոմ վերադարձած էր գաւառներու իր շրջապտոյտէն և կը պատրաստուի անցնիլ Պոլիս:

27 Յուլիս, 1912, Կարին

Սիրելի՛ք,

դրութիւնը, ինչպէս գիտէք, խառնվում է Թուրքիայում: Շատ էի վախենում, որ դահլիճի փոփոխութեան հետևանքով անմիջապէս ներքին կռիւներ, անիշխանութիւն կը տիրի, բայց բարեբախտաբար առ այժմ ոչինչ չկայ:

Մուշ էի, երբ լուրը հասաւ: Ո՛չ այնտեղ և ո՛չ էլ ճանապարհին մի առանձին բան աչքի չընկավ: Այդ նշան է, որ խառնակութիւններ կարող են առաջ գալ մասնակի գրգռումների շնորհիւ: Բայց, դէհ, այսօր չկայ, խօ վաղը կը լինի: Կասկած չկայ, որ նոր դահլիճը պիտի ամէն կերպ ամրացնի իր դիրքը՝ իր մարդիկը հաստատելով վարչական բոլոր ճիւղերում: Նա հետզհետէ կը զտուի, կը դառնայ իթթիլաֆական, թէև այդ անունը կարող է և չկրել: Իթթիհատականներն էլ իրենց կողմից պիտի պատրաստուեն ինքնապաշտպանութեան: Ցաւն այն է, որ կառավարութիւնը իր դիրքը պահպանելու նպատակով պիտի շոյի երկրի զօրաւորներին և զիջումներ անի նրանց:

Դա է, որ առաւելապէս պիտի նպաստի անիշխանութեան ծաւալմանը հայաբնակ գաւառներում: Քրդերը արդէն իրենց լաւ չեն պահում Վասպուրականում, և կառավ[արութիւնը] կատարելապէս անտարբեր է:

Պատրաստւում եմ Պոլիս երթալ: Այնտեղ մանրամասը կը խօսենք:

Անցած տեղերս ժողովրդի վիճակը համեմատաբար մխիթարական գտայ: Տեղի ունեցաւ Ա շրջանային ժողով և անպաշտօն ռայոնական՝ մասնակցութեամբ Կարնոյ, Վանի, Բաղէշի և Տարօնի ընկերների[1]:

Լաւ տպաւորութիւն թողեց մասնաւորապէս Սասունը:

Գիւղերը տեղաւորուած են կանաչազարդ խոր հովիտներում: Դիրքը շատ բարձր չէ (Շէնիկ 1700 m, Կ[ելիէ] Կիւզան 1600 m, Սեմալ 1750 m): Մեր Զանգեզուրի հետ չի կարելի համեմատել: Կուլտուրան[2], համեմատաբար դաշտի հետ, հարուստ է. ցանում են ցորեն, գարի, կորեկ, ունեն բանջարանոցներ, պտղատու ծառեր, ծխախոտ և այլն… Ժողովուրդը արթուն է. մեծ ձգտում ունի դէպի առաջադիմութիւն:

Կանոնաւոր դպրոցներ չունեն: Շէնիկը եկեղեցի էլ չունի:

Լաւ բոպէներ ունեցանք մեր պտոյտի ժամանակ: Չենք մոռանալ մանաւանդ Կ[ելիէ] Կիւզանում կատարուած հոգեհանգիստը Սերոբի, Հրայրի, Աբրոյի և ընկ[երների] շարեշար գերեզմանների վրայ: Ժողովուրդը նոյնքան բնական էր գտնում մեր «ուխտագնացութիւնը», ինչպէս սովորական ուխտագնացութիւնը Ս[ուրբ] Կարապետ և այլ վանքերը: Սերոբի պատկերը՝ անթառամ ծաղիկներով զարդարուած, կախուած է Կ. Կիւզանի եկեղեցու մէջ: Երևի այդպէս են սրբերի շարքերը դասուել Վարդանը[3] և նման նահատակները:

«Ռոստոմ, Նամականի» Պէյրութ, 1999, էջ 571-572

---

1. Արևելեան նահանգներու Հ.Յ.Դ. գերագոյն մարմինը կը հանդիսանար Արևելեան Բիւրիոյի Թուրքիոյ (Կարնոյ) հատուածը (Ռոստոմ, բժ. Յ. Տէր Դաւիթեան, Ս. Բարսեղեան և ուրիշներ), որ իր կարգին տևական յարաբերութեան մէջ էր Արևմտեան Բիւրոյի (Պոլսոյ) հատուածին կամ Պոլսոյ Պատ. մարմնին հետ:
2. Այստեղ՝ հողամշակութեան իմաստով:
3. Աւարայրի հերոսը:

2024 թ. հունվարի 29-ին լրացավ Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի մահվան 105-րդ տարելիցը

ԴՐՕՇԱԿ